



Է. Ա. Խաչարչյան

ՀԱՅԿԱԿԱՆ ՍԱՐ
ՕԳՏԱԿԱՐ
ՄԵԽԾՈՒԵՐԸ

Այս գրչուցկով սկսվում է Կիտուրյունների ակադեմիայի զիտա-մասսայական սերիայի հրատարակությունը:

Հրատարակության նպատակն է հանրամատչելի բովանդակությամբ մեր հասարակության լայն խավերին ծանորացնել զիտուրյան արդի նվաճումներին, լուսաբանել առանձին զիտական պրոբլեմներ և ծանորացնել մեր ժողովրդին իր հայրենի երկրի բնուրյան, ինչպես նաև նրա անցյալը ու մեր օրերի պատմության և կոլտուրայի հիմ:



107

108

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
НАУЧНО-ПОПУЛЯРНАЯ СЕРИЯ

1

Э. А. ХАЧАТУРЯН

ПОЛЕЗНЫЕ ИСКОПАЕМЫЕ
АРМЯНСКОЙ ССР

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН

1963

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՈԴԵՄԻՈՒ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՈԴԵՄԻՈՒ

1

Է. Ա. ԽԱԶԱՏՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈՒ
ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՒԵՐԸ

A 25464



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՐԱԴԱՐԱՆ 1963

Սուն աշխատանքը նվիրված է Հայկական ԱՍԾ օդակար
Հանածոների նկարագրությանը:

Նյութը շարագրված է երկու հիմնական բաժիններում,
առաջին բաժնում պիտում են մետաղացին, իսկ երկրորդ բաժ-
նում՝ ոչ-մետաղացին օդակար Հանածոները:

Գրքույշի վերջում բերված է սեսպուրլիկայի օդակար
Հանածոների Հանքավայրերի ցանկը բատ տնտեսական և վար-
չա-տերիալիալ շրջանացման:

Գրքույշի նախատեսվում է Հայկական ԱՍԾ երկրաբանա-
կան կառուցվածքավեցին և բնդերի հարսաություններով հետաքրք-
րքրվող բնթերցող լայն մասսաների համար:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սովորական Հայաստանն իրավամբ համարվում է մի բնական երկրաբանական թանգարան, նրա մոտավորապես 30 հազար քառ. կմ տարածության վրա հանդիպում են երկրաբանական համարյա բոլոր դարաշրջանների գոյացումները, ոկտած հնագույն, այսինքն՝ մինչքեմբրյան ժամանակաշրջանի միտամորֆացած թերթաբարերից ու գրանիտներից, վերշացրած նորագույն՝ այսպիս կոչված, չորրորդական ժամանակաշրջանի հրարիսային ապարներով և լճային ու գետային նստվածքներով:

Ահա երկրաբանական տարրեր ժամանակաշրջաններում առաջացած բազմազան ապարներն ու նրանցով կազմված լեռնազանդվածները ստեղծել են Հայկական ՍՍՌ-ի երկրաբանական բարդ կառուցվածքը՝ իր բազմաթիվ հանքային հարստություններով:

Հայաստանի հետաքրքիր ու բարդ երկրաբանական կառուցվածքը գրավել է բազմաթիվ եվրոպացի և ուսու դիտականների ու ճանապարհորդների ուշագրաւթյունը զենուս անցյալ դարի կեսերից, որոնք, այցելելով Հայաստան, զբի են առել նրա երկրաբանության միայն ամենաընդհանուր զծերը: Սովորական Հայաստանի բարդ երկրաբանությունն ամենամանրամասն ու սիստեմատիկ կերպով սկսվեց ուսումնասիրվել միայն սովորական կարգերի հաստատումից հետո:

Այդ սաստիմնասիրավությունները ցայց ավելցին, որ Հայաստանի լեռնային սելլյեֆը, որն արդյունք է երկրադնդի կենսում տեղի ունեցող բարդ երկրաբանական շարժումների, առաջացել է երրորդական ժամանակաշրջանում, մոտավորապես 25—30 միլիոն տարի առաջ, երիտասարդ լեռնակազմական պրոցեսների հետևանքով:

Մինչ այդ, երկրաբանական զարդացման երկարատև պատմության ընթացքում, որի տեսողությունը կազմում է մոտավորապես կես միլիարդ տարի, Հայաստանի տերիտորիան ծածկված է եղել ծովով, որտեղ ապրել են զարգացել են զանազան ծովային կենդանիներ, որոնց բրածո մնացորդները ներկայում հանդիպում ենք ամենատարբեր շերտերում: Այդ միջավայրում նստվածքային ապարների՝ կրաքարերի, կավերի, ավազաքարերի առաջացման հետ մեկտեղ տեղի են ունեցել հրահեղուկ, մագմատիկ զանգվածների ներդրում երկրի կեղեցի տարրեր շերտերում և միաժամանակ հրաքալային լավաների արտավիժում:

Այդ պրոցեսները կրել են պարբերական բնույթ և երբեմն հասել են մեծ ուժության:

ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՈՒԽԵՄԱ

Քարաշը չափանիր	Ժամանակաշը չափանիր	Տեղագույն ժամանակ
		Չորսորդական
Կայուղագուման		Ենթենյան Պատեհանյան
		30—35
	Կավճի	25—30
Մեղողոյան	Յուրաքանչիւր	30—35
	Տրիտոնի	55—60
	Տրիտոնի	25—35
	Տրիտոնի	30—35
Պալեոզոյան		
	Պերմի	25—30
	Կարբոնի	50—55
	Գեոնի	45—50
	Սիլուրի	40—45
	Օրդովիկի	70—80
	Քամբրի	70—90
Ելուչքագուման		
	Պառակացոյի	700
	Արխոլի	1800
	Կամապիկի	

Խորքից երկրի կեղեսմ ներզրված հրահեկուկ զանդվածները տարբեր խորթյաններում սառչելով առաջացրել են բյուրեզային ապարների գրանիտների, զրանազիստինների, սինիտների և այլ կազմի խոշոր զանդվածներ: Առանցման ընթացքում այդ զանդվածներից անջատվել են գագեր, շրաբին գոլորշիններ ու լուծույթներ, որոնք իրենց հետ մակմատիկական ոչախից զուրս են երկել զանազան մետաղներ և միացույթուններ: Վերջիններս մինչեւ երկրի մակերևույթ բարձրանալը սառել են, նոտեցնելով լեռնային ապարների ձեղքերում ու խոսոչներում մետաղների որոշակի միացույթուններ: Այս հանապարհով են առաջացել Հայաստանի մետաղային, օրինակ՝ պղնձի, մոլիբդենի, երկաթի, կապարի, ցինկի, ծարիքի, մկնդեղի, սակու հանրանյութերը:

Հրարիսային գործունեաթյամբ և նրա հետեանբով առաջացած լեռնույթին ապարների բազմապահությամբ Հայաստանը զավում է աշխարհի գասկան հրարիսային շրջանների շարքը:

Անսպուրլիկայի տերիտորիայում հրարիսային առաջացումները՝ բազալտները, անդեղիտները, տուֆերը, սփայխտները զրավում են հսկայական արածություններ և հանախ իրենցից ներկայացնում են հրանուի օգտակար հանածններ, որոնք օգտագործվում են շինարարության մեջ, իսկ վերցին ժամանակներս նաև սրվել հնումք բիմիական արգյունաբերության համար:

Հրարիսային պրոցեսների հետ են կապված նաև սեսպուրլիկայի մի շարք շրջաններում տարածված ջերմուկ. Արզնի, Հանրավանի, Գիլիչան, Մեսն և այլն հանրային ապրյունները և բնույթը չերմային օչախները:

Լավային ծածկցների շրատարուզմաթյամբ են պայմանավորված երեւանի, Արագածի, Սիսիանի, Բատարդեշտի, Կամոյի, Բջնիի խմելու սառնորակ շրերի հիմնալի հատկությունները:

Այսպիսով, Հայաստանի համար հրարիսային պրոցեսների նշանակությունը հսկայական է, նրանց հետ ուղղակի կամ անողղակի կատված են ուսուպուրլիկայի բոլոր հանրային հարստությունները, նրանցով է պայմանավորված երկրի սելլիքը և, վիրշապես, մեր սոցիալիստական քաղաքների ու գյուղերի տեսքը, որոնք կասուցված են հրարիսային ապարներից:

Ընդերքի հարստությունների գերը, Հայկական սեսպուրլիկայի ժողովրդական անտեսության բաւարարացման համար, հսկայական է: Բաղմացան մետաղային օգտակար հանածնները մշակվում և կիրառվում են ծանր բրդանարերության պահանջների համար: Հրարիսային ծաղում ունեցող բարատասակները՝ տուֆերը, ֆելզիտները, բազալտները, բացի շինարարությունից, օգտագործվում են ծովավրդական տնտեսության մի շարք բնագավառներում: Պեմզան, օրինակ, լայնորեն օգտագործվում է ուսինաքիմիական և կաշիքի արդյունաբերության մեջ, ապակի և ձենապակի սառնալու համար: Տարբեր բարատասակներից ստացվում են բարձրորակ մետարսանման թերեր: Ենթելիինային սինիտները հումք կծառայեն ալյումին,

յեմենտ, բյուրեղապակի, Հանքային պարարտանշոթեր ստանալու համար: Այդ նպատակով կառուցվում է Հարպագանի լեռնա-բիմիական հզոր կոմբինատոր:

Ինչպիսի՞ օգտակար հանածոներ են տարածված մեր ուսուցիչների տերիտորիայում:

Մետաղային օգտակար հանածոներից հայտնի են պղնձի, մոլիբդենի, ալյումինի հումքի, սոկու, երկաթի, կապարի, ցինկի, մանգանի, բրոմի, ծարիրի, մկնղեզի, սնղիկի հանքավայրեր և երեսկաւումներ ու նրանց հետ կապված ցրված տարրեր՝ սելենի, թելուրի, սենիտմի, գալիումի, ինդիումի, կազմիսմի որոշ խառնուրդ:

Ոչ-մետաղային օգտակար հանածոներից Հայաստանում տարածված են բարպի, բարիտի, ծծմբարի և կոլցեզանի, անգեղիտառ-բաղալտների, տառքերի, հրաժայուն ատարների, դիատոմիտի, մարմարի, օրսիդիանի, պիմզայի, պերլետի, բնատոնիտացին կավերի և այլ հանքավայրեր:

Այսպիսով, Հայաստանի լիսները հարստա են բազմազան օգտակար հանածոներով, սրոնցից մեծագ ստանալու համար շատ կարևոր նշանակություն ունեն պղնձի, մոլիբդենի, ալյումինի հումքի, սոկու և երկաթի հանքանյութերը:

Հետաքրքրական է նշել, որ Հայաստանի տերիտորիայում օգտակար հանածոների հանքավայրերը տեղաբաշխված են միանդամայն օրինաչափ կերպով, հանքային երեք զնտիների սահմաններում, զրանք են՝

1. Ալավերդի-Դամականի կոլցեզանային գոտին, զիխավորապես պղնձային հանքանյութերով,

2. Փամբակ-Զանգեզուրի գոտին, որի համար բնորոշ են պղնձնձ-մոլիբդենային հանքանյութերը,

3. Սևան-Մամայի գոտին, որի սահմաններում տարածված են բրոմիտի և սոկու հանքանյութերը:

Գլ. Երկրաբանության ինստիտուտի կողմից նշված հանքային գոտիների անջատումն իրենց երկրաբանական կառուցվածքի և հանքարկության առանձնահատկություններով ունեցավ կարեւոր տեսական և զործնական նշանակություն. այն թույլ տվից պարզաբնակ առանձին շրջանների հանքարկության բարդ հարցերը և օճանդակեց երկրաբաններին նպատակաւուց կերպով ուղղել որոնսղակոն աշխատանքները ու հայտնաբերել մի շարք նոր օգտակար հանածոներ և հանքավայրեր: Երկրաբանական կանխագուշակումներն արգարացան և սպասվելիք շրջաններում հայտնաբերվեցին մետաղային օգտակար հանածոների նոր կուտակումներ:

Մինչև բուն նյութի անցնելը նշենք մի շաբթ անհրաժեշտ հասկացող թյուններ:

Օգտակար հանածոյնի հանմալայը են անվանում երկրի կելլում բնական պրոցեսների հետահանքով առաջացած հանքային նյութի այնպիսի կուտակումը, որը պիտանի է ժաղավրդական տնտեսության մեջ օգտագործելու համար:

8

Հանհանդարն իրենից ներկայացնում է միներալներից՝ բնական միացություններից բազկացած այնպիսի զանգված, որոնց բանակալիքանները բավականաշափ են շահագիտ կորպումն համար: Ազգպիսին են, օրինակ՝ պղնձի, երկաթի, կապարի, սուկու և այլ հանքանյութերի:

Հանքավայրի արդյունաբերական նշանակությունը որոշված է ոչ միայն օգտակար հանածոյնի պարտնակությամբ, այլև տնտեսական մի շարք այլ գործոններով՝ հանքավայրի աշխարհագրական զիրքով, օգտակար հանածոյնի պաշարներով, մշակման պայմաններով, հանքանյութերի հարստացման հանքավայրությամբ ու եղանակներով և այլն: Անհրաժեշտ է նշել, որ թված պայմանների մի մասի կայտնության գեղագում մյուսների ազգեցությունը փոփոխվում է ժամանակի ընթացքում և անմիջականորեն կապված է տեխնիկայի զարգացման, ավելա օգտակար հանածոյնի պահանջի աճի և երկրի ընդհանուր զարգացման հետ: Այդ կապակցությամբ ասպարեզ են զանքանյութերի և հանքավայրերի տեսակներ, որոնք նախկինում, տեխնիկայի զարգացման ավելի ցածր մակարդակի պայմաններում, որեւ արդյունաբերական արժեք չեն ներկայացրել:

Հանքահայր է օգտակար հանածուների հսկայական նշանակությունը յուրաքանչյուր երկրի էկոնոմիկայում: Էեռնային արդյունաբերակալիքունն իրավացիորեն համարվում է արդյունաբերական որևէ ձևովի հիմքը: Էեռնային արդյունաբերության զարգացման աստիճանը հանդիսանում է յուրաքանչյուր երկրի նյութական մշակույթի, նրա հզորության և տնտեսական զարգացման շափանիշը:

Օգտակար հանածուները ստորաբաժնվում են չորս հիմնական խմբի՝

1. Մեխալյային օգտակար հանածուներ, որոնց վերամշակումից ստացվում է մեխալ,

2. Ոչ-մեխալյային օգտակար հանածուներ, որոնք ստորաբաժնվում են բատ օգտագործման ընտակալաների,

3. Կառասարիխիտներ կամ այրվող օգտակար հանածուներ՝ ալյուր, թիթարաբարեր և նավի,

4. Ջրային ռեսուրսներ*:

Անցներ Սովորական Հայաստանի առանձին օգտակար հանածուների և նրանց հանքավայրերի համաստակի նկարագրությանը: Բատ ընդունված արդյունաբերական դասակարգման սեսօպուրիկայի մեխալային օգտակար հանածուները ստորաբաժնվում են, ուն, հազվագյուտ, զունավոր, աղոնիվ և ցրված մեխալների, իսկ ոչ-մեխալայինները՝ բատ նրանց օգտագործման հիմնական ընտակալաների:

* Ջրային ռեսուրսներին նվիրված է ն. ի. Գոլուխանովայի «Հայկական ԱՍԻ կուրորտային հարստությունները» աշխատանքը:

I. ՄԵՏԱՂԱՅԻՆ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՒՆԵՐ

I. ԱԵՎ ՄԵՏԱՂԱՅԵՐ

Ե Ր Կ Ա Թ

Երկաթը գասլում է սև մետաղների խմբին և իր տարածմամբ թթվածնից, սիլիցիումից ու ալյումինից հետո երկրի կեղեռում գրավում է շորբորդ տեղը. նրա միջին պարունակությունը կազմում է 4,2%:

Երկաթը տարածված տարր է, մտնում է բոլոր լեռնային ապարների բաղադրության մեջ, իսկ օրգանական աշխարհում հանդիսանում է կենդանիների հեմոգլոբինի և բույսերի քլորոֆիլի կարեռը բաղադրամասը:

Բնության մեջ հայտնի են երկաթով հարուստ հարյուրավոր միներալներ, այդ թվում լայն տարածված ապար կազմով միներալներ, սակայն մետաղի ձուլման կարեռը ազբյուր են հանդիսանում միայն մի քանիսը՝ մագնետիտը, հեմատիտը, երկաթի հիդրօքսիդները, սիլիկատները, երկաթային քլորիտները, իլմենիտը և այլն:

Բնածին ձևով երկաթը հանդիպում է հազվադեպ:

Հանրահայտ է, որ երկաթի հանքանյութերը քարածխի հետ միասին հանդիսանում են սև մետալուրգիայի և նրա հետ կապված արդյունաբերության ու տեխնիկայի ամենատարբեր հյուղերի զարգացման հիմնական բազան:

Երկաթի հանքանյութից ձուլում են շուգուն, պողպատ և

Երկաթի: Չույլ մետաղի այս երեք տեսակները տարբերվում են ածխածնի պարունակությամբ, հետևապես և իրենց ֆիզիկական ու քիմիական հատկություններով: Չույլում պարունակում է 4—2,5%, պողպատը՝ 1,5—0,2% և երկաթը՝ 0,2—0,04% ածխածին:

Երկաթի հանքանյութից գոմնային վառարաններում նախ ձուլվում է չույլուն, ապա չույլունը մարտենյան վառարաններում կամ բեսեմերյան կոնվերտորներում վերածուելով ստանում են պողպատ և երկաթի: Ներկայումս մշակված են ձուլման այնպիսի եղանակներ, որոնք թույլ են տալիս տառաց չույլուն ձուլելու, հանքանյութից անմիջականորեն պողպատ և երկաթ ստանալ:

Որակյալ և լեզվիրված (մետաղախառնուրդային) պողպատներ ստանալու համար սովորական պողպատին խառնում են որոշ տոկոս մանգան, բրոմ, վանադիում, նիկել, կոբալտ, վոլֆրամ, մոլիբդեն, որոնք պողպատին հաղորդում են մածուցիկություն և ամրություն:

Մետալուրգիական արդյունաբերությունը օգտագործում է երկաթի այնպիսի հանքանյութեր, որոնց մեջ երկաթի նվազագույն պարունակությունը կազմում է 25—30%:

Երկաթի հանքանյութերում սովորաբար տոկա են զանազան մետաղների և տարրերի խառնուրդներ: Այդ խառնուրդներից արժեքավոր են համարվում մանգանը, նիկելը, կոբալտը, վանադիումը, որոշ քանակությամբ պղինձը, ախտանը, բրոմը, իսկ վնասակար խառնուրդների շարքին են զատկում ֆոսֆորը, ծծումբը և մկնդեղը:

Երկաթի արդյունաբերական հանքանյութերի հաշվառված համաշխարհային պաշարները կազմում են 60—70 միլիարդ տոննա, և այդ պաշարների զգալի մասը տեղաբաշխված է ՍՍՌ-ում, Հնդկաստանում, Շվեդիայում, Բրազիլիայում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Չինաստանում, Կուբայում: Միենավոր ժամանակի կապիտալիստական մի շարք երկրներ՝ ԳՖՌ-ն, Շվեյցարիան, Իտալիան, մասամբ Անգլիան, զուրկ են երկաթաբարի սեփական ուսուրանիրից և նրանց մետալուրգիան հիմնվում է ներմուծած հանքանյութերի վրա:

Սովետական Միությունն ունի երկաթի բարձրորակ հաճաքանյութերի հսկայական պաշարներ, որոնք ապահովում են հայրենական սև մետալուրգիայի արագ ու անշեղ զարգացման աճը:

Աշխարհում տարեկան արդյունահանվում է մոտավորապես 500 միլիոն տոննա երկաթի հանքանյութ, գլխավորապես ՍՍՌՄ-ում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, ինչպես նաև Կուրայում, Շվեդիայում, Հնդկաստանում և մի շաբթ ուրիշ երկրներում:

Սովետական Միությունում կապիտալիստական երկրների համեմատությամբ պողպատի ծովումը արագորեն աճում է. այդ մասին են վկայում Հետեւյալ թվերը՝ 1940 թ. ծովվել է 18,3, 1950 թ.՝ 27,3 միլիոն տոննա պողպատ, իսկ 1961 թ. այդ թիվը կազմել է 70,7 միլիոն տոննա:

Պողպատի ծուլումը ՍՍՌՄ-ում և գլխավոր կապիտալիստական երկրներում (միլիոն տոննաներով).

	1960 թ.	1961 թ.
ԱՄՆ	90,1	88,9
ՍՍՌՄ	65,3	70,7
ԳՖՌ	34,1	33,5
Հայպոնիա	22,1	28,5
Անգլիա	24,7	22,2
Ֆրանսիա	17,3	17,6
Իտալիա	8,2	9,1

* * *

Երկաթը հայտնի է եղել մարդկությանը պատմական հիուավոր անցյալում, առաջին անգամ հիշատակվել է եղիական արձանադրություններում, մոտավորապես 4000 տարի մ. թ. առաջ: Այդ պատմական տվյալները հաստատում են, որ երկաթն այն ժամանակ հանդիսացել է հազվագյուտ մետաղ և գնահատվել է շատ բարձր: Սակայն պատմական այդ ժա-

մանակաշրջանում երկաթահանքի ձուլման եղանակները դեռևս հայտնի չեն եղել և, հավանաբար, նկատի են ունեցել երկարաբարյին (մետեորալին) երկաթը:

Հանքանյութից երկաթ ձուլելու եղանակը հայտնաբերվել է ավելի ուշ, մոտավորապես 2000 տարի մ.թ. առաջ, երբ երկաթի մետալուրգիան սկսվեց տարածվել Հին Արևելքի երկրուներում՝ Եղիպատոսում և Միջագետքում: Փոքր-ինչ ավելի ուշ երկաթի ձուլման եղանակը հայտնի է զատնում Հունաստանում, Փոքր Ասիայում և Անդրկովկասում:

Սովետական Միության տերիտորիայում երկաթից պատրաստված հնագույն իրեր գտնվել են Արաքս գետի ափին գտնվող Կարմիր Վանքի շրբմամբերում, որոնք վերագրվում են մինչ մ.թ. առաջին հայարամյակին: Հետագայում երկաթի ձուլման եղանակը արագ տարածվում է Անդրկովկասում և Միջին Ասիայում բնակվող տարբեր ցեղերի մեջ, իսկ մինչ մ.թ. VIII—VI դարերը այն արդեն հայտնի է լինում ներկայիս Սովետական Միության տերիտորիայում բնակվող բոլոր ժողովուրդներին:

Որոշ ավագների համաձայն այդ նույն ժամանակաշրջանում մարդիկ գտել են նաև պողպատ ձուկելու եղանակը, սակայն նրա լայն կիրառումն աշխատանքի գործիքների և զենքի արտադրության մեջ սկսվում է մեր դարաշրջանի սկզբներին:

Երկաթի մետալուրգիայի հետագա զարգացման համար նշանավոր տարեթիվ հանդիսացավ XIV դարը, երբ սկսեցին գործել առաջին, գեռես շափականց պրիմիտիվ, զամնային վառարանները:

Ռուսաստանում առաջին մետալուրգիական գործարանները հիմնվել են XVII դարի վերջերին և առաջնապես XVIIE դարի սկզբներին, Պետրոս I օրոք, որտեղ ձուկում են կարելյան, որբալյան և Տուլայի երկաթի հանքանյութերը և ամբողջ XVIII դարի բնթացքում Ռուսաստանը չուզունի ու պողպատի ձուկումով աշխարհում գրավում է առաջին տեղը:

Փայտածիսի փոխարեն XVIII դարում երկաթահանքը

սկսում են ձուլել քարածխով, և այդպիսով երկաթի մետալուրգիան ստանում է զարգացման մի նոր ճշգրիտ թափ:

Չուզունից պողպատ և երկաթ վերաձուլելու համար 1856 թ. կառուցվեցին առաջին բեսեմերյան կոնվերտորները, որոնք իրենցից ներկայացնում են պտտվող թորանոթանման վառարաններ:

Հայկական ՍՍՌ տարրեր շրջաններում երկաթի հանքանյութերի որոնման ուղղությամբ վերցին տարիներին կատարած երկրաբանական հետազոտությունների տվյալները վկայում են այն մասին, որ խոր անցյալում մեր նախնիները լայնորեն օգտագործել են երկաթի հարուստ հանքանյութերը և պրիմիտիվ վառարան-ձուլարաններում, հենց տեղում, փայտածխով ձուլել են երկաթ և նույնիսկ ստացել են պողպատ:

Հայկական ՍՍՌ Նոյեմբերյանի, Հրազդանի, Ալավերդու, Եղեանի, Մեղրու շրջաններում կարելի է հանդիպել հին հանքանորերի, լեռնային փորվածքների և հաճախ այդ նույն հանքատեղերից ոչ հեռու տարածված երկաթաքարի ձուլման խարամների մնացորդների:

Նոյեմբերյանի շրջկենտրոնից 30 կմ հարավ-արևմուտք, Շլորկուտ տեղամասում 1947 թ. կատարված երկրաբանական աշխատանքների ժամանակ գտնվել են ձուլման վառարանի հետքեր, խարամներ և երկաթից պատրաստված զանազան դործիքների մնացորդներ:

Ներկայումս պարզված է, որ Հայաստանը, բացի պղնձիրմուիրդնի, ալյումինի, ոսկու հանքանյութերից, ունի նաև երկաթի հեռանկարային հանքավայրեր, որոնցից առավել հետաքրքրական են Հրազդանի, Սվարանցի, Հաղարծնի, Կողբի, Կապուտանի, Կամաքարի հանքավայրերը: Ռեսպուբլիկայում երկաթահանքի երեակումների թիվը կազմում է 50-ից ավելի, որոնց մի մասի արդյունաբերական նշանակությունը պարզվում է, իսկ մյուս մասը գեռես լրիվ ուսումնասիրված չէ:

Երկաթի հանքավայրերի և երեակումների ճնշող միծամասնությունը հայտնի է եղել գեռ անցյալից, սակայն դրա հետ մեկտեղ երկրաբանների շանքերով հայտնաբերվել են նաև

Նոր երևակումներ, որոնց թվում՝ Սվարանցի հեռանկարային հանքալայրը:

Հայկական ՍՍՌ երկաթի հանքավայրերը և երևակումները, բատ իրենց առաջացման պայմանների և տեղաբաշխման օրինաշափությունների, խմբավորվում են հետեւալ ձևով՝

1. Կողքի խորբային բյուրեղային ապարների գանգվածի հետ կապված երկաթի հանքավայրեր, որոնցից անհրաժեշտ է հիշատակել Կողքը, Միսխանան, Բովերիդաշը, Քարծախը, Շնողը, Ելորկուտը, 2. Մարցիգետի ավազանում եղած հանքավայրեր՝ Առթ, Ժանգարլու, Մարի-Բուլազ, 3. Մարմարիկի տեկոնական գոնայում գտնվող հանքավայրեր՝ Հրազդան, Աղավնաձոր, Մեղրաձոր, Հանքավան, Մոլաղշլաղ, Դիբախուտ, Հալավար, Ղարա-շորանի և այլն, 4. Հաղարծնի հանքավայր, 5. Կապուտանի հանքավայր, 6. Կամաքարի հանքավայր և 7. Սվարանցի հանքավայր:

Կողքի կամ Ծակերիդոշի մագնետիտ-հեմատիտային հանքանյութերի հանքավայրը գտնվում է Նոյեմբերյանի շրջանի Կողք գյուղից 3 կմ. դեպի հյուսիս-արևմուտք, Այրում կայրան տանող ճանապարհի վրա:

Հանքավայրը հայտնի է եղել հնուց և պրիմիտիվ ձևով մշակվել է, այդ տեղամասում պահպանվել են հին փոսեր կամ, ինչպես անվանում են տեղացիները, «ծակեր» և այդ իսկ պատճառով հանքավայրը կրում է «Ծակերի դոշ» անունը:

ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Երկրաբանության ինստիտուտի արշավախմբի 1944—1947 թթ. կատարած երկրաբանական և գեոֆիզիկական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Կողքի, ինչպես նաև այդ շրջանում գտնվող մյուս հանքահրեակումներն ունեն որոշ արդյունաբերական հեռանկարներ: Այս հարցը վերջնականապես պարզելու նպատակով Երկրաբանական վարչությունը 1951 թ. ձեռնամուխ եղավ Կողքի հանքավայրում որոնողական-հետախուզական աշխատանքներ կատարելուն:

Լեռնային փորվածքների միջոցով պարզվեցին հանքային առաջնային տարածման սահմանները, հանքամարմինների ձեհերը

և երկաթահանքի երկրաբանական պաշտպանությունը: Անհրաժեշտ
է հետախուզել հանքավայրի խոր հորիզոնները:

Կողքի հանքանյութերը հեմատիտ-մագնետիտային են և
շրջանի մյուս հանքավայրերի հետ միասին ունեն արդյունա-
րեղական հեռանկարներ:

Կողքի բյուրեղային ապարների գունդվածին հարսդ մյուս
հանքավայրերն են՝ Միսխանան, որը գտնվում է Ջուղևան
գյուղից 3 կմ դեպի արևմուտք, Քարծախը՝ Թեղուտ գյուղից
5—6 կմ դեպի հարավ, Քարծախ լեռան հյուսիսային լանջում,
Բովերիդաշը՝ Կողք գյուղից 3,5 կմ դեպի արևմուտք, Հարավ-
արևմուտք, Բովեր լեռան հյուսիսային լանջում: Նշված հանքա-
վայրերում պահպանվել են անցյալում կատարված լեռնային
փորձագրների հետքեր, երկաթի հանքանյութի ձուլման խա-
րամների մնացորդներ: Բովերիդաշ հանքավայրում, օրինակ,
պահպանվել է 1913—1914 թթ. լեռնագործ Գրինյովի դեկա-
վարությամբ փորձած հանքուղին և ներկայումս այն մատչելի
է դիտման համար:

Նշված հանքավայրերում հանքանյութերի որակը բարձր
է, հիմնականում նրանք կազմված են հեմատիտից և մագնե-
տիտից. վնասակար խառնուրդների տոկոսային պարունակու-
թյունը շատ շնչին է:

Հաշվի առնելով թված փաստերը, ինչպես նաև հանքա-
վայրերի տեղադրման բարենպաստ տնտեսական պայման-
ները, անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել տվյալ
շրջանի հանքարերությանը և առաջին հերթին մանրամասն
կերպով ուսումնասիրել երկաթի հանքավայրերը, կատարելով
երկրաբանական որոնողական, հետախուզական և գեոֆիզի-
կական աշխատանքներ:

Մարցիգետի ավագանի Երկարի հաճքավայրերը գտնվում
են հիմնականում նույն գիտի վերին հոսանքում, Սոթը՝ Լորուս
գյուղից 6 կմ դեպի հարավ-արևելք, Սարի-Բուլաղը՝ Լորուս
գյուղից 10 կմ դեպի հարավ-արևելք, Ժանգարլուն՝ նույն
գյուղից 8 կմ դեպի հարավ-արևելք և Աջնիձորի երեակումը՝
4,5 կմ նույնանուն գյուղից դեպի հարավ:



Այս շրջանի տեղաբնակներին լավ հայտնի են թված հանգամացները և առանձնապիս Մաղաղիմատ Հին հանքահորը, որտեղ շատ վաղուց մշակել են երկաթի հարուստ հանքանյութեր և նրանցից ձուլել երկաթ: Հին հանքահորերի հետքեր և հանքաքարի ձուլման խարամներ կարելի է հանդիպել նաև մյուս հանքավայրերի տեղամասերում: Միայն Ահնիձորի երկակումը հայտնաբերված է վերջերս, 1949 թ. երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու ժամանակ:

Հանքանյութերը բարձրորակ են, ներկայացված հեմատիտով, սակայն, ինչպես ցույց են տվել երկրաբանական նախնական հետազոտությունները, հանքավայրերի պոտենցիալ հնարավորությունները սահմանափակ են: Այնուամենայնիվ շրջանը որոշ հետաքրքրություն է ներկայացնում այլ հանքանյութերի, օրինակ՝ բաղմանետաղների որոնման տեսակետից:

Մարմարիկի տեկտոնական զոնայում տեղադրված երկաթի հանքավայրերից առավել հետաքրքրություն է ներկայացնում այլ հանքանյութերի, օրինակ՝ շրագանը կամ Սուզաղանը:

Հրազդանի երկարի հանքավայրի մասին առաջին գրավոր տեղեկություններ բերվում են 1910—1911 թթ. Կովկասի օգտակար հանածոնների մասին հրատարակած աշխատություններում: Այդ տեղեկությունները վերաբերվում են Սուզաղան բլուրի շրջակայրում գտնվող երկաթի հանքանյութերի և հիշյանացին փորվածքների առկայությանը: Հետագայում, պարբերաբար, հանքավայրն այցելել են մի շարք հետազոտողներ, սակայն երկրաբանական և մաղնիսոմետրական առաջին աշխատանքներն այստեղ կատարվել են միայն 1948—1949 թթ. ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի երկրաբանության ինստիտուտի արշավախմբի կողմից: Կատարած ուսումնասիրությունների հիման վրա կազմվել են հանքավայրի երկրաբանական ու մաղնիսոմետրական քարտեզները և պարզվել է շրագանի հանքավայրի հեռանկարների հարցը:

Նախնական հետախուզական աշխատանքներն այստեղ սկսվեցին 1950 թ. և շարունակվեցին մինչև 1952 թ.: Սակայն

որոշ ընդմիջումից հետո այդ աշխատանքներն ավելի լայն թափով վերսկսվեցին 1958 թ. և շարունակվում են մինչև այժմ:

Հրազդանի երկաթի հանքավայրն ունի բարենպաստ անտեսական պայմաններ, տեղադրված է նորաստեղծ լեռնահանքային և արդյունաբերական շրջանում, Հրազդան քաղաքից ընդամենը 1 կմ հեռավորության վրա, երևանից Սևան սանող խճուղու մոտ:

Մանրամասն հետախուզական աշխատանքներով պարզված է, որ հանքավայրը բաղկացած է հզոր հանքամարմիններից, որոնք ներկայացված են մագնիտիտային հարուստ հանքանյութերով: Սակայն հանքավայրի առանձին տեղամասերում տարածված են նաև համեմատաբար ավելի աղքատ, 20—22% երկաթի պարունակություն ունեցող հանքանյութեր, որոնց հարստացման տեխնոլոգիան, հետեւապես հարստանյութ (կոնցենտրատ) ստանալու հղանակները արդեն մշակված են:

Հանքանյութերի զգալի պաշարները թույլ են տալիս Հրազդանի հանքավայրը դիտել որպես արդյունաբերական օբյեկտ և մոտ ապագայում այն հանձնել շահագործման: Սյոպիսով, երկաթի հանքանյութերի բազայի վրա ռեսպորտիկայում կստեղծվի արդյունաբերության մի նոր ճյուղ, այն է՝ որակյալ պողպատների արտադրություն:

Որակյալ պողպատները առաջին հերթին անհրաժեշտ են ռեսպորտիկայի բուռն զարգացող էլեկտրատեխնիկական արդյունաբերության համար:

Մարմարիկ գետի հովտում և Դիրախիլուի լեռնանցքից հյուսիս, Կիրովականի շրջանում, տեղադրված են իրենց առաջացման երկրաբանական պայմաններով Հրազդանի երկաթի հանքավայրին շատ նման Դերախիլուի, Մոլլազշլաղի, Հալավարի, Ղարա-շորանի երկաթի հանքավայրերը և երևակումները, որոնք դիտես մանրամասն ուսումնասիրված չեն: Այդ հանքաերևակումների տեղադրությունը երկրաբանական ինտերտուտի և երկրաբանական վարշության արշավախմբերը կատարել են միայն նախնական երկրաբանական որոնողական և գեոֆիզիկական աշխատանքներ:

Այդ աշխատանքների արդյունքները խոսում են այս շրջանում երկաթի հանքանյութերի բազմակողմանի ուսումնասիրության անհրաժեշտության մասին:

Հաղարծնի հանքավայրի մասին առաջին տեղեկությունները վերաբերում են 1907 թ.: Հանքավայրը հիշատակվում է նախկին Դաղախի գավառի երկրաբանական կառուցվածքի և օգտակար հանածոնների նկարագրության կապակցությամբ:

Քառասուն տարի անց, 1947 թ., հանքավայրը ուսումնասիրել սկսեց երկրաբանական ինստիտուտի արշավախումբը: Երկրաբանական և գեոֆիզիկական աշխատանքները թույլ տվեցին հիմնավորել Հաղարծնի՝ որպես հեռանկարային հանքավայրի, հետագա ուսումնասիրության անհրաժեշտությունը:

1953—1954 թթ. կատարած որոնողական և հետախոսութական աշխատանքները պարզեցին հանքայնացման տարածման սահմանները, բաշխման օրինաշափությունների, հանքանյութերի որակի և պաշարների հարցերը:

Հաղարծնի հանքավայրը գտնվում է Իջևանի շրջանում, Աղստեղ գետի ձախ վտակ՝ Հաղարծին գետի ստորին հոսանքում, անտառապատ գեղատեսիկ վայրում: Հանքավայրից 2—2,5 կմ դեպի հյուսիս գտնվում է Հաղարծնի պատմական վանքը:

Հաղարծնի հանքավայրն իր ծագմամբ տարբերվում է Հայաստանի երկաթի մնացած հանքավայրերից: Այն պատկանում է նստվածքային տիպին, այլ կերպ ասած, հանքանյութերն առաջացել են մոտ 50 միլիոն տարի առաջ այսուեղ գոյսություն՝ ունեցած ծովի մերձափնյա մասում՝ սկզբում մազնետիտային տվաղների ձևով, ասլա՝ երկրաբանական պրոցեսների հետևանքով՝ նրանք վերածվել են մազնետիտային ավագագարերի:

Երկրաբանական ուսումնությունն ապացուցում է, որ երրորդական ժամանակաշրջանում շրջանը ծածկված է եղել ծովով, որի մերձափնյա մասերում կուտակվել են շրջապատի ապարների քայլայման հետևանքով՝ անջատված հանքային միներալներ՝ մազնետիտն ու իլմենիտը: Երկաթի միներալ-

ներով հարստացած այս մերձափնյա ավազները երկրաբանական բարդ պրոցեսների հետևանքով դարձել են ավազաքարեր և ներկայում իրենցից ներկայացնում են երկաթի բարձրորակ հանքանյութեր:

Մագնետիտային ավազաքարերը հանդես են գալիս շերտերի ձևով, որոնց կարողությունը կազմում է մի քանի մետր: Երկաթի պարունակությունն այդ շերտերում բավական զգալի է և երբեմն կազմում է մինչև 50%, բացի այդ, հանքանյութերի համար բնորոշ է տիտանի և վանագիումի առկայությունը, որոնք բնականաբար հանքանյութերը դարձնում են լեգիրված:

Մագնետիտային ավազաքարերի մշակումն իրենից առանձին դժվարություն չի ներկայացնում, քանի որ նրանք հեշտությամբ հարստացվում են մագնիսային անշատման եղանակով: Այսպիսով, ստացվում է մագնետիտային հարստանյութ՝ տիտանի և վանագիումի պարունակությամբ: Արդյունաբերության համար բնական լեգիրված հանքանյութերը և հարստանյութերը անհամեմատ արժեքավոր են և բարձր են գնահատվում:

Էոցինյան ավազաքարերն իշխանի շրջանում ունեն բավականին լայն տարածում և նրանց հանքաբերության ուսումնասիրման հարցը պետք է հանդիսանա երկրաբանների կարեվոր խնդիրներից մեկը:

Արօվյան շրջանի Կապուտան գյուղի շրջակայքում երկաթի հոծ և հարուստ հանքանյութերի բեկորների առկայության մասին վաղուց հայտնի էր, սակայն հանքամարմնի բուհ ելքերը հայտնաբերվել են միայն 1947 թ. ԳԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի արշավախմբի կողմից: Կապուտան գյուղի շրջանում տեղանքի հանութ կատարելու ժամանակ տուսկողաֆների ուշադրությունը գրավում է մագնիսային սլաքի զգալի շեղումները: Այդ երկույթը ճիշտ մեկնաբանելու համար 1947 թ. այստեղ կատարվեցին մագնիսումետրական ուսումնասիրություններ, որոնք թույլ տվեցին սահմանել մի քանի խոշոր մագնիսային շեղումներ, կապված մագնետի-

տային հանքայնացման հետ (մագնետիտ միներալն ունի մագնիսական հատկություն և հաճախ կոչվում է մագնիսային երկաթաքար):

1947 թ. կատարած երկրաբանական և գեոֆիզիկական հետազոտությունների հիման վրա ԳԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտն առաջ քաշեց Կապուտանի հետախուզաման հարցը և նշեց հետագա աշխատանքների ծրագիրը:

Հանքանյութերն այսուեղ ներկայացված են հոծ մագնետիտով և ապատիտի ներփակումներով: Երկաթի պարունակությունը հանքանյութերում բարձր է և հասնում է մինչև 60—70 %, իսկ ֆոսֆորինը՝ մինչև 15 %. Ֆոսֆորը մտնում է ապատիտ միներալի բաղադրության մեջ:

Երկրաբանության և լնդերքի պահպանման վարչությունը ներկայումս ձեռնարկել է Կապուտանի երկաթի հանքավայրի մանրամասն ուսումնասիրությունը: Առաջին իսկ հորատանցքերը, որոնք փորվեցին սահմանված մագնիսական շեղումների շրջանակներում, տվյալների գրական տվյալներ: Հորատանցքերի միջոցով խորքերում հայտնաբերվեցին մագնետիտի հոծ հանքանյութերից կազմված հանքամարմիններ և հանքայնացված զոնաներ: Այսպիսով, մոտ ապագայում կպարզվեն Կապուտանի հանքավայրի արդյունաբերական հեռանկարները:

Անհրաժեշտ է նշել, որ տվյալ հանքավայրն ունի տնտեսական բարենպաստ պայմաններ, այն գտնվում է Երևան և Հրազդան քաղաքների միջև, Սևան տանող երկաթգծին շատ մոտ և հանքաքարի զգալի պաշարների դեպքում հանքավայրը կարող է շահավետ կերպով մշակվել ոչ միայն երկաթի, այլև ֆոսֆորի հումք ստանալու համար:

Սվարանցի հանքավայրը գտնվում է Գորիսի շրջանում, Արամազդ լեռան հյուսիսային լանջին և հայտնաբերել է Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր երկրաբանության և ընդերքի պահպանման վարչության արշավախումբը 1956 թ.:

Հանքանյութերի բաղադրությամբ Սվարանցը տարբերվում է Հայաստանի երկաթի մյուս հանքավայրերից. բացի երկա-

թից, հանքանյութը իր մեջ պարունակում է տիտանի որոշ տոկոս, որը զգալիորեն բարձրացնում է հանքաքարի արժեքը:

Սվարանցի հանքավայրը ներկայում հետախուզվում է և բայ նախնական տվյալների այն ունի որոշ հեռանկարներ: Հանքամարմինները խոշոր են, տարածվում են մի քանի հարյուր մետրից մինչև 2—2,5 կմ, բնական մերկացումների համաձայն հանքայնացման տարածման խորությունը կազմում է մոտավորապես 600 մետր:

Սվարանցի հանքանյութերում երկաթի պարունակությունը այնքան էլ բարձր չէ, սակայն, ինչպես ցուց են տվյալ հարստացման փորձերը, այդ հանքանյութերից ստացվում է տիտան պարունակող երկաթի հարստանյութ, որը կարեռ և արժեքավոր հումք է սև մետալուրգիայի համար:

Անհրաժեշտ է հիշատակել, որ երկրաբանական առաջացման պայմաններով և հանքանյութերի բաղադրությամբ նման հանքավայրեր հայտնի են Ուրալում, օրինակ՝ Կուսինսկոյե, Կաչկանար և ուրիշ հանքավայրեր, որոնք ունեն տիտանոմագնետիտային հանքանյութերի հոկայական պաշարներ և կարեռ դեր են կատարում սև մետալուրգիայի պահանջները բարձրութակ հումքով ապահովելու դորձում:

Բացի Սվարանցից, նման տիտանոմագնետիտային հանքանյութեր հայտնի են նաև Կամաքար հանքավայրում, որը գտնվում է Մեղրու շրջանում, Կարավագետի վերին հոսանքում: Հանքավայրի շրջանը կազմված է նույն խորքային ծագումն ունեցող լեռնային տպարներից, որոնք պարունակում են մագնետիտի և տիտանոմագնետիտի կուտակումներ, երակիեներ և ցաներ: Կամաքարի երկաթի հանքավայրը դեռևս մանրամասն ուսումնասիրված չէ:

Սյսպիսով, երկրաբանների և գեոֆիզիկոսների վերջին տարիները կատարած նպատակասլաց ուսումնասիրությունների ջնորդիվ ապացուցված պետք է համարել, որ Հայկական ՍՍՌ-ն բացի այլ մետաղային օգտակար հանածոներից, հարուստ է նաև երկաթի հանքանյութերով:

Մանգանը դասվում է սև մետաղների խմբին և մի շարք հատկություններով մոտ է երկաթին:

Մանգանը բնական պայմաններում բնածին ձևով չի հանդիպում, նա սովորաբար առաջացնում է օքսիդներ, կարբոնատներ, սիլիկատներ և այլ միացություններ:

Հայտնի են մանգան պարունակող 150-ից ավելի միներալներ, սակայն արդյունաբերական նշանակություն ունեն միայն մի քանիսը, օրինակ՝ պիրոլյուզիտը, մանգանիտը, պսիլոմելանը, բրաունիտը, հառումանիտը, ոռղոխրոզիտը և ուրիշներ:

Մանգանի հանքանյութերը մարդկությանը հայտնի են եղել շատ վաղուց. բազմաթիվ երկրներում հանդիպում են մանգանի և երկաթ-մանգանի հանքանյութերի հնագույն մշակումների հետքեզ: XVIII դարի վերջերին մանգանը օգտագործում են ներկերի արտադրության և քիմիական արդյունաբերության մեջ, սակայն XIX դարի վերջերին մանգանի հանքանյութերը կարևոր նշանակություն են ձեռք բերում և մետալուրգիայի համար, և նրանց արդյունահանումն տեմպերն արագորեն աճում են: Հանքանյութերը մեծ քանակությամբ արդյունահանվում են Ռուսաստանում՝ Ճիաթուրայի և Նիկոպոլի հանքավայրերում, ապա արտասահմանում՝ Հնդկաստանում և Բրազիլիայում:

Մանգանի խառնուրդը պողպատին հաղորդում է մածուցիկություն, կոելիություն ու կարծրություն և այդ հատկությունը պայմանավորում է նրա լայն օգտագործումը մետալուրգիայում: Բացի այդ, երկաթի հանքանյութերի ձուլման պրոցեսում մանգանի հավելութը օժանդակում է վնասակար խառնուրդների և, հատկապես, ծծմբի անջատմանը, վերջինիս հետ մանգանն առաջացնում է ՄոՏ միացաթյունը, որն անցնում է խարամի մեջ:

Անհրաժեշտ է հիշատակել, որ ժամանակակից մետալուրգիան առանց մանգանի դժվար է պատկերացնել, առանձնապես

նրա անհրաժեշտությունը զգացվում է պողպատի ձուլման ժամանակ, որի մեջ տոննան պահանջում է միջին հաշվով՝ 6 կգ մանգան: Զգալի քանակությամբ մանգան օգտագործվում է նաև պողպատի հատուկ տեսակների արտադրության մեջ: Արդյունահանված մանգանի 90—95 % օգտագործում է մետալուրգիան:

Մանգան պարունակող պողպատները լայնորեն կիրառվում են փոխադրիչ թրթուրավոր շղթաների, երկաթուղային անիվների, սպառագինության արտադրության մեջ:

Հայտնի են մանգանի համաձուլվածքները պղնձի հետ՝ մանգանային բրոնզ, ալյումինի հետ՝ դյուրալյումին, նիկելի հետ՝ մանգանին, մագնեզիումի հետ՝ էլեկտրոն:

Մանգանի հանքանյութերի արդյունահանման մնացած 5—10 % օգտագործում են քիմիական արդյունաբերությունը, ինչպես նաև շոր մարտկոցների, ապակու, ջնարակի արտադրությունը:

Արդյունաբերության տարբեր ճյուղերի պահանջները մանգանի հանքանյութերի նկատմամբ տարբեր են: Մետալուրգիան, որը սովորաբար մանգանը օգտագործում է հատուկ համաձուլվածքի՝ ֆերոմանգանի համար, պահանջում է հանքանյութում 50 %-ից ավելի մանգանի և մինչև տասնորդական տոկոս ֆոսֆորի պարունակություն: Քիմիական արդյունաբերության պահանջն այլ է, այսուեղ հիմնականը MnO_2 պարունակությունն է: Քիմիական հանքանյութերը պետք է պարունակեն 85—88 % ոչ պակաս MnO_2 , այսինքն՝ պետք է ներկայացված լինեն մաքուր պիրոլյուզիտ միներալով:

Համաշխարհային մասշտաբով տարեկան արդյունահանման վում է 10—12 միլիոն տոննա մանգանի հանքաքար, ընդ որում երկրներից առաջատար են Սովետական Միությունը, Հնդկաստանը, Հարավ-Աֆրիկյան Ռեսպուբլիկան, Բրազիլիան, Մարոկկոն, Կուբան:

Սովետական Միությունը լիովին ապահովում է մանգանի պահանջները երկրում և արտահանում է այն արտասահմանյան երկրներ:

Մանդանի հանքանյութերի համաշխարհացին պաշարները առեղաբաշխված են ՍՍՌ-ում, Հարավ-Աֆրիկյան Ռեսպոբ-րիկայում, Հնդկաստանում, Բրազիլիայում, Չինաստանում, Կուբայում, Էկվադորում, Ուրուգվայում և այլուր: Արտասահմանյան երկրներից ԱՄՆ, Անգլիան, Գերմանիան, Ֆրանսիան, Հապենիան մանդանի հանքանյութերի պաշարներ չունեն և նրանց մետալուրգիան ամբողջովին կախված է ներմուծվող հումքից:

Հայկական ՍՍՌ-ում հայտնի են մանդանի մի շաբք հանքավայրեր և երեսակումներ, սակայն նրանց արդյունաբերական նշանակությունը շատ սահմանափակ է: Հանքանյութերի ամենահարուստ տարբերակները կարող են գործնական նշանակություն ունենալ միայն քիմիական արդյունաբերության համար:

Մանդանի համեմատաբար ուսումնասիրված հանքավայրերը առեղաբաշխված են իշեանի շրջանում:

Սարիզյուղի հանքավայրը գտնվում է նույնանուն գյուղից 4—5 կմ դեպի արևմուտք, կրաքարային ապարների մեջ: Հանքայնացումն ապարներում բաշխված է անհավասարաշափ, երակիկների կարողությունը փոքր է, հանքանյութը ներկայացված է բարձրորակ պիրոլիզվիտով, սակայն պաշարները քիչ են:

Սեբարի հանքավայրը առեղապրված է Սեբար գյուղից 5 կմ դեպի հարավ-արևմուտք: Հանքանյութերը բարձրորակ են, նույնպես կազմված են պիրոլիզվիտից, որոնք ապարներում առաջացնում են առանձին բներ և երակիկներ:

Հանքայնացման մասշտաբները փոքր են, հետևապես արդյունաբերական նշանակությունը սահմանափակ է:

Սշաջուրի հանքավայրը նմանապես գտնվում է Իշեանի շրջանում, Աշաջուր գյուղից 3—3,5 կմ դեպի արևմուտք: Այս տեղ մանդանի հանքանյութերի բները և երակիկները հասնում են ավելի մեծ չափերի, սակայն ընդհանուր առմամբ հանքայնացմը առեղաբաշխված է փոքր տարածության վրա:

Մանդանի հանքանյութերի երեսակումներ հայտնի են նաև

Նոյեմբերյանի շրջանում՝ Հալաշացի և Կոբիգյուղի մերձակայ-
քում, Կիրովականի շրջանում՝ Չորագյուղ, Եղեգնուտ, Դեբեդ
գյուղերի մոտ, Ալավերդու, Ստեփանավանի, Շամշադինի,
Աղիզբեկովի և այլ շրջաններում:

Ք Բ Ո Մ

Քրոմը որպես քիմիական տարր հայտնի է 1797 թ., սա-
կայն քրոմիտը կամ քրոմային երկաթաքարն առաջին անգամ
կիրառվել է 1820 թ. Նորվեգիայում, որպես հրակայուն նյութ:
Քրոմիտը լայն կիրառություն է ստացել միայն XIX դարի վեր-
ջիրին մետալուրգիայի, քիմիական և հրակայուն նյութերի
արդյունաբերության զարգացման հետ զուգընթաց:

Քրոմի համար միակ արդյունաբերական միներալն է
համարվում քրոմիտը կամ քրոմային երկաթաքարը, որը պա-
րունակում է մոտավորապես 41% քրոմ: Բացի այդ, քրոմը
ամանում է մի շաբթ միներալների, օրինակ՝ քրոմային փայլարի,
քրոմային գրանատի, քրոմային քլորիտի, քրոմ-դիովանիդի,
քրոմ-տուրմալինի բաղադրության մեջ, որոնք հաճախ հան-
դիսանում են քրոմիտի ուղեկից միներալներ:

Ներկայումս քրոմիտը կիրառվում է զլսավորապես մե-
տալուրգիայում, արդյունաբերության այս բնագավառը սնա-
ռուած է արդյունահանված քրոմիտի 50%-ը: Արդյունահան-
չան մյուս կեսը բաշխվում է հրակայուն նյութերի (40%) և
քիմիական (10%) արդյունաբերության միջև:

Մետալուրգիայում քրոմիտն օգտագործվում է ֆերոքրոմի
ձևով, որի հավելույթը պողպատներին հաղորդում է մածու-
ցիկություն, կարծրություն և բարձրացնում է հակակորողիոն
հատկությունները. ստացվում են թթվակայուն, հրակայուն,
պործիքային, զսպանակային պողպատների տեսակներ:

Նիկելի, կորալտի, ալյումինի հետ քրոմն առաջացնում է
կարեռ և արժեքավոր համաձուլվածքներ: Քրոմն օգտագործ-
վում է քրոմալատման համար և այլն: Քրոմիտի հալման
բարձր չերմաստիճանը (2180°) թույլ է տալիս օգտագործել

այն որպես հյակայում նյութ և քրոմային աղյուսների ձևով բոլորապատել մարտենյան և գունավոր մետաղներ ծուլութառարանները: Քիմիական արդյունաբերությունը քրոմիտից ստանում է ներկեր և կաշիների դաբաղման նյութ:

Քրոմիտային հանքանյութերի որակի նկատմամբ արդյունաբերական տարրեր ճյուղերի պահանջները տարրեր են: Ամենախիստ պահանջներ ներկայացնում է մետալուրգիական արդյունաբերությունը, որի համար պիտանի են մագնո-քրոմիտային հանքանյութերը, իսկ հրակայուն նյութերի և քիմիական արդյունաբերությունը բավարարվում է համեմատաբար ավելի ցածրորակ հանքատեսակներով:

Քրոմիտի համաշխարհային արդյունահանման մեջ առաջին տեղը զրավում է ՍՍՌ-ը, ապա հետևում են Հարավային, Ռոգիլիան, Հարավ-Աֆրիկյան Ռեսպուբլիկան, Թուրքիան, Կուբան, Ֆիլիպինները, Ճապոնիան, Հարավալավիան, Հոնաստանը և ուրիշ երկրներ: Քրոմիտի բարձրորակ հանքանյութերից հսկայական պաշարներ կան ՍՍՌ-ում և Հարավային Ռոգիլիայում:

Դրա հետ մեկտեղ, զարգացած արդյունաբերական միշտ շարք երկրներ՝ ԱՄՆ, Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան համարյա բոլորովին զուրկ են քրոմիտի սեփական ռեսուրսներից և ամբողջովին կախված են ներմուծումից:

Հայկական ՍՍՌ քրոմիտի հանքավայրերն իրենց մասը շաբաներով այնքան էլ մեծ չեն և տեղադրված են հիմնականում Սևանա լճի հյուսիս-արևելյան ափերին, բարձրադիր լեռնային շրջանում: Հայկական ՍՍՌ տերիտորիայի այս մասում, Շորժա գյուղի և Զողի լեռնանցքի միջև ընկած հատվածում տարածված են խորքային ծագում ունեցող լեռնային ապարներ՝ հիպերբազիտների զանգվածներ, որոնց հետ սկրտորեն կապված են քրոմիտի առանձին կուտակումներ:

Անհրաժեշտ է նշել, որ առհասարակ քրոմիտի հանքավայրերը և երևակումները, որպես կանոն, առաջանում են հիպերբազիտների խմբի ապարների ներդրման և բյուրեղացման հետ համարյա միաժամանակ: Այսպիսով, այդ ապարները



Նկ. 1. Հայկական ՍՍՌ ու մետաղների հանքավայրերի տեղաբաշխման
սխեմատիկ քարտեզ

տակայությունն ինքնըստինքյան, հանդիսանում է որոնման
լավ նշան քրոմիտի կուտակումներ հայտնաբերելու համար,
եվ իրոք, բացի Սևանա լճի շրջանից հիպերապիտները մեր-
կանում են Ամասիայի և Ստեփանավանի շրջաններում, որտեղ
նույնպես հայտնի են քրոմիտի երևակումներ:

Հայկական ՍՍՌ քրոմիտի հանքավայրերից պետք է նշել
Շորժայի հանքավայրը:

Շորժայի հանքավայրը գտնվում է Առևյոնանուն գյուղից

Հ կմ դեպի արևելք, Սևանի լեռնաշղթայի նախալեռնային շրջանում:

Հանքավայրը բաղկացած է քրոմային երկաթաքարի 35-ից ավելի հանքամարմիններից, որոնք հանդես են գալիս միջին շափերի ոսպնյակների և բների ձևով: Հանքավայրն ունի տեղական նշանակություն:

Ջիլի հանքավայրը բաղկացած է չորս տարբեր տեղամասերից, որոնք գտնվում են ջիլ զյուղից 1,5—5,5 կմ հեռավորության վրա: Այստեղ քրոմային երկաթաքարը լեռնային ապարներում կազմում է ներփակումներ, առանձին բներ ու ոսպնյակներ և երեսն երականման մարմիններ:

Հանքանյութերն այստեղ բարձրորակ են, սակայն պաշարները քիչ են: Մյուսուամնենայնիվ այս հանքավայրերը մշակվել և հանքանյութերը օգտագործվել են երևանի քրոմպիկ գործարանի կողմից:

Սևանի հանքավայրերի շրջանում կատարվում են հետախուզական աշխատանքներ քրոմիտի նոր կուտակումներ հայտնաբերելու ուղղությամբ և դրա հետ մեկտեղ տեխնոլոգիական հետազոտություններ են տարվում քրոմային երկաթաքարից և մագնեզիտմային հումքից հրակայուն նյութեր (աղյուս) ստանալու համար: Ապացուցված է, որ քրոմի ցածրպարունակություն ունեցող հանքանյութերը, ինչպես նաև մագնեզիտմով հագեցած լեռնային ապարները կարող են լավորակ հումք հանդիսանալ հրակայուն աղյուս և մետաղային մագնեզիտմ ստանալու համար: Այդ հումքի բաղայի վրա ներկայումս զործում է փորձնական ֆարբիկան:

2. ՀԱՅՎԱԳՅԱՌՈՒԻԾ ՄԵՏԱՂՆԵՐ

Մ Ա Լ Ի Բ Դ Կ Ե Ն

Մոլիբդենը դասվում է հազվագյուտ մետաղների շարքը և բնության մեջ հանդիս է գալիս մի շաբք միներալների ձևով, որոնցից առավել տարածվածը մոլիբդենիտն է կամ մոլիբ-

դենի փայլը: Մյուս միներալները՝ մոլիբդիտը, վուլֆհենիտը, պովելիտը, իլզեմանիտը հանդիպում են հաղվագեց:

Մոլիբդենիտը հանդիսանում է հանքանյութերի գլխավոր արդյունաբերական միներալը, ոնի թեփուկավոր կազմություն, փափուկ է, արտաքուստ նման է դրաֆիտին:

Մետաղական մոլիբդեն առաջին անգամ ստացել է շվեդական քիմիկոս Շենեկն 1781 թ. մոլիբդենիտ միներալից: Սակայն մոլիբդենի միացությունները երկար ժամանակ անհան կիրառում են ունեցել միայն ներկերի արտադրության մեջ:

Արդյունաբերության տարբեր ճյուղերում մոլիբդենի օգտագործման բուն զարգացումը սկսվեց 1900 թ., երբ Վոյալը և Թելլորը հայտնաբերեցին մոլիբդենային պողպատի ինքնակուման հատկությունը:

Ներկայումս մոլիբդենը լայնորեն կիրառվում է մետալուրգիայում հատուկ պողպատների արտադրության մեջ: Մոլիբդենի մի քանի տոկոսի հավելույթը խիստ բարձրացնում է պողպատի ձևունությունը և դիմացկունությունը. մոլիբդենային պողպատները կիրառվում են մոտորաշինության ու մեքենաշինության, ուղղական արդյունաբերության մեջ և ավիացիայում: Ստելլիտները, այսինքն՝ մոլիբդենի համաձուլվածքները նիկելի, կոբալտի, քրոմի, վանադիումի, վոլֆրամի հետ, ինչպես նաև մոլիբդենի կարբիդ պարունակող կարծր համաձուլվածքները օգտագործում են արդյունաբերության տարբեր բնագավառներում և առաջին հերթին որպես թթվակայուն և դործիքային համաձուլվածքներ: Մետալուրգիան օգտագործում է մոլիբդենի համաշշարհային արտադրության 85—90 %: Բացի այդ, մետաղական մոլիբդենի մի մասը կիրառվում է էլեկտրալամպերի շիկացող թելիկների արտադրության մեջ (փոխարինում է վոլֆրամին), ուղիղոտեխնիկայում, էլեկտրավառարանների փաթույթների համար (փոխարինում է պլատինին): Արտադրվող մոլիբդենի համեմատաբար փոքր քանակությունը կիրառություն է գտնում քիմիական արդյունաբերության մեջ. բարձրորակ ներկեր և դանաղան ոհակտիվներ

պատրաստելու համար, ապակու և հախճապակու արտադրության մեջ:

Հայաստանում մոլիբդենային հանքանյութերի առկայության մասին գրականության մեջ կային կցկոտոր տեղեկություններ: Մոլիբդենի արդյունաբերական հեռանկարները Ազգակի և Քաջարանի հանքավայրերում պարզվել են 1930-ական թվականներին պղնձի հանքանյութերի հետախուզման ժամանակ: 1930-ական թվականներից սկսած սովորական երկրաբանների կատարած որոշողական և հետախուզական աշխատանքների շնորհիվ Հայաստանում հայտնաբերվել և արդյունաբերական մշակման են հանձնվել մոլիբդենի մի շարք հանքավայրեր:

Հայաստանի հանքավայրերը ներկայացված են հիմնականում կոմպլեքսային պղնձ-մոլիբդենային հանքանյութերով և դանվում են ցրված, այսինքն՝ երակիկացանավոր տիպին:

Պղնձ-մոլիբդենային հանքավայրերը և երեակումները Հայաստանի տերիտորիայում տեղադրված են մեկ միասնական մետաղաբեր զոտու սահմաններում, որը ձգվում է Հյուսիս-արևմուտքից գեպի հարավ-արևելքը: Հարավ-արևելքում այդ զոտին հատում է պետական սահմանը և անցնում է իրանի տերիտորիան: Անհրաժեշտ է նշել, որ մետաղաբեր այս զոտին մոլիբդենի հագեցվածությամբ կարելի է համեմատել աշխարհում մոլիբդենի հանքայինացման հարուստ շրջաններ համարվող կենտրոնական Ղազախստանի, ԱՄՆ-ի արևմտյան նաև հանգների, Հյուսիսային և Հարավ-Արևելյան Չինաստանի հետ:

Հայաստանի հարավային շրջաններում գտնվող պղնձ-մոլիբդենային հանքավայրերից պետք է նշել Քաջարանը, Ազարակը և Թատակերտը, իսկ ուսուպուրիկայի կենտրոնական մասում գտնվողներից՝ Հանքավանի հանքավայրը:

Քաջարանի հանքավայրը գտնվում է Ղափանի շրջանում, Ողջի գետի վերին հոսանքում:

Քաջարանի հանքավայրի մասին գոյություն ունեցող առաջին տվյալները վերաբերվում են XIX դարի սկզբներին: Անցյալ դարի 50—60-ական թվականներին այն մշակվել է

որպես պղնձի հանքավայր: Որպես մոլիբդենի հանքավայր այն սկսվեց հետախուզվել 1931 թ., իսկ այդ աշխատանքները սիստեմատիկ բնույթ կրեցին սկսած 1938 թ.: Սովետական երկրաբանների մեջ կոլեկտիվի երկարամյա բազմակողմանի ուսումնասիրություններն առացուցեցին, որ Քաջարանը ունի դարգացման մեջ հեռանկարներ:



**Նկ. 2. Քաջարանի հանքերի ճողանուղին
լուսանկար կ. Մալխասյանի**

1949 թ. Քաջարանի պղինձ-մոլիբդենի հանքավայրը հանձնվեց արդյունաբերական մշակման: Այստեղ կառուցվեցին բանվորական ավաններ իրենց բոլոր հարմարություններով, հանքանյութերի հարստացուցիչ ֆարրիկա, որտեղ հանքանյութերի վերամշակումից ստացվում են պղնձի և մոլիբդենի հարստանյութեր: Պղնձի հարստանյութը ուղարկվում է Ալմավերդու պղնձաձուլարան, իսկ մոլիբդենինը՝ Միության մետաղաձուլական գործարանները՝ բարձրորակ պողպատներ ստանալու համար:

Ազարակի հանքավայրը գտնվում է Մեղրու շրջանում և նույնպես պատկանում է ցանավոր տիպին:

Հանքանյութերի հիմնական բաղադրիչ միներալներն են. պղնձի համար՝ խալկոպիրիտը, իսկ մոլիբդենի համար՝ մոլիբդենիտը:

Այս հանքանյութերի վերամշակման նպատակով հանքավայրում կառուցվում է և մոտ ժամանակներս շարք կմտնի Սպարակի պղնձամոլիբդենային կոմբինատը, որը կարտադրի արդյունաբերության համար այնքան անհրաժեշտ և արժեքավոր մոլիբդենի և պղնձի հարստանյութեր:

Դաստակերտի հանքավայրը գտնվում է Սիսիանի շրջանում, Դաստակերտ գյուղի մոտ:

Հանքավայրը հայտնաբերվել է 1945 թ. Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Երկրաբանության ինստիտուտի արշավախմբի կողմից:

Հետագայում, հանքավայրի արդյունաբերական հեռանկարները պարզեցվելու նպատակով այստեղ կատարվել են երկրաբանական հետախուզական աշխատանքներ:

Դաստակերտի հանքավայրը հանքայնացման մասշտարներով զիջում է Քաշարանին և Ապարակին, այնուամենայնիվ նա ունի հանքանյութերի անհրաժեշտ պաշարներ, որոնք թույլ տվեցին այստեղ կառուցել հարստացուցիչ ֆաբրիկա և ստանալ պղնձի ու մոլիբդենի հարստանյութեր:

Փոխվել է Սիսիանի շրջանի հեռավոր գյուղերից մեկի՝ Դաստակերտի ընդհանուր տեսքը, այն վերածվել է ժամանակակից բանվորական ավանի, այնտեղ գործում և հարստանյութեր է արտադրում Դաստակերտի հարստացուցիչ ֆաբրիկան:

Հանքավանը տեղադրված է Հրազդանի շրջանում, Մարմարիկ գետի վերին հոսանքում, Ծաղկունյաց լեռնաշղթայի գեղատեսիլ անտառապատ լանջերին:

Որպես պղնձի հանքավայր Հանքավանը, կամ, ինչպես նախկինում անվանում էին, Միսխանան, հայտնի է եղել XIX դարի առաջին կեսերից և տնայնագործական եղանակով մշակվել է մասնավոր ձեռնարկողների կողմից: Այդ մասին են վկայում Հանքավայրի տարբեր տեղամասերում հանդիպող հինգործքները և պղնձի ձուլման խարամների մնացորդները:

Հանքավանի մանրամասն ուսումնասիրություններն սկըսվել են 1931—1932 թթ., սակայն հետախուզական աշխատանքները ընդհատվեցին հանքայնացման փոքր մասշտաբների հետևանքով:

Հետագայում, երկրաբանական վարչության կողմից այս տեղ կատարած ուսումնասիրությունները թույլ տվեցին վերանայել հանքավայրի մասին եղած տեսակետները և վերսկսել երկրաբանական հետախուզական աշխատանքները:

Ներկայումս հանքավայրը հետախուզվում է և նրա արդյունաբերական հեռանկարները վերջնահանապես պարզված չեն:

Նկարագրված հանքավայրերի հետ մեկտեղ Հայաստանի տարբեր շրջաններում, սակայն հիմնականում Զանգեզուրում, Հայտնի են պղինձ-մոլիբդենային բազմաթիվ ավելի փոքր հանքավայրեր և եղևակումներ: Դրանց շարքում անհրաժեշտ է նշել Ձինդարան, Վարդենիսը և այլն:

Այսպիսով, Հայաստանը դասվում է մոլիբդենով հարուստ շրջանների շարքը և հանքանյութերի պաշարներով Սովորական Միության մեջ գրավում է առաջնակարգ տեղերից մեկը:

Հայկական ՍՍՌ-ն ունի բոլոր նախապայմանները մոլիբդենային հարստանյութերի արտադրության զարգացման համար, որը յոթնամյակում կանոնավոր կանոնավոր պահպան է:

Մ Կ Ն Գ Ե Ղ

Մկնդեղի միջին պարունակությունը երկրի կեղևում կազմում է 0,0005 %: Այս տարբեր մանում է տարբեր լեռնային ապարների ու հանքանյութերի բաղադրության մեջ, ինչպես նաև բազմաթիվ բույսերի և օրգանիզմների մեջ: Օրինակ՝ տոկոսի հազարերորդական մասերի շափով այն հանդիպում է զորք և կարմիր շրիմուռներում, փափկամորթների, խեցգետնանմանների օրգանիզմում:

Մկնդեղը առաջացնում է 120-ից ավելի միներալներ, որոնցից ամենակարևորներն են՝ արսենոպիրիտը, ունագարը,

առուրիպիգմենտը, լյոլինգիտը, հնարդիտը, տեննանտիտը և սկզբողիտը:

Մկնդեղ պարունակող միներալներ՝ մուգ կարմիր ունալցարից և ոսկեղեղին առուրիպիգմենտից հեռավոր անցյալում պատրաստել են դեղորայք և ներկեր: Առաջին դարում հույն բժիշկ Դիոսկորիդը առուրիպիգմենտ միներալից թրծման հղանակով ստացել է մկնդեղի նոօքսիփ:

Զինաստանում և Ռուսաստանում մկնդեղի թունավոր միացությունները օգտագործել են դյուլատնեսության վնասառու միջատներին և կրծողներին ոչնչացնելու համար:

Մետաղային մկնդեղն առաջին անգամ ստացվել է XIII դարում, իսկ 1789 թ. ֆրանսիական քիմիկոս Լավուազյին այն ձանաշել է որպիս քիմիական նոր տարր:

Մկնդեղի թունավոր միացությունները՝ կալցիումի արսենատ և ուրիշներ, համարվում են կրծողների և մորիկսի դեմքայքարենու լավ միջոց, խնչակն նաև կիրառվում են սերմերի ախտահաճանման համար:

Մետաղային մկնդեղը օգտագործում են ծարիրի և կապարի հետ համաձուլվածքներ ստանալու գործում: Որոշ միացություններ կարենոր դեր են կատարում արծնապակու և կաթնագույն ապակու արտադրության մեջ, դեղորայքի արդյունաբերության մեջ, ռազմական նշանակություն ունեցող թունավոր նյութեր, այդ թվում լյուիպիտ, ստանալու ասպարեզում:

Մկնդեղի հանքանյութերով հարուստ և համաշխարհային մասշտաբով արդյունահանող երկրներ են Հանդիսանում ՍՍՌՄ, Չինաստանը, ԱՄՆ, Շվեյցարիան, Մեքսիկան և Ֆրանսիան:

Հայկական ՍՍՌ մկնդեղի հանքավայրերը կարելի է ստորաբաժնել երկու խմբի՝ 1) բուն մկնդեղի և 2) պղնձի ու բազմամետաղային հանքավայրեր, որտեղ այդ տարրը գոնքվում է խառնուրդի ձեռվ: Առաջին խմբին է դասվում Սալվարդի հանքավայրը, իսկ երկրորդին՝ Մեծ-Ճորի, Ախթալայի, Շամլուդի, Ալավերդու, Շահումյանի անվ., Գյումուշխանայի և այլ հանքավայրեր:

Սալվարդի հանքավայրը գտնվում է Սիսիանի շրջանում, Արագուստի մոտ, Բարգուշատի լեռնաշղթայի լանջերին:

Հանքայնացված տեղամասերը ներկայացված են անկանոն ձեի երականման մարմիններով կամ գոտիներով, որոնց մեջ հանքաքարը՝ ռեալգարը, հանդես է զալիս բարակ երակիկների, ցանի և բավածքների ձեռվ։ Ամենամեծ տեղամասը հանդիսանում է արեկելան գոտին, որը մակերեսում ձգվում է մինչև 80 մետր։

Հանքավայրը հետախուզված է, հանքանյութի պաշարները սահմանափակ են, հետեւքար արդյունաբերական նշանակությունը շատ փոքր է։

Ռեալգարի ու առորիխիզմենտի երևակումներ հայտնի են նաև Հրազդանի և, ինչպես պարզվել է վերջերս, Ամասիայի շրջաններում։

Մեծ-ձորի հաճեավայրում, որը գտնվում է Ստեփանավանի շրջանի Ագարակ գյուղից 4 կմ հեռավորության վրա, մկնդեղի միներալները ներկայացված են էնարգիտով և տեննանիտով։ Այդ միներալներն առանձին կուտակումների ձեռվ հանդես են գալիս կվարցային և կվարց-պիրիտային երակներում։

Հանքավայրն արդյունաբերական նշանակություն չունի,

Մկնդեղի առկայությունը պղնձի, բազմամետաղային և պղինձ-մոլիբդենային հանքավայրերում պայմանավորված է հանքանյութերում մկնդեղ պարունակող միներալների՝ տեննանիտի և էնարգիտի, փոքր քանակությունների ներկայությամբ։ Մկնդեղը տվյալ հանքանյութերի, առանձնապես մոլիբդենային հարստանյութերի համար համարվում է վնասակար խառնուրդ։ Այս տեսակետից մկնդեղի կորզումը մոլիբդենային հարստանյութից անկասկած կրաքրացներ վերջինիս որակը։

Ծ Ա. Բ Ի Բ

Մարիրը դասվում է հազվագյուտ մետաղների շարքը և բնության մեջ սերտորեն զուգակցվում է սնդիկի հետ։

Մարիրի գլխավոր և, կարելի է ասել, միակ հանքանյութ է հանդիսանում ծարիքային փայլը կամ անտիմոնիտ մինե-

բալը, որը պարունակում է 71,7% ծարիք: Այս տարրի չճշխնքանակություններ կարող են ստացվել նաև տեսրաէդրիտ միներալից, ծարիքի խառնուրդ պարունակող գալենիտից և ծարիքի ու կապարի սուլֆուրաղերից, որոնք բնության մեջ հանդիս են գալիս ինքնուրույն միացությունների ձևով:

Մարիքի նվազագույն պարունակությունը հանքանյութերում ընդունված է 1—2%, սակայն արդյունաբերությունը մշակում է սովորաբար ավելի հարուստ՝ 5—6% ծարիք պարունակող հանքանյութերը:

Մարիքի միացություններն անցյալում օգտագործել են որպես ներկեր: Ներկայումս այն համարվում է բազմաթիվ համաձուլվածքների կարեռ բազաղրամամա և հաղորդում է նրանց ամրություն ու դյուրաբեկություն: Ամենից ավելի օգտագործում են կապար-ծարիքային և անագ-ծարիքային համաձուլվածքները մասնավորապես առանցքակալների, մարտկոցների, կարելի, տպաղրական տառերի արտադրության մեջ:

Մարիքի զանազան միացությունները կարեռ նշանակություն ունեն նաև հրաղիմացկուն գործվածքների, ուետինի, լուցկու, ներկերի, ուազմանյութերի արտադրության գործում:

Մարիքով հարուստ երկիր է համարվում Չինաստանը, որտեղ գտնվում է այդ մետաղի համաշխարհային պաշարների համարյա կեսը. մյուս երկրներից անհրաժեշտ է նշել Մեքսիկան, Բոլիվիան, Հարավսլավիան, Ալժիրը, Ճապոնիան և Հարավ-Աֆրիկյան Ռեսպուբլիկան:

Մարիքի խոշոր հանքավայրեր կան և մշակվում են ՍՍՌ-ում. այդ հանքավայրերը տեղաբաշխված են Տաջիկական և Կիրգիզական ՍՍՌ-ում, Կրասնոյարսկի երկրամասում, Ամուրի մարզում:

Հայկական ՍՍՌ-ում ծարիքի հանքավայր հայտնի է Աղիզբեկովի շրջանի Աղատեկ գյուղի մոտ:

Աղատեկի հանքավայրը հայտնաբերվել է երկրաբանների կողմից 1951 թ. և գտնվում է Աղատեկ գյուղից 7 կմ դեպի Հյուսիս-արևմուտք, Արփա գետի միջին հոսանքում:

Հանքավայրն իր միներալոգիական կազմությամբ շատ

ինքնօրինակ է. Հանքայնացումը ներկայացված է այնպիսի
միներալներով, ինչպիսիք են անտիմոնիտը, բուլանժերիտը,
պղագիռնիտը, տետրաէզրիտը, բուրնոնիտը, որոնց հետ զու-
դակցված սովորական միներալներից Հանդիպում են՝ պիրիտ,
գալենիտ, սֆալերիտ, բնածին սոկի: Բացի այդ, Հանքանյու-
թերի տարատեսակները շնչին քանակությամբ պարունակում
են նաև մի խումբ ցրված տարրեր՝ սնդիկ, բիսմուտ, գալիում,
դերմանիտում, ինդիում, կաղմիում, ստրոնցիում:

Հանքամարմինները կազմում են երակներ, որոնք տարած-
վում են 100—500 մ. երեմն այդ երակները և երակաձև մար-
մինները Հանդես են գալիս ճյուղավորված բարդ ձևերով և
տարածվելով պարունակող ասլարներում, աստիճանաբար
ժարում են:

Հանքավայրը հետախուզված է, պարզված է, որ նա կա-
րող է ներկայացնել որոշ հետաքրքրություն արդյունաբերու-
թյան համար:

Բացի Աղատեկից, կարելի է նշել մի շարք այլ մետաղային
Հանքավայրեր, որոնց Հանքանյութերում փոքր քանակություն-
ներով հանդիս են գալիս ծարիր պարունակող տարրեր մինե-
րալներ: Օրինակ՝ Սալվարդի մկնդեղային Հանքանյութերում
Հանդիպում են անտիմոնիտի առանձին բյուրեղիկներ, Գյու-
մուշխանայում՝ բուլանժերիտ և այլն. ծարիր մետաղի առկա-
յությունը նշվում է նաև Մեծ-ձորի, Սլավերու Հանքավայրերի
խմբի, Ղափանի և շատ ուրիշ Հանքանյութերում:

Ս Ն Գ Ի Կ

Սնդիկ ստանալու հիմնական աղբյուրը Հանդիսանում է
կիխովար միներալը, որը պարունակում է 86,2% սնդիկ: Արդյունաբերական մշակման համար երկրորդական նշանա-
կություն ունին մետացինաբարիտ, լիվինգստոնիտ, շվատցիտ
միներալները և բնածին սնդիկը:

Արդյունաբերական են համարվում սնդիկի այնպիսի
Հանքանյութերը, որոնք պարունակում են 0,1% ոչ պակաս

մետաղ: Սակայն, սովորաբար մշակվում են ավելի հարուստ հանքանյութերը, օրինակ՝ Ալմադեն հանքավայրում արգլունահանվում են 2—4% սնդիկի պարունակություն ունեցող հանքանյութերը, Մոնտե-Ամիատայում՝ 1% և այլն:

Սնդիկը հայտնի է եղել շատ վաղուց: Դեռևս 2500 տարի մ. թ. առաջ չինացիները սնդիկի միացությունները օգտագործել են բուժման նպատակների համար. նրանց հայտնի է եղել սնդիկի մի այլ հատկություն, այն է՝ իր մեջ ոսկի և արծաթի լուծելու բնդունակությունը: Պատմությունից հայտնի է նաև, որ 210 թ. մ. թ. առաջ Չինաստանի ռելիեֆային քարտեզում ծովերը և գետերը ներկված են եղել սնդիկի ներկերով, իսկ մ. թ. 300 տարի առաջ հույները մշակել են իսպանիայում գտնվող սնդիկի Ալմադեն խոշորագույն հանքավայրը: Սովորական Միության տերիտորիայում սնդիկի մշակման հնագործական աշխատանքների հետքեր պահպանվել են Խայդարկան, Նիկիտովկա և ուրիշ հանքավայրերում:

Սնդիկը, ի տարբերություն մյուս մետաղների, նորմալ չերմաստիճանային պայմաններում գտնվում է հեղուկ վիճակում, հեշտությամբ լուծում է իր մեջ ոսկի, արծաթ, անագ, կապար, բիսմուտ, կաղմիում մետաղները. որոշ միացություններ ունեն պայմանագործիկ հատկություն, օրինակ շառաչուն սնդիկը:

Սնդիկը հիմնականում օգտագործվում է քիմիական արդյունաբերության տարրեր ճյուղերում սուլեմա, կալոմել, ներկեր ստանալու համար, ճայթիչների (գետոնատորների) արտադրության մեջ և ոսկի ամալգամելու գործում: Վերջին ժամանակներս սնդիկի գոլորշիների բարձր առաձգականությունը օգտագործում են ջրանիվներ (տուրբիններ) աշխատացնող մնդիկ-գոլորշային սարքավորումների մեջ: Այս տիպի սարքավորումները տալիս են վառելանյութի մինչև 45% արնեսում և օգտակար գործողության գործակցի բարձր ցուցանիշներ:

Սնդիկի համաշխարհային պաշարների 75% (առանց ՍՍՌՄ) գտնվում են իսպանիայի Ալմադեն հանքավայրում:

Զգալի պաշարներ կան իտալիայում, ԱՄՆ-ում, Չինաստանում,
Կանադայում, Պերուում և Մեքսիկայում:

Հայկական ՍՍԾ տերիտորիայում հայտնի են միայն
սնդիկի հանքանյութերի (կինովարի), փոքր երկակումներ,
որոնք տեղաբաշխված են Սեանա լճի հյուսիս-արևելյան ափե-
րին և հանքայնացման որոշ նշաններ Սիսիանի, Վեդու և Ալա-
վերդու շրջաններում: Համառոտակի կանգ առնենք այդ երկա-
կումների նկարագրության վրա:

Սեանա լճի հյուսիս-արևելյան մասի սնդիկի հանքայնաց-
ման երկակումները հայտնաբերվել են 1953 թ.: Մինչ այդ,
1948—1951 թթ. կատարած որոնման աշխատանքների շնոր-
հիվ պարզվել էր, որ սկզբաները, այսինքն՝ գետերի բերած
ավազները պարունակում են կինովարի բավականաշափ քա-
նակի հատիկներ: Մնդիկի արմատային երկակումները գրա-
նըլում են Բուրաթափա լեռան շրջանում:

Մնդիկի հանքայնացումը մուգ կարմիր գույնի կինովարի
երակիկների և ցանի ձեռվ հանդիպում է կվարց-կարբոնա-
տային ավարներից կաղմված զոնաներում:

Բացի զիսավոր հանքային միներալ կինովարից, հանքա-
նյութերում սահմանվում է նաև պիրիտի, խալկոպիրիտի,
սֆալերիտի, հեմատիտի, մագնետիտի, քրոմիտի առկայու-
թյուն:

Մնդիկի նկարագրվող երկակումների արդյունաբերական
նշանակությունը, կատարած նախնական որոնողական-հետա-
խուզական աշխատանքների համաձայն, սահմանափակ է:

Կինովարի նշաններ հանդիպում են նաև Սիսիանի շրջանի
Արիգի, Ալավերդու շրջանի Մարցիգետ և Վեդու շրջանի Վեդի:
գետերի ալլուվիալ նստվածքներում: Գետա-հովտային նըստ-
վածքներում հանդիպող կինովարի եղակի նշանները խթան-
հանդիսացան 1954 թ. Մարցիգետ, իսկ 1956 թ. Վեդի գետի
ավագաններում կինովարի արմատական երկակումների հայտ-
նաբերման: Սակայն այս երկակումները նույնպես արդյու-
նաբերական նշանակություն չունեն:

Պ Ղ Ի Կ Զ

Բնական պայմաններում պղինձը հանդիպում է և բնածին, և գանազան միացությունների կամ միներալների ձևով, որոնց թիվը հասնում է 80-ի: Պղինձ մետաղի ստացման հիմնական աղբյուր են հանդիսանում այնպիսի միներալներ, ինչպիսիք են խալկոպիրիտը և խալկոզիտը: Սակայն, բացի այդ երկու մից, տարածված են նաև պղնձի այլ միներալներ, ինչպիս, օրինակ՝ բունիտը, կովելինը, տեհնանտիտը, էնարուիտը, կուպրիտը, տեհնորիտը, մալախիտը, տղուրիտը և ուրիշներ:

Ինչպես հայտնի է, պղինձը, լավ էլեկտրահաղորդիչ լինելով, լայնորեն կիրառվում է էլեկտրատեխնիկական արդյունաբերության մեջ:

Մաքուր վիճակում պղինձն օգտագործվում է քիմիական արդյունաբերության մեջ զանազան սարքեր՝ կաթսաներ, սառցարաններ, խողովակներ պատրաստելու համար, ներկերի արտադրության մեջ, զյուղատնտեսության մեջ ևնաև սառնուների դեմ պայքարելու համար և այլն:

Բրոնզը (պղնձի և անագի համաձուլվածք), արույրը (պղնձի և ցինկի համաձուլվածք) և պղնձի զանազան համաձուլվածքները նիկելի, ալյումինի, կապարի, մանգանի, քրոմի, ծարիրի և այլ մետաղների հետ լայնորեն օգտագործվում են մեքենաշինության մեջ մեքենաների ու հասացների, չոփող սարքերի առանձին մասեր պատրաստելու համար:

Հայտատանի պղնձի հանքանյութերը հայտնի են եղել և մշակվել են գեռես խոր անցյալում. այդ մասին են վկայում զին հանքախորշերը, հալոցքի մնացորդները և պղնձից, բրոնզից պատրաստված իրերը, որոնք գտնվել են հնէաբանական պեղումների ժամանակ: Պղնձի հանքավայրերից մի քանիսը շահագործվել են նաև միջին դարերում, իսկ նախառելլյուցիոն շրջանում այդ աշխատանքներին ձեռնամուխ են եղել մասնավոր ձեռնարկատերերը:

Ներկայումս պղնձի արտադրությունը մեր ռեսպուբլիկա-
յում զգալիորեն աճել է և ունի զարգացման մեծ հեռանկարներ:

Պետք է նշել, որ մեզ մոտ պղնձի հանքանյութեր և հա-
րստանյութեր ստացվում են մի կողմից բուն պղնձակողեղա-
նային, իսկ մյուս կողմից՝ պղինձ-մոլիբդենային հանքավայ-
րերից: Առաջինների շարքին են զասվում Ալավերդու, Շամլու-
զի, Ղափանի պղնձի հանքավայրերը, իսկ երկրորդ տիպը ներ-
կայացված է Քաջարանի, Ագարակի, Դաստակերտի պղինձ-
մոլիբդենային հանքավայրերով:

Շամլուի հանքավայրը գտնվում է Ալավերդու շրջանում,
Ալավերդի քաղաքից 18 կմ դեպի հյուսիս-արևելք, Լալվար
լեռան արեւելյան անտառապատ լանջերին:

Հանքավայրը նույն հեռավորության վրա է գտնվում
Ախթալա կայարանից, որի հետ կապված է ավտոճանապար-
հուղ: Այդ գեղատեսիլ ճանապարհն անցնում է Ախթալայի
հանգստյան տան մոտով, ապա ոլորապտույտ բարձրանում է
դեպի Շամլուղ դյուղը և նորակառուց բանվորական ավանը:

Շամլուղի պղնձի հանքավայրը մշակվում է XVIII դարի
կեսերից, ավելի ճշգրիտ տվյալների համաձայն շահագործման
աշխատանքներն այստեղ սկսվել են 1770 թ. մասնավոր ձեռ-
նարկատերերի կողմից:


Ներկայումս Շամլուղի պղնձի հանքանյութերը խորը հան-
քախորշերի և հանքուղիների միջոցով մշակվում են Ախթալայի
հանքավարչության կողմից և նեղպէն երկաթուղով հանքաքարը
Շամլուղի հանքերից տեղափոխվում է Ախթալա կայարանը,
իսկ այնտեղից՝ երկաթուղով, Ալավերդու պղնձաձուկարտնը:
Պղնձի համեմատաբար ցածր պարունակություն ունեցող հան-
քանյութերի վերամշակման նպատակով Ախթալա հանքավայրի
մոտ կառուցվում է հարստացուցիչ ֆաբրիկա:

Ալավերդու հանքավայրը հայտնաբերվել և շահագործվել
է 1730 թ.: Պղնձի հանքաքարի արդյունահանմամբ հանքա-
վայրն անցյալում զրավում էր առաջին տեղը Անդրկովկասում:

Շետաքրքրական է նշել, որ Ալավերդու հանքավայրը իր

Հաճակործման 200-ից ավելի տարիների ընթացքում տվել է 1 միլիոն տոննայից ավելի հանքաքար, որից ձուլվել է 45.000 տոննա պղինձ:


Եւավերդու հանքավայրը ներկայումս չի մշակվում: Հանքադաշտի շրջանում տարվում են որոնողական և հետախուզա-



Նկ. 3. Շամբուղի հանքաքարի փոխադրումը
Նեղդիձ երկաթուղով
լուսանկար Հ. Միքոյանի

կան աշխատանքներ, որոնք թույլ կտան պարզելու նրա հեռանկարները: Տարվող աշխատանքների հիմնական խնդիրն է՝ ենելով երկրաբանական կառուցվածքից, հորատանցքերով ուսումնասիրել հանքադաշտի խոր հորիզոնների հանքաբերության նշանները և հայտնաբերել նոր «կույր» հանքամարմինները:

Ներ պղնձի արդյունաբերական պարունակությամբ։ Հորատման աշխատանքների հետ մեկտեղ Ալավերդի քաղաքի հյուսիսային ծայրամասից դեպի հանքավայրի խորքը, 2,5—3 կմ ընդհանուր երկարությամբ փորվում է՝ մի հանքուղի, որը հետապնդում է՝ նույն նպատակը, այն է՝ ուսումնասիրել հանքավայրի խորք հորիզոնների հանքաբերությունը։



Նկ. 4. Ալավերդու հանքերի հին մշակման լցակույտերը
լուսանկար Է. Մալխասյանի

Երկրաբանները հուսով են, որ իրենց կանխագուշակումները կարդարանան՝ Ալավերդու հանքավայրում կհայտնաբերվեն պղնձի հանքանյութի արդյունաբերական պաշարներ և դրանով իսկ կվերականգնվի Ալավերդու պղնձահանքերի երթևմնի փառքը։

Ղափանի հանքավայրը գտնվում է ոհսպուբլիկայի Համանուն շրջանում, Ղափան քաղաքի մոտ: Ղափանի հանքավայրը խմբավորում է մի շարք զործող և արդեն մշակված հանքեր: Հանքաղաշտը գրավում է մոտավորապես 20—25 քառ կմ տարածություն: №№ 1—2, 5—6, 7—10 հանքերը և կապիտալ հանքուղին գտնվում են Ղափան քաղաքից դեպի Հյուսիս և կազմում են Լենինյան հանքերի խումբը: Արդեն մշակված հանքերի շարքին են գտնվում Մեծ Մալարան, Խրդան, Խաղսան և այլն:

Ղափանի հանքավայրը հայտնի է եղել և մշակվել է շատ հին անցյալում: Հետազայում՝ պարսիկների տիրապետության ժամանակաշրջանում հանքավայրի շահագործման աշխատանքները շարունակվել են մինչև XIX դարի սկզբի ուսուպարսկական պատերազմը: Որոշ ընդդիշումից հետո Ղափանի հանքանյութերի մշակումը վերսկսվում է հույների կողմից 1851 թ., իսկ 1853 թ. այսուեղ կառուցվում է մի պրիմիտիվ ձուլարան, որը տարեկան ձուլում է 10—25 տոննա պղինձը Մասնավոր նախաձեռնողները հետագայում կառուցվում են մի շարք նոր ձուլարաններ և այդպիսով աստիճանաբար աճում է հանքանյութի արդյունահանումը և պղինձի ձուլումը: Մակայն, պետք է նշել, որ այդ աշխատանքները տարվում էին գիշատիչ ձևով՝ արդյունահանվում և ձուլվում էին միայն հարուստ հոն պղինձի հանքանյութերը:

Ղափանի հանքավայրի սիստեմատիկ և մանրամասն ուսումնասիրությունը սկսվեց միայն Հայաստանում սովորական կարգեր հաստատելուց հետո: Փլված և անուշադրության մատնված հանքերը վերականգնվեցին և 1924 թ. վերսկսվեց պղինձի հանքանյութերի մշակումը և ձուլումը: 1935 թ. շահագործման հանձնվեց Ղափանի հարստացուցիչ ֆաբրիկան, իսկ 1937 թ. պղինձի հարստանյութերը սկսեցին ձուլել Ալավիրդու պղինձաձուլարանում:

Ներկայումս Ղափանի հանքավայրը ապահովված է հանքանյութի արդյունարերական պաշարներով, հանդիսանում է ոհսպուբլիկայի պղինձի հանքանյութերի հիմնական արդյունա-

Հանողներից մեկը և ունի հետագա զարգացման մեծ հեռանկարներ:

Անհրաժեշտ է նշել, որ պղնձի հանքավայրերից բացի՝ Հայաստանում հայտնի են պղինձ-մոլիբդենային հանքանյութերի հանքավայրեր, որոնք մոլիբդենի հետ մեկտեղ արտադրում են նաև պղնձի հարստանյութեր: Այդ հանքավայրերի շարքին են դասվում Քաջարանը, Դաստակերտը, Ազարակը, որոնք արդեն նկարագրվել են «Մոլիբդեն» բաժնում:

Սակայն պղնձի հանքավայրերի և երեակումների թիվը Հայաստանում չի սահմանափակվում Շամլուղով, Ալավերդով և Ղափանով: Ռեսպուբլիկայի տարրեր շրջաններում հայտնի են պղնձի բազմաթիվ հանքավայրեր, որոնցից մի մասը ուսումնասիրված է, իսկ մյուսները գտնվում են ուսումնասիրության պրոցեսում: Այդ թվում կարելի է նշել Հագվու, Սպասարքարի հանքավայրերը Ալավերդու շրջանում, Զիբուլստուն՝ Ստեփանավանի շրջանում, Հանքանդորը՝ Կիրովականի շրջանում, Զինդարան՝ Մեղրու շրջանում և շատ ուրիշներ:

Հայաստանի պղինձ-մոլիբդենային և պղնձակոլչեգանային հանքանյութերի պաշարները զգալի են և ունեն միութենական նշանակություն: Նիրկայումս մեր ոեսպուրլիկան պղնձի արտադրությամբ Միության մասշտաբով գրավում է առաջնակարգ տեղ:

Յոթամյակի ընթացքում պղնձի ձուլումը մեղ մոտ կաձի մի քանի անգամ:

Կ Ա Պ Ա Ր Ե Վ Ց Ի Ն Կ

Կապարի և ցինկի հանքանյութերը, որոնք սովորաբար հանդիպում են միասին և երբեմն պարունակում են պղնձի և ուկու որոշ տոկոս, կոչվում են բազմամետաղային: Այսպիսի հանքանյութերում հաճախ հանդիպում է նաև արծաթի խառնուրդ:

Կապարը և ցինկը դասվում են գունավոր մետաղների շարքը. երկրի կեղեռում այս մետաղներից ամենատարածվածը ցինկն է, ապա կապարը:

Արդյունաբերական միջներալներից որպես մետաղ ստանալու հումք ամենակարևորներն են կապարի համար՝ գալենիտը կապարի 86,6 % պարունակությամբ, ցինկի համար՝ սփալերիտը ցինկի 67 % պարունակությամբ և արծաթի համար՝ բնածին արծաթը, էլեկտրումը, արգենտիտը և այլն: Արծաթի ստացման աղբյուր են հանդիսանում նաև գալենիտը, էնարդիտը և ուրիշներ:

Կապարը փափուկ, կռելի և հակակորողիոն մետաղ է և լայնորեն կիրառվում է ժողովրդական տնտեսության տարրեր ճյուղերում: Կապարի զգալի քանակություն օգտագործում են մարտկոցների և կաքելի արտադրության մեջ, տպագրական և առանցքակալային ձուլվածքներում, ինչպես նաև ռենտգենատեխնիկայում: Մեքենաշինական արդյունաբերությունը օգտագործում է կապարի համաձուլվածքները պղնձի և ամագի հետ, որոնք կրում են բարիտներ ընդհանուր պնունք: Վերջապես հանրահայտ են կապարի շպարները:

Ցինկն առանձնահատուկ նշանակություն ունի երկաթի ցինկապատման արտադրության մեջ: Ցինկի համաձուլվածքները պղնձի, ալյումինի, անագի, ծարիրի հետ (արույր, բրոնզ, բարիտ) կիրառվում են շարժիչա- և մեքենաշինության մեջ: Ցինկի որոշ քանակություն օգտագործում են ներկերի, ռետինի, ապակու, գեղորացքի արտադրության մեջ:

Արծաթը կռելի, դժվար օքսիդացող, լավ չերմա-էլեկտրա-հաղորդիչ, հեշտ հղկվող մետաղ է: Նախկինում, մասամբ և ներկայումս, արծաթը օգտագործել են զրամահատման, տնային գործածության առարկաներ, արծաթավարդեր պատրաստելու համար:

Արդյունաբերության և տեխնիկայի զարգացման կապակցությամբ արծաթը կիրառություն է զտել ամենատարբեր բնագավառներում: Արծաթը համաձուլվածքներում հաջողությամբ փոխարինում է անագին (30 % անագի փոխարեն օգտագործում են 2 % արծաթ), պղնձին, կապարին, նիկելին, ծարիրին և ուրիշներին:

Արծաթը քիմիապես կայուն մետաղ լինելով լայն կիրա-

ոռւթյուն է գտել սարքաշինության, ավիացիոն համաձուլվածք-ների, էլեկտրա- ֆուու- և կինոարդյունարերության մեջ: Արծաթի բազմաթիվ միացություններ օգտագործում է բժշկությունը, ֆիզիկան, ազրոտեխնիկան, բնագիտությունը, քիմիան (կատալիզատոր, լյապիս) և այլն:

Բազմամետաղները, այսինքն՝ կապարը և ցինկը, մարդկությանը հայսաի են եղել պատմական անցյալում: Երկրագրնդի տարբեր վայրերում կատարված պեղումների միջոցով հայտնաբերվել են կապարից պատրաստված զանազան իրեր, ինչպես նաև ցինկի համաձուլվածքներ: Այդ տեսակներից ուշագրավ են Պոմպեյա բաղարի պեղումների ժամանակ կապարից ձուլված ջրմուղային խողովակների հայտնաբերման և Զբանասանում մ.թ. դեռ 200 տարի առաջ կապարի դրամների շրջանառության փաստերը: Արծաթի լայն օգտագործման մասին են վկայում հնագույն դամբարաններում գտնված դրամները և պերճաների առարկաները:

Ցինկը մաքուր մետաղի ձևով ստացվել է միայն 1520 թ., սակայն պատմական տվյալների համաձայն այն հայտնի է եղել շատ վաղուց: Սորբական և ուրարտական սեպագերում (մինչև մ.թ. 9. IX—VIII դարերը) հիշատակվում է այն մասին, որ «սպիտակ հողի» հավելութիւն միջոցով ձուլվել է սովորականից ավելի բաց գույնի պղինձ. Հավանաբար խոսքը վերաբերում է արուցրին, իսկ «սպիտակ հողը», զա ցինկի օքսիդացած հանքանյութն է, որը սովորաբար տարածված է բազմամետաղային հանքավայրերի մակերևույթին և մերձմակերևացին մասերում:

Հայկական ՍՍՌ տերիտորիայում բազմամետաղային հանքավայրեր հայտնի են հարավային և հյուսիսային շրջաններում: Այդ հանքավայրերից անհրաժեշտ է նշել Դափանի պղնձի հանքավայրին կից Շահումյանի անվան հանքը, Հայոց ձորի Դավթայի, Գյումուշիանայի հանքավայրերը և Ալավերդու շրջանի Ախթալայի հանքավայրը, որը ներկայումս մշակվում է: Բացի նշվածներից, բազմամետաղային հանքանյութերի երեակումներ և այժմ ուսումնասիրվող հանքավայրեր

կան Կալինինոյի (Պրիլունովի), Շամշադինի, Սիսիանի, Դափանի շրջաններում:

Ախթալայի հանքավայրը գտնվում է Ալավերդու շրջանում, Ախթալա կայարանից 2 կմ դեպի հյուսիս-արևմուտք:

Պատմական տվյալների համաձայն Ախթալայի բազմամետաղային հանքանյութերը մշակվել են վաղ անցյալում, սակայն հետագայում մոռացության են մատնվել և այդ աշխատանքները վերսկսվել են միշին դարերում:

Հայտնի է, որ XVIII դարում վրաց թարգավոր Հերակլն, իմանալով իշխաններ Արդության-Երկայնարազուկներից Ախթալայում նախկինում գոյություն ունեցող շահավետ հանքագործության մասին, որոշում է այդ հին հանքերում վերսկսել հանքաբարի արդյունահանումը: Հերակլն իր նպատակն իրագործելու համար Թուրքիայից հրամակում է հույն հանքարդյունաբերողների, որոնք 1763 թ. տեղափոխվելով Ալավերդու շրջանը, սկզբում հիմնում են Ախթալայի գործարանը, իսկ փոքր-ինչ ուշ՝ 1770 թ., Ալավերդու կամ Լալվարի գործարանը:

Ախթալայի հանքանյութերը, բացի կապարից, ցինկից և պղնձից, հարուստ լինելով նաև արծաթով և ոսկով, գրավել են բազմաթիվ հանքարդյունաբերողների, ճանապարհորդների և գիտնականների ուշադրությունը: Հայտնի է, որ 1825 թ. Ախթալայի հանքավայրը գիտել է Եյխվալդը, 1839 թ.:՝ Մոնակերեն, 1843 թ.:՝ Կոլսը, 1855 թ.:՝ Աբրիխը և շատ ուրիշներ:

Ախթալայի հանքանյութերի մշակումը տևում է մինչև 1765 թ. և այդ ժամանակաշրջանում այստեղ տարեկան արդյունահանվում է մոտավորապես 1400 կտ արծաթ: 1765 թ. Օմար-խանի արշավանքների հետևանքով ավերվում և հափշտակվում են հանքավայրի և Ախթալայի վանքի հարստությունները:

Երկու տարի ընդմիջումնեց հետո 1767 թ. հանքագործությունն Ախթալայում վերսկսվում է, սակայն 1795 թ. հանքերը նորից ավերվում են Աղա-Մահմադ խանի արշավանքների հետևանքով:

Հետագա տարիներին առանձին ընդմիջումներով Ախմա-
լյացի հանքանյութերը մշակվում են մասնավոր ձեռնարկատե-
րերի կողմից մինչև 1801 թ., երբ ցարական կառավարությունը
Կովկաս է ուղարկում իր ներկայացուցիչ Մուսիմ-Պուշկինին՝
լեռնային գործը կազմակերպելու և կարգավորելու համար:
Այդ ժամանակվանից Ախմալյացի հանքավայրը անցնում է կա-
ռավարության ձեռքը և ստացված հանքանյութերից արծաթի
ու պղնձի դրամներ պատրաստելու նպատակով 1804 թ. Թիֆ-
լիսում հիմնվում է դրամահատարան:

1816 թ. ցարական կառավարությունը հաստատում է մի
օրենք հանքարդյունաբերության վերաբերյալ, որի համաձայն
մասնավոր անձանց թույլատրվում է կազմակերպել հանքա-
նյութերի որոնողական ու մշակման աշխատանքներ և կառու-
ցել գործարաններ: Այդ օրենքի համաձայն 1840 թ. իշխան
Մելիքովը կառավարության հետ պայմանագիր կնքելով, ձեռ-
նամուխ է լինում Ախմալյացի հանքանյութերի շահագործմանը:
1863 թ. հանքավայրի անցնում է իշխան Նիկոլայ Բարաթովի
ձեռքը:

1886 թ. ֆրանսիական կապիտալիստների մի խումբ Կով-
կաս է գործուղում լեռնային ինժեներ Դե-Մորդանին, որը
ուսումնասիրում է Ախմալյացի հանքավայրը և դրական կարծիք
է հայտնում հանքանյութերի բազագործության և որակի մասին:
Ֆրանսիական կապիտալիստները հաշվի առնելով Ախմալյացի
հանքանյութերի մշակման շահագետառությունը, 1887 թ. հիմնում
են կոնցենտրատիրական ընկերություն, որը մինչև 1913 թ. գի-
շատիչ կերպով մշակում է Ախմալյացի հանքանյութերը:

Ախմալյացի հանքավայրի բազմակողմանի ուսումնասիրու-
թյունը, նրա հանքատեսակների կոմպլեքս մշակման հարցերի
լուսաբանումը սկսվեցին միայն Հայաստանում սովորական
կարգեր հաստատվելոց հետո:

1924 թ. Սովորական Հայաստանի կառավարությունը
վերականգնեց Ախմալյացի փլամա և ավերված հանքերը, կազ-
մակերպեց հանքանյութերի մշակման և նոր ռեսուրսների
որոնողական-հետախուզական մշակման քններ:

Ներկայումս Ախթալան ապրում է իր վերածնդի շրջանը, որոնողական և հետախուզական մեծ մասշտաբի աշխատանքների շնորհիվ այստեղ հայտնաբերվել և հայտնաբերվում են բազմամետաղային հանքանյութերով հարուստ նոր հանքամարմիններ: Կարելի է ասել, որ հին Ախթալան անցել է պատմության գիրքը, ներկայումս մենք ունենք մի նոր հանքավայր իր գործող հանքերով:

Վերջին տարիներս կատարված մանրամասն հետազոտությունները թույլ են տվել մշակել հանքանյութերի կոմպլեքս օգտագործման հարցերը: Հանքանյութերի տարատեսակներում, բացի ազնիվ մետաղներ ոսկուց և արծաթից, հայտնաբերվել են հաղվագյուտ մետաղներ, որոնք զգալիորեն բարձրացնում են հանքանյութերի արժեքը:

Ախթալայի հանքավայրի բազայի վրա կառուցվել և արդեն գործում է հարստացուցիչ ֆաբրիկա, որտեղ ստացվում են կապարի, ցինկի և պղնձի հարստանյութեր:

Ախթալան ունի հետագա զարգացման բոլոր նախադրյալները և հեռանկարները: Ախթալայի հանքավայրն արդյունաբերությանը տալիս է կապարի, ցինկի, պղնձի, բարիտի հանքանյութեր, ոսկի և արծաթ, իսկ հարստանյութերից արգեն կորզվում է կաղմիռում մետաղը և կարող են կորզվել մի շարք այլ հաղվագյուտ մետաղներ:

Շահումյանի անվ. հանելը գտնվում է Ղափան քաղաքից 5 կմ դեպի արևելք: Իր երկրաբանական կառուցվածքով այս տեղամասը հանդիսանում է Ղափանի հանքաղաշտի շարունակությունը դեպի արևելք և վերջինից տարրերվում է հանքանյութերի բաղադրությամբ: Հանքանյութերը ներկայացված են կապարի, ցինկի և պղնձի միներալներով, որոնք կվարցի ու կարբոնատի հետ միասին կազմում են երակային հանքամարմիններ:

Այստեղ մշակվում էին բազմամետաղային հանքանյութերը և նրանցից ստացվում էին ցինկի և պղնձի հարստանյութեր: Բացի այդ, հանքանյութերը պարունակում են ոսկու, արծաթի և կաղմիռումի որոշ տոկոս: Ներկայումս հանքավայրը չի գործում, այն համարվում է պահածո հանք:

Հայոցձորի հանքավայրերից կարելի է նշել՝

Գյումուշխանան, որը գտնվում է Թարդի գետի վերին հոսանքում, Գյումուշխանա տեղամասից 1—2 կմ հեռավորության վրա:

Գյումուշխանայում արծաթի մշակման մասին հայտնի է շատ վաղուց. այդ մասին են վկայում հին հանքափորվածքների հետքերը և հենց իսկ տեղանքի անունը:

Անցյալ դարի կեսերից հանքավայրում առանձին ընդմիջումներով կատարվել են հետախուզական աշխատանքներ։ 1925—1928 թթ. հանքավայրի շրջանում վերսկսվեցին երկրաբանական որոնողական աշխատանքները։ Վերջերս հետախուզական աշխատանքները հանքավայրում տարվում են Հայկ. ՍՍՌ Մինիստրների Սովորին առընթեր երկրաբանության և ընդերքի պահպանության վարչության կողմից։

Բազմամետաղային հանքանյութերն այստեղ հանդիս են դալիս երակային մարմինների ձևով, որոնք տարածվում են մի քանի հարյուր մետր։ Հանքանյութերը բաղկացած են կապարի, ցինկի և պղնձի միներալներից արծաթի որոշ պարունակությամբ։

Հանքավայրի արդյունաբերական հետանկարները պարզելու համար այստեղ կատարվում են հետախուզական աշխատանքներ լեռնային փորվածքների և հորատանցքների միջոցով։

Դագմայի հանքավայրը տեղադրված է Կարմրաշեն գետի վերին հոսանքում, Թէք լեռան հյուսիսային լանջին։

Հանքավայրն առաջին անգամ ուսումնասիրվել է 1926 թ. և երկար ընդմիջումից հետո այստեղ վերսկսվել են մանրամասն երկրաբանական հետախուզական աշխատանքները։

Ներկայումս պարզված է, որ մի քանի տասնյակ բազմամետաղային երակներ ունեն բավականաշափ տարածում թի՛ հորիզոնական ուղղությամբ և թի՛ դեպի խորքը։ Մետաղների պարունակությունը հանքանյութերում արդյունաբերական է, բավարարում է ներկայիս պահանջներին։ Ստացած տվյալները դրական են և վկայում են այն մասին, որ Դագմայի հանքավայրը կարող է ձեռք բերել արդյունաբերական նշանակություն։

Այսպիսով, ընդհանրացնելով բազմամետաղային հանքատեսակների մասին եղած տվյալները, պետք է նշել, որ Հայկական ՍՍՌ-ում մշակվում է միայն Ախթալայի հանքավայրը: Սակայն, բազմամետաղային հանքանյութերի հոռանկարային կուտակումներ կան ուսուլութիկայի մի շարք շրջաններում և հանքավայրերում, որոնք գտնվում են ուսումնասիրման պրոցեսում: Կան բոլոր նախադրյալները, որ այդ մանրամասն ուսումնասիրությունները կազմակվեն հաջողությամբ և ուսուլութիկան կստանա բազմամետաղային հումքի նոր ուսուլուներ:

Ա Է Յ Ո Ւ Մ Ի Ն Ի Հ Ո Ւ Մ Ք

Այլումինը դասվում է գունավոր մետաղների շարքը և միենույն ժամանակ դիտվում է որպես թեթև մետաղ. նրա տեսակարար կշիռը՝ ընդամենը 2,7 է:

Այլումինն ամենատարածված մետաղն է և նրա միջին պարունակությունը երկրի կեղևում կազմում է 7,45%: Որպես լեռնային ապարների կարևոր բաղադրամաս այլումինը մըտնում է ավելի քան 250 միներալներից բաղադրության մէջ: Այլումինի կարևոր միներալներից կարելի է թվել կորոնզը, անդալուզիտը, սիլիմանիտը, նեֆելինը, լիցիտը, ալոմիտը, դիասպորը, սակայն ալյումին ստանալու համար հիմնական հանքանյութ է հանդիսանում բոքսիտը: Այլումին մետաղի որոշ քանակություն ստացվում է նաև լեցիտից, անդալուզիտից և ալունիտից: Վերջերս որպես ալյումինի հումք խոչը նշանակություն են ձեռք բերել նեֆելինով հարուստ լեռնային ապարները, այսպես կոչված նեֆելինային սինիտները:

Այլումին մետաղն առաջին անգամ ստացվել է 1825 թ. բոքսիտից, սակայն լայն կիրառություն է գտել միայն XIX դարի վերջերին, երբ հայտնագործել են նրա ստացման էժան եղանակները: Հետագա տարիներին դիտվում է ալյումինի արտադրության բուն զարգացում, եթե 1890 թ. ալյումինի համաշխարհային ձուլումը կազմել է ընդամենը 193 տոննա,

տպա մոտ 60 տորի տնց այդ թիվը հասնում է 2—2,5 միլիոն տոննայի:


Ալյումինը, թեթև և դիմացկուն մետաղ լինելով, չաջողությամբ փոխարինում է պղնձին, երկաթին և այլ մետաղներին արգյունաբերության և տեխնիկայի ամենատարրեր բնագավառներում:

Ալյումինը պղնձի, ցինկի, նիկելի, մագնեզիումի, մանգանի, տիտանի և այլ մետաղների հետ տալիս է թեթև և դիմացկուն համաձուլվածքներ, որոնցից կարելի է թվել էլեկտրոնը, մագնալը, սիլումինը, կոլցուգալյումինը. այդ համաձուլվածքները լայն կիրառություն են գտնում արդյունաբերության բազմազան ճյուղերում՝ մերենաշինության, նավաշինարարության, ինքնաթիռների, ավտոմեքենաների արտադրության մեջ: Մեքենաշինությունն ալյումինի համաձուլվածքներն օգտագործում է թեթեարաշ մեխանիզմներ, ներքին այրման շարժիչների մասեր, ամբարձիչ մեխանիզմներ պատրաստելու համար, էլեկտրատեխնիկան օգտագործում է ալյումինային լարեր պղընձալարերի փոխարեն, զանազան էլեկտրական և հեռախոսային սարքեր պատրաստելու համար, քիմիական արդյունաբերությունը՝ սարքերի, պայթուցիկ նյութերի արտադրության համար, անդի արդյունաբերությունը՝ ալյումինային փայլաթիթեղ, տարա, ամանեղեն պատրաստելու համար և այլն:

Ալյումին մետաղի ստացման տարրեր եղանակներն իրենցից ներկայացնում են մի պրոցես, որը պահանջում է մեծ քանակության էլեկտրաէներգիա: Մեր ռեսպուբլիկան ունի ալյումինի հումքի անսպառ պաշարներ. դրանք են Փամբակի լեռնաշրջանի նեֆելինային սիհենիտները, որոնք հիմնալի կոմմլեքսային հումք են ծառայում կավաջողի, ալկալիների, ցեմենտի և մի շարք ցրված մետաղների ստացման համար:

Փամբակի նեֆելինային սիհենիտների հանքավայրը գտնվում է Փամբակի լեռնաշղթայի հարավային լանջերին և իրենից ներկայացնում է լեռնային ապարների մի խոշոր զանգված, որի առանձին տեղամասերը հարստացնողի, ալկալիների, ցեմենտի և պուրուշացիտային ապարներով:

Փամբակի նեֆելինային սիենիտները բաղմակողմանիորեն ուսումնասիրվել և ուսումնասիրվում են Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Երկրաբանության ինստիտուտի մի խումբ քարագետների կողմից: Դեռ 1940-ական թվական-



Նկ. 5. Փամբակի նեֆելինային սիենիտի նմուշ

ներին կատարած մանրազնին հետախուզությունները թույլ տվեցին նեֆելինային սիենիտները դիտել որպես ալյումին ստանալու հնարավոր նույնք: Այդ նույն թվականներին Փամբակի նեֆելինային և պոկառությունային ապարներից կավազով ստանալու հնարավորության կամ, ավելի ճիշտ՝ եղանակները մշակելու ուղղությամբ, հետազոտություններ սկսեց կատարել Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի քիմիական ինստիտուտը: Անջրաժեշտ է նշել, որ այդ աշխատանքները պսակվեցին Հաջողությամբ և ներկայումս վերջնականացես մշակված է նեֆելինային լիոնային ապարներից կավազողի և ապա նրանից ալյումինի ստացման տեխնոլոգիան:

Փամբակի նեֆելինային սիենիտները մոտ ապագայում Հաջողությամբ կմշակվեն Հրազդանում կառուցվող լիոնաքիմիական կոմբինատում, որը մեր ուսուպուրիկայում յոթինամ-

յակի խոշոր կառուցցներից մեկն է Համարվում: Դրանով կլուծվի նաև Քանաքեռի ալլումինի գործարանը տեղական հումքով ապահովելու հարցը:

Նեֆելինային և ալկալային սիենիտներ տարածված են նաև Մեղրու շրջանում, Շվանիձոր գյուղի շրջակայքում: Այս ապարներն իրենց բաղադրությամբ և որակով Հանդիսանում են Փամբակի նեֆելինային սիենիտների ճիշտ նմանակը:

Բացի նեֆելին պարունակող լեռնային ապարներից Հայաստանում Հայտնի են ալլումինի այլ հումքատեսակներ, օրինակ՝ անդալուզիտներ և անորթոզիտներ:

Անդալուզիտային ապարները տարածված են Նոյեմբերյանի, Եղեգնաձորի, Ղափանի և Սիսիանի շրջաններում, իսկ անորթոզիտները Հայտնի են Սևանա լճի Հյուսիս-արևելյան ափերին:

Ալլումինի հումքի այս տարատեսակների մեջ առավել հետաքրքրություն են ներկայացնում անդալուզիտային ապարները, որոնցից անմիջականորեն և հեշտ եղանակով կարելի է ստանալ սիլումին, այսինքն՝ ալլումինի և սիլիցիումի համաձայնվածք:

Սակայն ներկայիս պայմաններում մեր ռեսպուբլիկայում ալլումինի համար կարեոր նշանակություն ունեն Նեֆելինային ապարները, քանի որ անդալուզիտային ապարների տարածման մասշտաբները սահմանափակ են:

4. ԱԶՆԻԿ ՄԵՏԱՂՆԵՐ

Ո Ս Կ Ի

Ոսկին պատկանում է ազնիվ մետաղների խմբին և փափուկ, կռելի ու կայուն մետաղ է: Ոսկու տեսակարար կշիռը կազմում է $19,26$, համան չերմաստիճանը՝ 1064° :

Ոսկին համարվում է համեմատաբար հազվագյուտ տարր, նրա միջին պարունակությունը երկրի կեղևում կազմում է $0,0000005\%$. Հնայած այսպիսի ցածր պարունակությանը

ոսկու ընդհանուր քանակը երկրի կեղեռում կազմում է մի քանի միլիարդ տոննա:


Ոսկու միներալների քանակը սահմանափակ է: Արդյունաշանման համար գլխավոր նշանակություն ունի բնածին ոսկին, որը սովորաբար իր մեջ պարունակում է արծաթի, պղնձի, երբեմն բիսմուտի, սոդիումի, պալադիումի և այլ տարրերի խառնուրդներ: Բնական պայմաններում ոսկին հանդիպում է տարբեր սովորակային հանքավայրերում և հաճախ զուգակըցվում է պիրիտի, խալկոպիրիտի, արսենոպիրիտի, բուլանժերիտի, բիսմուտի, կապարի, արծաթի թելուրիդների, սֆալերիտի և մի շարք այլ միներալների հետ: Բացի բնածին ոսկուց, արդյունաբերական նշանակություն ունեն նաև ոսկու թելուրային միացությունները, որոնք հանդես են զալիս կալիս կալավերիտ, սիլվանիտ, նագիագիտ /միներալների ձևով: Միներալներից անհրաժեշտ է նշել նաև էլեկտրումը, որը ներկայացնում է իրենից 25—50% արծաթի խառնուրդ պարունակող ոսկի:

Բնածին ոսկին սովորաբար հանդիպում է թերթիկների և թեփուկների, թելանման և սպոնգանման անշատումների ձևով, իսկ երբեմն՝ նաև լավ ձևավորված բյուրեղներով: Բնածին ոսկու հատիկների շափերը տարբեր են՝ մանրագույնից մինչև մի քանի տասնյակ կիլոգրամ կշիռում ունեցող բնածին կտորներ, որոնք հանդիպել են ինչպես ցրոններում, այնպես էլ արմատական հանքավայրերի մշակման ժամանակ:

Ոսկու խոշոր բնածինները պահպում են տարբեր երկրների թանգարաններում և գանձարաններում: Ներկայումս պահպանված ոռուսական բնածիններից ամենախոշորը Հարավային Ռուսական թագավորության գույքը՝ «Մեծ Կուանկյունին» է կամ, ինչպես անվանել են՝ նախկինում, «Համաշխարհային մոնստրը», որի կշիռը կազմում է 36 կգ 22 գ: Ոսկու խոշորագույն կուտակումներ հանդիպել են նաև Անդրբայկալի Բալեյ հանքում, որտեղ 1 տոննա կլարցից ստացել են 240 կգ ոսկի:

Արտասահմանում բնածին ոսկու ամենախոշոր կուտակումը հայտնաբերվել է 1872 թ. Ավստրալիայի Հիլ-էնդ հանքում և այդ բնածինը՝ «Հոլտերմանի սալը» լեռնային ապարի

Հետ միասին կշռել է 260 կգ և պարունակել է 93,3 կգ մաքուր ոսկի: Ոսկու շատ խոշոր բնածիններից կարելի է նշել Ավաստրալիայի Բալարատ և ուրիշ հանքավայրերի մշակման ժամանակ դանված «Յանկալի անձանոթը» 69,6 կգ և «Յանկալի բնածինը» 68,2 կգ կշռով:



Նկ. 6. Բնածին ոսկու անջտամտն ձեռքը. բնական մեծության
լուսանկար Շ. Ամիրյանի

Անջրամեջտ է նշել, որ ոսկու մշակման համար արմատական հանքավայրերում ոսկու նվազագույն պարունակությունը ներկայում ընդունված է 3—5 դրամ մեկ տոննա ապարում, իսկ ցրոնացին հանքավայրերում՝ 0,1 դրամ ոսկի մեկ տոննա ավազում:

Հաշվի առնելով այլ մետաղների խառնուրդի մշտական առկայությունը ոսկու մէջ, սահմանված է «ոսկու հարգ» (քրօնական) հասկացողությունը, որը նշանակում է ոսկու պարունակությունը հազարերորդական մասերով բնական ոսկու և տոկոսներով՝ ոսկյա իրերի մէջ: Օրինակ՝ «920 հարգի ոսկի»,

գա նշանակում է, որ 1000 մասից 920 բաժին կազմում է մաքուր ոսկին, իսկ մնացած 80-ը՝ այլ մետաղների (արծաթ, պղինձ) խառնուրդները: Այսպիսի բարձրահարգ ոսկին մուտքեղին գույնի է, ավելի փափուկ և կուրի է, իսկ ցածրահարգ ոսկին ունի բաց դեղնավուն գույն և դյուրաբեկ է:

Ոսկերչական իրեր և զարդեղներու պատրաստելու համար բարձրահարգ փափուկ և դյուրամաշ ոսկուն սովորաբար արծեստականորեն խառնում են պղնձի, արծաթի կամ այլ մետաղների որոշ տոկոս, հասցնելով այդպիսի ոսկու հարգը 56 կամ 72-ի:

Ներկայումս ոսկին կիրառվում է զրամահատման և ոսկերչական արտադրության բնագավառներում, փոքր քանակությամբ այն օգտագործում են բժշկությունը և հախճապակու արդյունաբերությունը:

Ամբողջ աշխարհում, առանց Սովետական Միության, տարեկան արդյունահանավում է մոտավորապես 1000 տոննա ոսկի, արդյունահանող երկրներից առաջին տեղը գրավում է Հարավ-Աֆրիկյան Ռեսուրսների կանոնադրությունը, որտեղ միայն վիտվատերս սրանդ հսկայական հանքավայրը տարեկան տալիս է 400—450 տոննա ոսկի, երկրորդ տեղը գրավում է Կանադան: Ոսկի արդյունահանող արտասահմանյան այլ երկրներից կարելի է հիշատակել՝ ԱՄՆ, Բրազիլիան, Կոլումբիան, Պերուն, Չիլին, Ավստրալիան, Նոր Զելանդիան, Մեքսիկան, Կոնգոն, Ռուգեգիան, Հնդկաստանը, Ինդոնեզիան և ուրիշներ:

Սովետական Միությունը ոսկու արդյունահանմամբ աշխարհում գրավում է առաջնակարգ տեղերից մեկը:

Հետաքրքրական է նշել, որ մոտավոր հաշվումներով վերջին 4,5 դարերի ընթացքում, այսինքն՝ Ամերիկայի հայտնաբերումից հետո, ամբողջ աշխարհում արդյունահանված է ավելի քան 50 հազար տոննա ոսկի, որից մոտավորապես 30 հազար տոննան դրամի և ձուլածոների ձևով պահպամ է բանկերում, իսկ մնացածը հիմնականում ծախսված է ոսկերչական իրերի վրա:

Ոսկու հանքանյութերի ամենամեծ պաշարները տեղա-

բաշխված են Հարավ-Աֆրիկյան Ռեսպուբլիկայում, ՍՍՌՄ-ում
և Կանադայում:

Ոսկին հայտնի է եղել մարգկությանը գեռես շատ վաղ
անցյալում և կիրառվել է զանազան զարգեղեններ պատրաս-
տելու համար և որպես շափանիշ առեւրական հաշվարկների
ժամանակ: Ավելի ուշ ոսկին օգտագործել են դրամահատման
նպատակներով և այդ դրամների առաջին նմուշները երևան են
եկել մ.թ. 1500 տարի առաջ Զինաստանում, Հնդկաստանում,
Եգիպտոսում և Միջագետքում:

Հայաստանում ոսկու հանքավայրեր մշակվել են պատմա-
կան անցյալում, ներկայիս Բասարգելարի, Եշևանի, Հրազդանի
և այլ շրջաններում: Այդ մասին են վկայում հին փորվածքների
և հանքերի հետքերը, գործիքների և ոսկե իրերի նմուշները:
Պատմական տվյալներից հայտնի է, որ Ուրարտական թագա-
վորները հարուստ են եղել ոսկով և այն ենթադրությունը, որ
դա հանդիսացել է տեղական ոսկի, ներկայումս հաստատվում
է հիմնավոր փաստերով: Սևանա լճի ավազանում, Լճաշեն
դյուզի մոտ կատարված հնէարանական պեղումների տվյալ-
ներով, գեռես 2—3 հազար տարի առաջ, տեղաբնակ մեր նախ-
նիները շահագործել են ոսկու հանքավայրեր և ստացված մե-
տաղից պատրաստել են պերճանքի նուրբ առարկաներ՝ ու-
լունքներ, կոճակներ և այլն: Ոսկե դրամի նմուշներ և աշխա-
տանքային հին գործիքների մնացորդներ են գտնված Սևանա
լճի ավազանի մի այլ շրջանում՝ Բասարգելարում: Դիլիջան
քաղաքի մերձակայքում ոսկերեր ցրոնների շահագործման
ժամանակ գտնվել են պարթեների Օրոդ թագավորի օրոք (1
դար մ.թ. առաջ) դրամահատված ոսկե դրամներ:

Թվարկված փաստերը խոսում են այն մասին, որ պատմա-
կան անցյալում Հայաստանում ոսկու հանքանյութերի արդյու-
նահանում և մշակման աշխատանքները հասել են զգալի շա-
փերի, քանի որ այդ մետաղը անհրաժեշտ է եղել առեւրական
լայն գործարքներ կատարելու համար:

Սակայն պետք է հիշատակել, որ նախկինում կատարած
աշխատանքները կրել են պրիմիտիվ և մակերեսային բնույթ,

փորվածքները և հանքերը շատ խորը չեն եղել, հետեւպիս ոսկու հանքանյութերը շահագործել են միայն այն ժամանակ-վա «տեխնիկայի» համար հնարավոր փորը խորություններից: Այդ նշանակում է, որ մեծանում է հիշյալ շրջանների հեռանկարները ոսկու հանքանյութերի նոր կուտակումների որոնման համար: Եվ, իրոք, վերջերս կատարած երկրաբանական հետազոտությունների տվյալները ապացուցում են, որ մեր ոհսպուր-լիկայում ոսկու հանքաբերության տեսակետից կան մի շարք հեռանկարային շրջաններ, որտեղ նպատակասլաց որոնողական և հետախուզական ուսումնասիրությունները կարող են հանգել զրական արդյունքների: Հեռանկարային շրջանների շարքին են գասվում առաջին հերթին Սևանի ավազանը, և առհասարակ Սևանա-Սևմասիալի մետաղաբեր գոտին, Հրազդանի, Կիրովականի, Խցկանի և մի շարք այլ շրջաններ: Կատարված երկրաբանական հետախուզական աշխատանքներով Սևանի ավազանում հայտնաբերված է Զողի ոսկու հանքավայրը, որի հումքի հիման վրա ներկայումս ստեղծվում է լեռնահանքային արդյունաբերության մի նոր կենտրոն:

5. ՑՐՎԱԾ ՄԵՏԱՂՆԵՐ

Վերջերս, ժամանակակից տեխնիկայի ամենատարբեր բնագավառներում՝ ավտոմատիկայում, էլեկտրոնիկայում, սաղիոտեխնիկայում, աստմային էներգիայի ստացման համար բացառիկ նշանակություն են ձեռք բերել ցրված և հազվագյուտ հողային տարրերը, որոնք ուղեկից խառնուրդի ձեռվ պարունակվում են բազմատեսակ հանքանյութերում և սղվորաբար կորզվում են հանքավայրերի գլխավոր օգտակար հանածոյի արդյունաբերական վերամշակման ժամանակ:

Ցրված տարրերից մենք համառոտակի կանգ կառնենք այն խմբի վրա, որը կապված է հիմնականում գունավոր և որոշ հազվագյուտ մետաղների սուլֆիդային հանքանյութերի հետ: Այդ խմբին են պատկանում կազմիումը, սենիումը, սիլինը, թելուրը, գալիումը, գերմանիումը, ինդիումը և տալլիումը:

Վերջերս կատարված հետազոտություններով պարզված է, որ Հայաստանի մետաղային օգտակար հանածոնները պարունակում են վերը թված ցրված մետաղների որոշ տոկոս: Հայտնի է, որ ռենիումը սերտորեն կապված է պղինձ-մոլիբդենային հանքանյութերի հետ, սելինը և թելուրը՝ պղնձային, ոսկու, ծծմբային կոլչեզանի հանքանյութերի, կաղմիումը և ինդիումը՝ կապարի և ցինկի հանքանյութերի, գալիումը՝ ալյումինային հումքի հետ:

Կ Ա Գ Մ Ի Ո Ւ Մ

Կաղմիումը հանդիսանում է ցինկի սուլֆիդ՝ սֆալերիտի ուղեկից տարր և սովորաբար բաց գոմավորված սֆալերիտների մեջ նրա պարունակությունը կազմում է 0,5—1, երբեմն մինչև 5%: Բարձր պարունակությունը բնորոշ է սֆալերիտի տարրերակ պրշիրրամիտի համար: Այսպիսով, կաղմիումի կորպման հիմնական աղբյուր են հանդիսանում ցինկի հարստանայութերը:

Բնության մեջ հայտնի են նաև կաղմիումի ինքնուրույն միներալներ՝ զրինոնկիտ և օտավիտ: Առաջինը կաղմիումի սուլֆիդ է, իսկ երկրորդը՝ կարբոնատ, սակայն այդ երկունց էլ հանդիպում են շատ փոքր քանակություններով և արդյունաբերական նշանակություն ունեցող կուտակումներ չեն առաջացնում:

Կաղմիումը հայտնի է 1817 թ., սակայն արդյունաբերության մեջ լայնորեն սկսել է կիրառվել միայն XX դարի սկզբից:

Կաղմիումն օգտագործում են բարիտներում, գյուրահալէ համածուլվածքներում, կաղմիումի բրոնզներում, ներկերի արտադրության մեջ. մետաղապատման գործում այն փոխարինում է անագին և ցինկին: Պղինձ-կաղմիումային մետաղալարերը օգտագործում են տրոլեյի էլեկտրահաղորդակարերի արտադրության մեջ: Կաղմիումը կիրառվում է նաև առանցքակալային համաձայնվածքներում, ֆոտոէլեմենտներում և ալկալային մարտկոցներում:

Վերջերս փորձեր են կատարվում կազմիումի սուլֆիդը օգտագործելու օգտակար գործողության բարձր գործակից ունեցող արեգակնային մարտկոցների մեջ:

Ա Ե Ն Ի Ռ Ի Մ

Ունիումը, որպես ուղեկից տարր, հիմնականում հանդիպում է մոլիբդենային, երբեմն պղնձի, անագային և վոլֆրամային հանքանյութերում: Ունիումը կորզում են դիսավորակես մոլիբդենային հարստանյութերից, որոնց մեկ տոննան սովորաբար պարունակում է 2—20, նույնիսկ 200—300 գրամ ունիում: Այս մետաղի ստացման լրացուցիչ աղբյուր կարող են հանդիսանալ պղնձ-մոլիբդենային հանքանյութերի պղընձային հարստանյութերը, որոնց ծովման ժամանակ նրանց պարունակող ռենիումը կուտակվում է թորանոթային վառարանների մեջ:

Դեռևս 1869թ. սուս մեծ գիտական Դ. Ի. Մենդելեև նախագուշակել է ռենիում մետաղը և այն նկարագրել է Դիլի-մանգան անվան տակ: 1887թ. սուս քիմիկոս Ս. Կերնը պլատինի մնացորդներից ստանում է ռենիում տարրը:

Սակայն, ռենիումի հայտնագործման տարեթիվը պաշտոնապես համարվում է 1925թ., երբ նոդղակ ամուսինները և ի. Տակեն մոլիբդենիտից, միաժամանակ, նրանցից անկախ, ի. Գրուցեն պիրոլյուզիտից ստանում են ռենիում մետաղը:

Ունիումը իր մի շաբթ հատկություններով մոտ է մոլիբդենին, վոլֆրամին, օսմիումին. տեսակաբար կշիռը 21 է, հալման ջերմաստիճանը՝ 3440° , որոշ թիուների նկատմամբ կայուն է:

Ունիումը շատ թանկ է գնահատվում: Կիրառվում է թիրամուկնեմինտներում պլատինի հետ միասին, թիրմողուզգերում մինչև 2000°C ջերմություն շափելու համար, էլեկտրալամպերի վոլֆրամային թելերը ռենիումապատելու նպատակով, որպես կատալիզատոր պլատինի փոխարեն, ինքնահոս գրիչների ծայրապանակների համաձուլվածքներում: Ունիումը, բացի այդ,

ունի օգտագործման մեծ հեռանկարներ: Համեմատաբար բարձրը էլեկտրոնային առաքման շնորհիվ ունիումը լայն կիրառում կդանի հեռուստատեսության գործում, վակուումային տեխնիկայում, ուղիութեանիկայում: Ունիումն արդեն կիրառվում է Հրթիռներում և տիեզերանավերում տեղադրված նուրբ սարքերում:

Ունիում արտադրող գլխավոր երկրներ են Հանդիսանում ԱՄՆ և Գերմանիան: Հետաքրքրական է, որ Մանսֆելդի գործարանը մինչև 1939 թ. մոլիբենային հարստանյութերից տարեկան արտադրում էր 200 կտ ունիում:

Ունիում ստացվում է նաև ՍՍՌՄ-ում, որն ապահովում է Հայքենական բուռն զարգացող արդյունաբերության տարբեր ճյուղերի պահանջները:

Ս Ե Լ Ե Ն

Սելենը կուտակվում է սուլֆիդային միներալներում, դլխալվորապես սիրիատում, խալկոպիրիտում, գալենիտում, մոլիբդենիտում մինչև $0,02-0,06\%$ և հրաբխային ծագման բնածին ծմբում մինչև 5% քանակությամբ: Սելենի նշմարելի պարունակություն սահմանվում է առանձին շրջանների հողաշերտերում և բույսերում:

Բնության մեջ սելենը հանդիս է զալիս նաև ինքնուրույն միներալների՝ արծաթի, կապարի, պղնձի սելենիդների ձևով, սակայն նրանք ունեն լոկ միներալոգիական նշանակություն և սելենի կորզման աղբյուր լինել չեն կարող:

Սելեն առաջին անգամ ստացել է շվեդացի քիմիկոս Յա. Բերցենիուսը 1817 թ. ծծմբաթթվի արտադրության մնացուկներից:

Սելենի օգտագործման բնագավառները շատ բազմազան են. լայնորեն կիրառվում է համուզվիչների, ֆոտոէլեմենտների, ավտոմատիկ ու աղդանշանային սարքավորումների արտադրության մեջ, ինչպես նաև ֆոտոհեռագրային և հեռուստատեսության գործում:

Սելենը օգտագործում էն ապակու արդյունաբերության մեջ (կարմիր ապակի ստանալու համար), մաղնելիութ-մանգանային համաձուլվածքներում, կառուցուկի արտադրության մեջ (սելենի հավելույթը պահպանում է կառուցուկը մաշումից): Սելենի որոշ միացություններ կիրառություն են գտել բժշկության մեջ (ոհնագենյան ու ուսդիումային բուժման միջոց), այգեգործության մեջ, որպես պատուղների ժանտախտի դեմ պայքարի միջոց և այլն:

Սելենի կորզման աղբյուր են պղնձի ձուլման պրոցեսում ստացվող կողմնակի ու երկրորդական նյութերը, անոդային շլամը. լրացուցիչ աղբյուր են համարվում ծծմբաթթվակալին արտադրության փոշին և սարքավորումների խցերում կուտակվող մնացուկները:

Սելեն արդյունահանող զլիսավոր երկրներն են՝ Կանադան, ԱՄՆ, Շվեդիան: Վերջերս սելենի ինքնուրույն հանքավայր հայտնաբերվել է ԱՄՆ-ի Վայոմինգ նահանգում:

Թ. Ե. Լ. Ո. Բ. Բ

Թելուրն, ի տարբերություն մյուս հազվագյուտ և ցրված տարրերի, առաջացնում է մի շարք ինքնուրույն, թելուրի բավական բարձր պարունակություն ունեցող միներալներ՝ ալթահու (38% ՏԵ), տետրագիմիտ (36% ՏԵ), թելուրորիսմուսիտ (48% ՏԵ) և ուրիշներ, որոնք սովորաբար հանդիսանում են գունավոր մետաղների, բիսմուտի, արծաթի և ոսկու հանքանյութերի ուղեկիցները:

Բացի այդ, թելուրը մինչև 0,01—0,1% խառնուրդի ձևով հանդես է գալիս պղնձի, բաղմամետաղային և պղինձ-մոլիբդենային հանքանյութերում, առանձնապես խալկոպիրիտի, պիրիտի, էնարգիտի, սֆալերիտի և գալենիտի մեջ: Այսպիսով, թելուրի կորզման աղբյուր են հանդիսանում թված հանքանյութերը, ինչպես նաև պղնձի հանքանյութերի վերամշակման և ձուլման մնացորդները, օրինակ՝ շլամը:

Թելուրը հայտնաբերվել է 1782 թ., սակայն լայն կիրառ-

ման մեջ է մտել միայն վերջին երկու-երեք տասնամյակում։ Թելուրը որպես հավելանյութ օգտագործում են կարելների, բարիտների արտադրության մեջ, ցերեկային լույսի լամպերում, կիսահաղորդիչներ սկառաստելիս, կառշուկի արդյունաբերության մեջ։

Թելուրի ստացումը կարելի է կազմակերպել գումավոր մետալների՝ պղնձի, կաղարի և ոսկու հանքանյութերի բազայի վրա՝ հիմնական օգտակար հանածոյի արդյունահանման հետ զուգընթաց։ Թելուրի կորզման համար հետաքրքրություն են ներկայացնում պղնձի հանքանյութերի ձուլման շլամները, որոնցից ԱՄՆ-ում 1943 թ. ստացել են մոտավորապես 100 տոննա թելուր։

Գ.Ա.Լ.Ի.Ռ.Ի.Մ

Գալիումը բնության մեջ ինքնուրույն կուտակումների ձևով հանդիս չի գալիս, նրա ամենաբարձր պարունակությունը (մինչև 2%) սահմանված է Հարավ-Արևմտյան Աֆրիկայի Տսումեր հանքավայրի գերմանիտ միներալում։

Գալիումի պարունակություն խանուրդի ձևով հայտնի է մի շաբթ միներալներում՝ նեֆելինում, մուսկովիտում, բաց գույնի սֆալերիտներում, բռքսիտում, ինչպես նաև քարածխի որոշ տեսակների մոխիրում։

Գալիումի արդյունահանման աղբյուր են հանդիսանում սփալերիտային հարստանյութերը և գալիում պարունակող քարածխներից զաղագեներատորային գաղի ստացման ժամանակ անջատվող փոշին։

Գալիում ստանալու տեսակետից առանձին հետաքրքրություն են ներկայացնում նեֆելինային սինիտները։ Այդ պարների վերամշակման պրոցեսում գալիումը կուտակվում է ալյումինի հետ միասին և հաշվի առնելով նեֆելինային սինիտներից կավաճող ստանալու հնարավորությունները, զուգընթաց կարելի է ստանալ նաև գալիում։

Գալիում տարբն առաջին անդամ նախադուշակել է Դ. Ի.

Մենդելեևը 1869 թ., իսկ 1874 թ. ֆրանսիացի քիմիկոս Լեկոկ-Գե-Բուաբողբանն այն հայտնաբերել է սֆալերիտի բաղադրության մեջ:

Գալիումի ուշագրավ հատկություններից անհրաժեշտ է նշել նրա հալման ցածր ($29,75^{\circ}\text{C}$) և եռման բարձր ($2000-2100^{\circ}\text{C}$) ջերմաստիճանները. այս հանգամանքը թույլ է տալիս գալիումը կիրառել չափող գործիքների և մետալուրգիական պրոցեսները վերահսկող ջերմաշափերի մեջ: Կազմիումի և ցինկի հետ գալիումն օդտագործում են մետաղային գոլորշիներով աշխատող լամպերի մեջ, ազդանշանային և ավտոմատիկ սարքերում, ուղիոլամպերում, բարձր բեկման ցուցիչ ունեցող օպտիկական ապակիներում և հոսանքի համուզվիչներում: Վերջին դեպքում գալիումը հաջողությամբ փոխարինում է սնդիկին:

Գալիումն ունի կիրառման մեծ ապագա, առանձնապես ավտոմատիկայում և էլեկտրոնիկայում:

Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ռ Ի Մ

Գերմանիումը կուտակվում է սովորաբար բազմամետաղային և պղնձի հանքավայրերում, առանձնապես արծաթով, անագով, մկնդեղով հարուստ հանքանյութերում, ինչպես նաև երկաթ-մանգանային նստվածքային հանքանյութերի և քարածուխների մի քանի տարատեսակներում:

Ներկայում գերմանիումի կորզման հիմնական աղբյուր են հանդիսանում սֆալերիտային հարստանյութերը, օրինակ, ԱՄՆ-ի Տրիտեյտ հանքավայրի սֆալերիտային հարստանյութերը պարունակում են $0,01-0,1\%$ գերմանիում, ինչպես նաև Անգլիայի և ԱՄՆ-Մ որոշ քարածուխների մոխիրն ու մուրը:

Ինչպես թելուրի, այնպիս էլ գերմանիումի համար հայտնի են ինքնուրույն միներալներ՝ գերմանիտ, ունյերիտ, արգիրոպիտ, կանֆիլդիտ, որոնց բաղադրության մեջ գերմանիումի պարունակությունը կազմում է 2-ից մինչև 20% : Այդ միներալներից գերմանիտը և ունյերիտը հայտնաբերվել են Կոն-

գոյի Պրինց Հեռավորդի և Հարավ-Արևմտյան Աֆրիկայի Տսումերի Հանքանյութերում, որտեղ արդեն աշխատանքներ են տարվում գերմանիումային Հանքանյութերի մշակման և նրանցից գերմանիումի կորպման ուղղությամբ։ Արգիրողիտ և կանֆիլդիա միներալները սահմանվել են Բոլիվիայի և Ֆրեյբերգի արծաթով ու անագով Հարուստ Հանքավայրերում և նույնպես կարող են ծառայել գերմանիումի կորպման հումք։

Անհրաժեշտ է նշել, որ գերմանիումը գերմանիտ և ունցիերիտ միներալների ձևով չնշին քանակությամբ վերջերս հայտնաբերվել է նաև Հայաստանի բազմամետաղային, պղնձի և պղինձ-մոլիբդենային Հանքանյութերում։

Գերմանիումը 1871 թ. նախագուշակել և նրա հիմնական հատկությունները նկարագրել է Դ. Ի. Մենդելեևը։ Այդ ավագների հիման վրա ավելի ուշ, այն է 1886 թ., տարբեր հայտնադրծել է գերմանացի քիմիկոս Ս. Վինկլերը։

Գերմանիումն օգտագործել են երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին բյուրեղային դեղեկտորներ ստանալու համար։ Գերմանիումից պատրաստած առաջին սարքը եղել է դիոդը։ Այդ էլեմենտն իրենից ներկայացնում է բյուրեղային համուղղիլ և կատարում է նույն դերը, ինչ որ վակուումային դիոդային լամպը, սակայն առաջինի առավելությունը կայանում է նրանում, որ նրա շափերը փոքր են, ծախսվում է շատ փոքր հզորություն և հուսալի է։

1948 թ. օգտագործվում են գերմանիումի տրիոդները, որոնք հայտնի են արանգիստորներ անվան տակ։ Տրիոդները լայնորեն կիրառվում են Հաշվիչ-վճռող մեքենաների կառուցվածքների և առանձին հանգույցների մեջ, էլեկտրոնիկայի մի շարք բնագավառներում։ Տրիոդներն իրենց շափերով փոքր են (եղիպտացորենի հատիկի շափ), աշխատանքի մեջ հուսալի են և նրանց ծառայության ժամանակամիջոցը երկարատև է։ այդ առանձնահատկությունները թույլ են տալիս նշանակալիդ բարեկավումներ մտցնել վերը թված սարքերի մեջ։

Գերմանիումն օգտագործում են նաև ուղիոտեխնիկայում՝ ֆոտոէլեկտրական դործիքներ և փոփոխական հոսանքի ու

Ճիկրուալիքների գերմանիումային Համուղդիչներ պատրաստելու համար, հեռուստատեսության մեջ, ուղարային սարքավորամներում և պոլյարոգրաֆիկ սարքերում։ Գերմանիումի փոքր քանակություններ անհրաժեշտ են ալյումինի, մագնեղիումի, պղնձի, արծաթի, ոսկու հետ հատուկ համաձուլվածքներ ստանալու համար։

Գերմանիումի միացությունները հաջողությամբ կիրառվում են բժշկության տարբեր բնագավառներում, մասնավորապես քնախտը բուժելու համար։

Գերմանիում արդյունաբերող երկրներն են ԱՄՆ, Անգլիան և ՍՍՌԴ։

Հ Ա Գ Ի Ռ Ե

Բնության մեջ ինդիումն ինքնուրույն միներալների ձևով հանդիս չի գտնիս և սովորաբար որպես խառնուրդ մտնում է ցինկի, անագի միներալների կազմության մեջ։ Այդ միներալներում ինդիումի պարունակությունը տատանվում է 0,01-ից մինչև 0,1 %-ի սահմաններում, երբեմն հասնելով մինչև 1 %։ Ինդիումի կորզման հումք են հանդիսանում ցինկի հարստանցութերը։

Ինդիում աւարը հայտնաբերվել է 1863 թ. Ֆրեյբերգ հանքավայրի սֆալերիտում սպեկտրալ անալիզի միջոցով։

Ինդիումն օգտագործում են փոփոխական հոսանքի գերմանիումի համուղդիչներում, թերմոէլեմենտներում, գալվանոմետրերում, լուսարձակների հայելածածկի համար, հեռագիտակների օբյեկտիվների ցանցերում։ Ինդիումը կիրառություն է գտել նաև արագենթաց ինքնաթիւնների շարժիչների առանցքակալային համաձուլվածքներում, մետաղը ապակուն կցող զողվածքներում և ուրիշ բնագավառներում։

Ինդիումի արդյունաբերական արտադրանքն արտասահմանում ստացվում է Կանագայի և ԱՄՆ-ի հանքավայրերի ցինկի հարստանցութերից։

Ինդիումի խառնուրդ պարունակող հանքանյութեր Սովե-

տական Միությունում հայտնի են Հեռավոր Արևելքում, Միջին
Ասիայում, Անդրկովկասում, իսկ արտասահմանում՝ Բոլիվիա-
յում, Կոլումբիայում:

Տ Ա Լ Ի Ո Ւ

Տալիումը բնական պայմաններում առաջացնում է մի շաբթ միներալներ. դրանցից կարելի է թվել լորանդիտը 60%
տալիումի պարունակությամբ, վրբախտը՝ 32% տալիումի
պարունակությամբ, ինչպես նաև մի խումբ հազվագյուտ մի-
ներալներ, որոնք զուգակցվում են մկնղեղի և հազվագեպ ծա-
րիդ-մնդիկային հանքանյութերի հետ: Խառնուրդի ձևով տա-
լիումի որոշ տոկոս հանդիպում է պիրիտում, մարկազիտում,
սֆալերիտում, գալենիտում, երբեմն կալիումով և ոռոքիդիու-
մով հարուստ մնացորդային աղային լուծույթներում:

Տալիումը հայտնի է 1861 թ., սակայն արդյունաբերական
կիրառում է գտել միայն վերջին տասնամյակում: Մետաղն
օգտագործում են առանցքակալային և արծաթի, պղնձի համա-
ծուլվածքներում, էլեկտրալամպերի թելերում որպես վոլֆրամի
հավելույթ, բարձր բեկման ցուցիչ ունեցող օպտիկական ապա-
կիների և ֆոտոէլեմենտների արտադրության մեջ որպես կի-
սահաղորդիչ նյութ և այլն:

Տալիումի սուլֆատը հանդիսանում է խիստ թունավոր
նյութ և օգտագործվում է բժշկության նպատակների համար:

Տալիումի համաշխարհային արտադրությունը տարեկան
կազմում է մոտավորապես 10 տոննա և ստացվում է գունա-
վոր մետաղների վերամշակմանը զուգընթաց: Այդ մետաղն
արտադրող հիմնական երկրներից մեկը Գերմանիան է:

II. ՈՉ-ՄԵՏԱՂԱՅԻՆ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՒՆԵՐ

Բազմաթիվ ոչ-մետաղային Օգտակար հանածոները ժողովրդական տնտեսության մեջ սկսել են օգտագործվել միայն վերջին երեք տասնամյակներում արդյունաբերական, ձանապարհային, բնակարանային շինարարության, վերամշակման քիմիական եղանակների տարածման, գյուղատնտեսության մեջ հանքային պարարտանյութերի պահանջների աճի և, վերջապես, հնարավոր գեպքերում թանկարժեք մետաղը ոչ-մետաղային հումքի արտադրանքով փոխարինելու անհրաժեշտության կապակցությամբ:

Ոչ-մետաղային օգտակար հանածոներից շատ շատերը հումք են հանդիսանում արդյունաբերության ամենատարրեր ճյուղերի համար: Այսպես օրինակ՝ կվարցային ավազը համարվում է բնական հղկող նյութ և ապակու հումք, անդեղիտնությալտը թթվակայուն հումք և շինանյութ, բարիտը՝ քիմիական արդյունաբերության հումք և միևնույն ժամանակ հիանալի լցանյութ և այլն:

Սովորական Հայաստանը շատ հարուստ է ոչ-մետաղային օգտակար հանածոների ամենաարագմաղական տեսակներով: Դրանց շարքում հանդիպում են այնպիսիները, որոնք բնորոշ են միայն մեր ոեսպուրլիկայի համար՝ հրաբխային տուֆերը, օնիքսանման մարմարը և ուրիշներ:

Համառոտակի կանգ առնենք Հայաստանում տարածված ոչ-մետաղային առանձին օգտակար հանածոների բնութագրքը՝ մանապավառների և հանքավայրերի նկա-

բագրման վրա: Մետաղային օգտակար հանածոների հետ
մեկտեղ ոչ-մետաղայինների նկարագրությունը թույլ կտա
բնթերցողին ավելի լրիվ պատկերացում ստանալ Հայաստանի
ընդերքի հարստությունների մասին:

1. ՀՈՒՄՔ ՔԻՄԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Բ Ա. Բ Ի Տ

Բարիտը բարիումի բնական սուլֆատն է, որը պարունա-
կում է 65,7% BaO և 34,3% SO₄: Բարիտի տեսակաբառը
կշիռը բարձր է (4,3—4,6), այդ իսկ պատճառով նրան հաճախ
անվանում են ծանր շպատ:

Բարիտը մեծ դժվարությամբ լուծվում է միայն ծծմբային
թթվում, մյուս բոլոր թթուները նրա վրա չեն ազդում:

Բարիտի օգտագործումը արդյունաբերության տարբեր
բնագավառներում պայմանավորվում է նրա ֆիզիկա-քիմիա-
կան հատկություններով: Այդ հատկություններից պետք է թվի
նրա բարձր տեսակաբար կշիռը, քիմիական իներառությունը,
մաքուր տարբերակների սպիտակ գույնը և այլն:

Բարիտը մանր աղացած, փոշու ձևով օգտագործվում է
որպես լցանյութ ռետինի, թղթի, մոմաթի, խցանալաթի,
պատառների, կոճակների և արհեստական փղոսկրի, ապակու
որոշ տեսակների, արծնի և ջնարակի, ինչպես նաև հանքային
ներկերի ու լաքերի արտադրության մեջ:

Մանրացրած բարիտից ստանում են լիթոպոն, իսկ վեր-
շինս իր հերթին ծառայում է լիթոպոնային շպարների հումք:

Նավթային արդյունաբերությունն աղացած բարիտն օգ-
տագործում է կավային լուծույթներում որպես ծանրացնող
նյութ, այդ լուծույթներն անհրաժեշտ են խորը հորատման ժա-
մանակ գաղա-նավթային ժայթքումը և հորատանցքերի փր-
լուզումը կանխիլու համար:

Քիմիական արդյունաբերությունը բարիտից ստանում է

Նրա քլորային, ազդտաթթվային, ածխաթթվային միացությունները, որոնք կարեոր նշանակություն ունեն արդյունաբերության տարրեր ճյուղերի համար: Բարիումի քլորիդն օգտագործում են գյուղատնտեսության մեջ վնասատուների դեմ պայքարելու համար, բարիումի կարբոնատը կիրառում են օպտիկական ապակիների արտադրության, իսկ բարիումի օքսիդը՝ շաքարի արդյունաբերության մեջ:

Բարիումի պրեպարատներն անհրաժեշտ են բժշկության, ունտգենոտեխնիկայի մեջ, կաշվի և տեքստիլ արդյունաբերության համար:

Անգույն բարիումի թափանցիկ տեսակները վերջին տարիները կիրառում են գտել օպտիկայում, որտեղ նրանք փոխարինում են օպտիկական լիվարցին և ֆլուորիտին:

Հայկական ՍՍՌ-ում հայտնի են բարիումի շաբք հանքավայրեր, որոնցից ամենառավագույնը վաճառվում է Ալավերդու շրջանում:

Ուշիլիսայի բարիումի հանքավայրը գտնվում է Ալավերդի կայարանից 12 կմ դեպի հյուսիս:

Բարիումի հանքավայրը տեղի բնակիչները հայտնաբերել են գեռես 1905 թ.: Հանքանցութերն այն ժամանակ մասամբ մշակել են ֆրանսիական արդյունաբերողները: Հետագայում այդ հանքավայրը մատնվել է մոռացության և միայն 1937 թ. այնտեղ վերսկսվել են հետախուզական, ապա հանքանցութերի մշակման աշխատանքները:

Բարիումի հանքամարմիններն այստեղ ներկայացված են երակներով, հանքանցութերը բարձրորակ են և արդեն մշակված են: Ուշիլիսայի բարիումի սպառողը հանդիսանում էր Քութահսիի լիթոպոնի գործարանը:

Ախրալայի հանքավայրը գտնվում է Ախթալա կայարանից 2 կմ դեպի հյուսիս-արևմուտք: Այս հանքավայրի ավելի մասը բամասն նկարագրությունն արդեն բերված է «կապար և ցինկ» գլխում և անհրաժեշտ է նշել, որ բազմամետաղների հետ մեկտեղ այստեղ կան նաև բարիումի զգալի հանքակուտակներ:

Ախթալայի հանքանցութերը կոմպլեքսային են՝ բարիու-

քաղմամհտաղային և նրանց արդյունահանումը կատարվում է միասին:

Ախթալայի բարիտը կարող է որակյալ հումք ծառայել արդյունաբերության տարրերի ճյուղերի պահանջների համար:

Այորու հանհավայրը Ալավերդու շրջանի համանուն գյուղի մոտ է, ներկայացված է կվարց-բարիտային երակներով. Հանքանյութի որակով ու պաշարներով զիջում է մյուս հանքավայրերին:

Բարիտի հանքավայրեր և երկակումներ հայտնի են նաև Քարինչ, Կողբ, Կոթիգյուղ, Բջնի, Արզական գյուղերի մոտ, սակայն նրանք իրենց չափերով և արդյունաբերական նշանակությամբ մեծ չեն:

Ս Մ Մ Բ Ա Յ Ի Ն Կ Ո Ւ Զ Ե Դ Ա Ն

Ծծմբային կոլշեղանը կամ պիրիտը դասվում է տարածված միներալների շարքը և հանդիպում է ամենատարբեր լեռնային սպարներում ու հանքավայրերում: Պիրիտի բաղադրամաներն են երկաթը և ծծումբը. առաջինի պարունակությունը կազմում է 46,64%, իսկ երկրորդինը՝ 53,36%:

Ծծմբային կոլշեղանը հանդիսանում է ծծմբական թթվի ատացման հումք: Ծծմբական թթուն իր հերթին օգտագործվում է ժողովրդական տնտեսության ամենատարբեր բնագավառներում:

Ծծմբական թթվի օգնությամբ ֆոսֆորիտների վերամշակումից ստանում են սուպերֆոսֆատ, որը հանդիսանում է գյուղատնտեսության մեջ լայն կիրառելի պարարտանյութ:

Ծծմբական թթուն հիմնականում օգտագործվում է քիմիական, նավթային, մետալուրգիական, մետաղամշակման, ածխի և կոքսա-քիմիական արդյունաբերության մեջ:

Բնական պայմաններում ծծմբային կոլշեղանը հանդիս է գալիս թե՛ ինքնուրուցն հանքավայրերի և թե՛ առանձին հանքամարմինների ու խառնուրդի ձեռվ գունավոր մետաղների հանքավայրերում:

Ծծմբային կոլչեղանի խոշորագույն հանքավայրեր հայտնի են Իսպանիայում, Ճապոնիայում, Նորվեգիայում և Կանադայում: Սովետական Միությունում այդ տիպի հանքավայրերը լայն տարածում ունեն Ուրալում:



Նկ. 7. Պիրիտի լավ ձեռավորված բյուրեղներ. բնական մեծության $\frac{1}{2}$ լուսանկար Գ. Փիջյանի

Հայկական ԱՍԲ-ում ծծմբային կոլչեղանը նույնպես տարածված օգտակար հանածո է և առաջացնում է արդյունաբերական որոշ նշանակություն ունեցող ինքնուրույն հանքավայրեր: Բացի այդ, ծծմբային կոլչեղանը խառնուրդի ձևով մշտապես գտնվում է ուսուպուբլիկայի պղնձային, բազմամետաղային, պղինձ-մոլիբդենային և այլ հանքավայրերում:

Այստեղ համառոտակի կանդ կառնենք ծծմբային կոլչեղանի հանքավայրի նկարագրության վրա: Այդ հանքավայ-

ըերի թվին են պատկանում Տանձուտը, Զիբուխլում, Սիսիմա-
դանը, Անտոնեսկին և մի շարք երեակումներ:

Տանձուտի հանճավայրը գտնվում է Կիբովականից 12 կմ
դեպի Հարավ-արևմուտք, Տանձուտ գետի վերին հոսանքում:

Հանքավայրը հայտնի է XIX դարի վերջերից և 1903 թ.
մինչև 1917 թ. շահագործվել է մասնավոր ձեռնարկատեր Նո-
բելի կողմից:

Հետազում, 1925—1926 թթ. այս հանքավայրը մշակ-
վել և հետախուզվել է Ալավերդու կոմբինատի կողմից, որոշ
ընդհատումներով այդ աշխատանքները շարունակվել են մինչև
1933 թ.:

Տանձուտի հանքանյութերի կոմպլեքս օգտագործման հար-
ցերը պարզեցու նպատակով 1951—1952 թթ., ապա 1956 թ.
այստեղ կատարվել են մանրամասն երկրաբանական հետա-
խուզական աշխատանքներ:

Տանձուտի ծծմբակուլեղանային հանքայնացումը ներկա-
յացված է հոծ մանրահատիկ պիրիտից կազմված սսպնյակածի
հանքամարմիններով: Բացի պիրիտից, հանքանյութերում փոքր
քանակությամբ հանդիպում են պղնձի, ցինկի, կապարի մինե-
րալներ և բնածին ոսկի:

Ներկայումս պարզված է, որ Տանձուտի հանքանյութերը
ներկայացնում են կոմպլեքս հետաքրքրություն. Հանքանյու-
թերի մշակման պրոցեսում, բացի ծծմբային կոլշեղանից,
հնարավոր է կորպել նաև ազնիվ և հազվագյուտ մետաղներ,
որոնք խառնուրդի ձեռվ գտնվում են պիրիտի մեջ:

Հանքավայրի տեղադրման բարեհապատ տնտեսական
պայմանները, հանքանյութերի հաշվված պաշարները, նրանց
մշակման եղանակները, հանքանյութերում արժեքավոր խառ-
նուրդների առկայությունը այս հանքավայրը դարձնում են
հետանկարային և թույլ են տալիս անցնել հանքավայրի կոմպ-
լեքս շահագործմանը: Տանձուտի հանքանյութերի սպառով
կհանդիսանա Ալավերդու պղնձա-քիմիական կոմբինատը:

Զիբուխլու հանճավայրը գտնվում է Ստեփանավան քա-

դաքից 20 կմ հեռավորության վրա, դեպի արևմուտք, Չորնաչագ գետակի միջին հոսանքում:

Հանքավայրը հայտնաբերվել է XX դարի սկզբներին՝ 1916 թ. այստեղ նախնական հետախուզական աշխատանքներ են կատարել ֆրանսիական կոնցեսիոներները։ Հետագայում հանքավայրը մատնվել է մոռացության և միայն 1930 թ., ծծմբային կոլեղանի պահանջի աճի կապակցությամբ, այստեղ վերսկսվել են հետախուզական աշխատանքներ։

Հանքավայրը պարբերաբար՝ 1932—1933 թթ., 1953—1954 թթ. և 1957 թ. ուսումնասիրվել է գեոֆիզիկական եղանակներով ու երկրաբանական հետախուզական մանրամասն աշխատանքներով։

Հանքայնացումն այստեղ հանդիս է գալիս ուսպնյակաձև մարմինների, երակի կաշ-ցանավոր զոնաների ձևով։ Հանքանյութերում պիրիտի հետ միասին խառնուրդի ձևով հանդիպում են խալկոպիրիտ, սփալերիտ, գալենիտ։

Միներալոգիական և գեոքիմիական ուսումնասիրությունները ցուց են տվել, որ հանքանյութերը պարունակում են նաև մի շաբաթ արժեքավոր մետաղներ։

Հանքանյութերը հիշտությամբ հարստացվում են, ընդուրում ատացվում է պիրիտային հարստանյութ ծծմբի 47—48 % պարունակությամբ։ Պիրիտային հարստանյութերը հետաքրքրություն են ներկայացնում ծծմբական թթու ստանալու և զուգընթաց հազվագյուտ մետաղներ կորզելու համար։

Այսպիսով, Չիբովստի հանքավայրը Տանձուտի հետ միասին ներկայացնում են ոհալ հումքային բազա ոհսպուրպիկայի ծծմբական թթվի արդյունաբերության ընդլայնման և հազվագյուտ ու ցրված արբերի արտադրության նոր ճյուղերի ստեղծման համար։

Սիսիմադանի և Անտոնեսկոյե հանքավայրերը գտնվում են Կիրովականի շրջանում, Դեբեդի աջ վտակ Սիսիդեսի միջին և վերին հոսանքներում։

Հանքավայրերը նախկինում հետախուզվել և մասամբ շահագործվել են։ Հանքայնացման շափերը փոքր են։ Հանք-

նյութերը ներկայացված են ծծմբի կոլշեղանով, խալկոպիրիտով և հեմատիտով, որոնք պարունակող ապարներում առաջացնում են տձեւ հանքակուտակներ, ոսպնյակածեւ մարմիններ և երակներ: Հանքայնացումը հանքավայրերում բաշխված է անհավասարաշափ և այդ հանդամանքը բնականորեն դժվարացնում է նրանց շահագործումը:

Թված հանքավայրերի և այս շրջանում տարածված մի շարք այլ երեսակումների հեռանկարները ծծմբային կոլշեղանի պարունակության և հանքայնացման մասշտաբների տեսակետից սահմանափակ են:

Ծծմբային կոլշեղանի զգալի պաշարներ կան նաև Ալավերդու և Գափանի հանքավայրերի հմբում: Այսպես, օրինակ, Ալավերդու հանքավայրի տուանձին հորիզոններում պարածված են հիմնականում ծծմբի կոլշեղանից կազմված հանքամարմիններ, որոնք դեռևս մշակված չեն: Ծծմբային կոլշեղանը Շամլուղի, Ղափանի, Ախոյալայի հանքանյութերի հիմնական բաղադրամասերից մեկն է և կարող է մշակվել այդ հանքանյութերի հետ զուգընթաց: Ներկայումս վերը թված հանքավայրերում հանքանյութերի հարստացման պրոցեսում պիրիտը կամ ծծմբային կոլշեղանն անջատվում է հիմնական հարստանյութից և հանդիսանում է արտադրության հեռացուկ: Հաշվի տոնելով պիրիտի նշանակությունը ծծմբաթթվի արտադրության համար և նրա մեջ արժեքավոր տարրերի պարունակությունը, միջոցառումներ են ձեռք տոնվում պիրիտի հարստանյութ ստանալու և օգտագործելու ուղղությամբ:

Ք Ա Բ Ա Դ


Բնական պայմաններում աղերն առհաստարակ հանդիս են գալիս տարրեր քիմիական կազմությամբ: Նրանցից ամենակարեղբներն են՝ հալիտը (քարաղ կամ կերակրաղ), սիլվինը, կարնալիտը, տեհնարդիտը և միքրաբիլիտը:

Աղերի քիմիական կազմության մեջ մտնող հիմնական տարրերն են՝ քլորը, նատրիումը, կալիումը և մագնիսիումը:

Հալիտի ֆորմուլան է NaCl , սիլվինինը՝ KCl , կարնալինը՝ $\text{MgCl}_2 \cdot 6\text{H}_2\text{O}$, տենարդիտինը՝ Na_2SO_4 և միքարիդիտինը (գլաուբերյան աղ)՝ $\text{Na}_2\text{SO}_4 \cdot 10\text{H}_2\text{O}$:

Մենք այստեղ կանգ կառնենք միայն հալիտի կամ քարաղի նկարագրության վրա, քանի որ Հայաստանում հայտնարերված են այդ աղի հսկայական պաշարներ:

Աղերի խոշոր կուտակումներն ունեն նստվածքային ծագում և առաջանում են հիմնականում փակ ավազաններում: Բայց առաջացման ժամանակի աղային հանքավայրերը կարող են լինել բրածո և ժամանակակից: Մերձերևանյան հանքավայրը համարվում է բրածո:



Նկ. 8. Քարաղի լավ ձեռագորգած բյուրեղներ. բնական մեծության ^{1/5}

Քարաղի կիրառման բնագավառները շատ բազմազան են. նրա $60-65\%$ օգտագործվում է կենցաղում, սննդի արդյունաբերության մեջ՝ պահածոների, յուղ-պանրի, հրուշակեղենի արտադրությունում: Տեխնիկական աղը գլխավորապես օգտա-

գործվում է քիմիական արդյունաբերության մեջ, որտեղ այն հումք է ծառայում նատրիում և քլոր պարունակող միացություններ, հատկապես սողա, քլոր, աղաթթու, նաշագիր, կալցիումի քլորիդ և այլ նյութեր ստանալու համար: Բացի այդ, քարաղը կիրառվում է ներկերի, անտառաքիմիական, ազոտային, տեքստիլ, դեղորայքի, մետաղաձուլական, կաշվի մշակման, նավթի, պլաստիմասսաների, օրգանական նյութերի, օճառի արտադրության մեջ: Հայտնի է քարաղի կամ նրա վերամշակումից ստացված նյութերի արտադրության մեջ կիրառման ավելի քան 1500 բնագավառ:

Մերձեւեանցյան նարազի հանճավայրը ունի արդյունաբերական խոշոր նշանակություն: Քարաղը լայն չափով կօգտագործվի ուսուցչիկացի արագ տեմպերով զարգացող արդյունաբերության և զյուղատնտեսության ամենատարբեր ճյուղերում:

Քարաղի առկայության առաջին նշանները, մերձերեանցյան շրջանում, հայտնաբերվել են 1949 թ. հորատման միջոցով: Գիտու 1940 թ. այդ շրջանում ուսումնասիրություններ կատարելու ժամանակ Ա. Պ. Գեմլյուսինը կարծիք է հայտնել խորքում աղի առկայության մասին:

Քարաղի առաջին իսկ շերտերի հայտնաբերումից հետո երեսնյան ավագանի տարրեր տեղայանակում սկսեցին հետախուզական հորատման աշխատանքներ քարաղի հանքավայրի տարածման սահմանները և պաշարները որոշելու նպատակով: 1950—1955 թթ. կասարած երկրաբանական աշխատանքների շնորհիվ պարզվել է, որ քարաղի հանքավայրի գրաված մակերեսը շատ մեծ է և այն տարածվում է Ավան գյուղից գեպի հարավ-արևմուտք մինչև Հոկտեմբերյանի շրջանը մոտավորապես 60 կմ և երեսն քաղաքից գեպի հյուսիս-արևելք մինչև Նուռնուս գյուղը մոտավորապես 25 կմ: Բազմաթիվ հորատանցքերի ավլաներով քարաղի շերտերի ընդհանուր կարողությունը տատանվում է 15-ից մինչև 600 մ, քարաղի այս խոշորագույն հանքավայրի պաշարները հսկայական են և հաշվում են մի քանի տասնյակ միլիարդ տոննաներով:

Քարաղի անսպառ պաշտրները և ամենահարուստ շերտերից մշակումը կարող են բավարարել ոչ միայն Հայկական ՍՍՌ, այլև Հարեան ռեսպոբլիկաների տեխնիկական և սննդի պահանջները:

Օգտագործման տեսակետից բարենպաստ պայմաններում է գտնվում Ավանի Հանրավայրը: Այստեղ աղի արդյունահանումը կազմակերպելու նպատակով փորվում են Հանրահորեր: Մոտ ապագայում Ավանի քարաղի Հանրավայրը կհանձնվի շահագործման և տարեկան երկրին կտա 200—250 հազար տոննա քարաղ:

Քարաղն իր բաղադրությամբ երկու տեսակի է: Բարձրութակը դիտվում է որպես կերակրաղ, իսկ ոչ մաքուրը, ցածրութակը՝ տեխնիկական աղ արդյունարերության մի շարք ճյուղերում օգտագործելու համար:

Անհրաժեշտ է նշել, որ ռեսպուրիկայի արդյունարերության զարգացման հետ զուգընթաց կընդլայնվի քարաղի արդյունահանումը և համապատասխանարար կաձի ժողովրդական տնտեսության ամենատարբեր բնագավառներում նրա օգտագործման նշանակությունը:

Այսպիսով, մեր ռեսպուբլիկան կհարստանա լեռնահանքային արդյունարերության և մի խոշոր ձեռնարկությունով:

Յ Ռ Ս Ֆ Ո Ր Ի Տ

Ֆոսֆորիտը կալցիումի ֆոսֆատից կազմված նստավածքային ապար է: Ֆոսֆորիտների քիմիական բաղադրությունն անկայուն է և կախված է նրանց մեջ պարունակվող այլ խառնուրդների քանակությունից: Բայց P_2O_5 -ի պարունակության տարրերում են աղքատ ($12-18\%$), միջին որակի ($18-24\%$) և հարուստ ($24\%-ից ավելի$) Հանրանյութեր:

Խառնուրդի ձեռով ֆոսֆորիտներում սովորաբար հանդիպում են՝ կվարց, կալիառյութ, գլատւկոնիտ, պիրիտ, երկաթիքսիդներ, կալցիտ, օրդանական նյութ և այլն:

Յոսֆորիտների օգտագործման հիմնական բնագավառը պյուղատնտությունն է (ֆոսֆատային պարարտանյութեր): Բնդ որում ֆոսֆատային հումքի վերամշակումը կատարվում է տարբեր եղանակներով՝ մեխանիկական (ֆոսֆորիտային ալյուր), քիմիական (սուափերֆոսֆատ, ամոֆոս և ուրիշներ) և չերմային (թերմոֆոսֆատ): Յոսֆատային հումքի զգալի մասը վերամշակվում է սուափերֆոսֆատի:

Յոսֆորիտները փոքր քանակությամբ օգտագործվում են մետալուրգիական, լուցկու, ուաղմական և քիմիական արդյունաբերության տարբեր ճյուղերում:

Հաջաստանում ֆոսֆորիտների հանքավայրերն իրենց մասշտաբներով այնքան էլ մեծ չեն: Առանձին շերտերի կամ շերտիկների ձևով ֆոսֆորիտներ հանդիպում են Ռեծի լեռնաշրջայում, Եղեգնաձորի շրջանի Արենի և Գնիշիկ գյուղերի շրջանում տարածված հնագույն՝ պալեոլոցյան նստվածքային շերտախմբերի կազմում:

Ուժի լեռնաշրջայի պալեոլոցյան նստվածքներում ֆոսֆորիտների շերտերի քանակությունը տատանվում է 3—4-ից մինչև 10—15-ի սահմաններում, առանձին շերտերի կարողությունը կազմում է՝ 0,03—0,30 մետր:

Արփա գետի ավազանում ֆոսֆորիտարեր շերտերի քանակությունը կազմում է 15—18, իսկ առանձին շերտերի կարողությունը՝ 0,03—0,10 մետր. Ֆոսֆորիտային շերտերի մի մասն անբնական տարածվում է մի քանի կիլոմետր, իսկ մյուսը արագ սեպաձև մարում է:

Յոսֆորիտների փոքրաքանակ շերտեր հանդիպում են նաև Արարատ կայարանի մոտ. այդ նույն շերտերը տարածվում են գետի հարավ-արևմուտք՝ Նախիջևանի ԱՍՍՌ տերիտորիայում:

Յոսֆորիտների որակը ցածր է. P_2O_5 -ի պարունակությունը հատիկավոր և սապնյակաձև ֆոսֆորիտներում տատանվում է տոկոսի տասնորդական մասերից մինչև 10—12%, միջինը կազմում է 5%: Բուն սապնյակաձև անշատումներում այդ

պարունակությունը բարձր է և հավասար է 16—20 %, իսկ ֆոսֆորիտային հատիկներում՝ 28—30 %:

Ֆոսֆորիտային շերտային կուտակներում P_2O_5 -ի պարունակությունն ավելի բարձր է և տատանվում է 10—29 % սահմաններում, միջինը՝ 20 %:

Ֆոսֆորիտային շերտակից, ըստ հումքի որակի և հանքանյութերի կարողության, որոշ հետաքրքրություն է ներկայացնում Սրարատ կայարանից 7 կմ դեպի արևելք գտնվող տեղամասը, որտեղ ֆոսֆորիտային գլխավոր շերտը տարածվում է 300 մետր և միջին հաշվով պարունակում է 22,5 % P_2O_5 :

Բնդշանուր առմամբ, Հայաստանի ֆոսֆորիտային հումքի պաշարները փոքր են, օգտակար հանածոյնի պարունակությունը ցածր է, սակայն փորձերը ցույց են տվել, որ ֆոսֆորիտներից կարելի է ստանալ արդյունաբերության պահանջները բավարող հարստանյութ:

Միենույն ժամանակ, հաշվի առնելով ֆոսֆորիտների կարեսը գերը զյուղատնտեսության մեջ, պետք է երկրաբանական որոնողական աշխատանքներ կազմակերպել ավելի երիտասարդ (կավիճ, ստորին երրորդական) հասակի նստվածքային ապարներում ֆոսֆորիտային հումք հայտնաբերելու ուղղությամբ, ինչպես նաև ուշադրություն դարձնել երկաթի որոշ հանքավայրերի (Կապուտան, Կամաքար) ուսումնասիրմանը, որտեղ երկաթի հանքաքարին ուղեկցում է ֆոսֆորով հարուստ ապատիտ միներալը: Ապատիտը ֆոսֆորիտի հետ միասին հումք կծառայի ռեսպուլիկայում բարձրորակ պարարտանյութերի արտադրություն ստեղծելու համար:

2. ԲՆԱԿԱՆ ՇԻՆԱՆՅՈՒԹԵՐ ԵՎ ԼՅԱՆՅՈՒԹԵՐ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՄԱՐ

Ա. Ն Գ Ե Զ Ի Տ Ե Վ Ա Զ Ա Լ Տ

Անդեղիտաները, բազալտները և անդեղիտա-բազալտները պատկանում են հրաբիտային ծագման ապարների խմբին:

Նրանք միմյանցից տարբերվում են իրենց քիմիական էազմությամբ և, հիմնականում, սիլիկացողի պարունակությամբ:

Անդեղիտն օգտագործվում է հիմնականում որպես թթվակայուն նյութ, անդեղիտի մաքրությ փոշու ձեռվ հանդիսանում է թթվակայուն բհտոնի, ցեմենտի և ծեփանի հումք: Անդեղիտի



Նկ. 9. Բաղալտի սյունաձեւ անջատումներն Արդնու մոտ
լուսանկար Ս. Կարապետյանի

որոշ տարբերակներն օգտագործում են թղթի արդյունաբերության մեջ, փայտանյութի մշակման համար:

Անդեղիտը լայն կիրառում ունի որպես շինանյութ:

Բաղալտը (չեղուտ քարը) օգտագործում են ձուլման և այդ

ձուլված զանգվածից զանազան իրեր պատրաստելու համար, որոնք կիրառում են գտել էլեկտրատեխնիկայում (մեկուսիշներ), քիմիական արդյունաբերության, շինարարության, ապակու արտադրության մեջ:

Բազալտները, անդեղիտա-բազալտները և անդեղիտները տարածված են ՍՍՌՄ բազմաթիվ շրջաններում, սակայն ամենալայն տարածումը նրանք ունեն Հայկական ՍՍՌ-ում, որը համարվում է երիտասարդ հրաբխային գործունեության մարզ:

Սովորական Հայաստանի սահմաններում այդ հրաբխային ապարների տարածումը հասնում է այնպիսի չափերի, որ առանձին հանքավայրերի՝ մասին նույնիսկ խոսք չի կարող լինել: Նրանք գրավում են հարյուրավոր քառակուսի կիլոմետր տարածություններ և փաստորեն ներկայացված են անսպառ պաշարներով:

Անդեղիտների, անդեղիտա-բազալտների և բազալտների ծածկոցները երրորդական և չորրորդական հասակի են և կապված են հրաբխային գործունեության որոշակի փուլերի հետ:

Հայկական ՍՍՌ-ի բոլոր շրջաններում եւ կա ապարների այդ խումբը:

Հրաբխային լավաները, որոնք հիմնականում կազմված են անդեղիտներից և բազալտներից, Գորիսի շրջանում գրավում էն 1000 քառ. կմ տարածություն, Սիսիանի շրջանում՝ 1400 քառ. կմ, Ազիզբեկովի շրջանում՝ 700 քառ. կմ, Եղենաձորի շրջանում՝ 300 քառ. կմ, Բասարեշարի շրջանում՝ 500 քառ կմ, Մարտունու շրջանում՝ 800 քառ. կմ, Կամոյի շրջանում՝ 800 քառ. կմ, Արովյանի շրջանում՝ 850 քառ. կմ, Վեդու Հրազդանի, Սևանի, Աշտարակի, Էջմիածնի, Հոկտեմբերյանի, Ապարանի, Թալինի, Արթիկի, Ստեփանավանի, Կալինինոյի, Ալավերդու, Կիրովականի շրջաններում՝ 300-ից մինչև 800 հավելի քառ. կմ տարածություն:


Բազալտների և անդեղիտների հսկայական պաշարներ կան նաև մերձերեանյան շրջանում: Այդ ապարներն օգտագործվում են շինարարության, ճանապարհաշինարարության և այլ տեղական պահանջների համար:

Վերջիրո Հայկական ՍՍՌ ժողովանտխորհի կեռնամետալուր-



Նկ. 10. Բազմալորի հովհարքաձև անջատումները Հրազդանի
ձորում
բուսանկար Ա. Կարապետյանի

զիական զիտահետազոտական ինստիտուտում ստեղծված է բազալտի ձուլման լաբորատորիա, որտեղ մշակում են ձուլված բազալտից զանազան շինվածքների՝ խողովակների, ճարտա-



Նկ. 11. Գահավիճած լավաներ Գեղարսակ
ձորում (Արագած)
լուսանկար Ա. Կարապետյանի

գուցիչ ֆաբրիկաների մերհնաների մասերի, քարաղացի գնդերի ստացման եղանակները:

Հայկական ՍՍՌ-ն բազալտների ու անդեղիտների իր հսկայական պաշարներով ունի բռնոր նախապայմանները



Նկ. 12. Հայկական ՍՍՌ բազարտա-անդեղիտային գաշտերի տարածման սխեմատիկ քարտեզ

1. Չորրորդական բազարտներ, անդեղիտա-բազարտներ և անդեղիտներ
2. Երրորդական բազարտներ, անդեղիտա-բազարտներ և անդեղիտներ

արդյունաբերության նոր ճյուղի գարգացման համար: Բազարտները և անդեղիտները պետք է օգտագործվեն ոչ միայն որպես շինանյութ, այլև որպես արժեքավոր հումք արդյունաբերության ամենատարբեր բնակավաններում:

Շինարարական գործում վերը թված ապարները հայտնի են «գրանիտներ» անվան տակ: Ապարների այս խումբը պատկանում է խորքային, բյուրեղային առաջացումներին, որոնք կազմված են կվարցից, դաշտային շպատից, պլագիոկլազից, փայլարներից և այլ միներալներից:

Գրանիտները հիմնականում օգտագործվում են շինարարական գործում. անմշակ բեկորների ձեռվ գրանիտները կիրառվում են ջրաթմբերի, ամբարտակների, պատվարների, երկաթգծային լիցքերի, որպես որմնաքար՝ հիմքերի կառուցման համար: Մանրացրած գրանիտները խճի ձեռվ կիրառվում են ճանապարհաշինարարության, երկաթգծի լիցքի, երկաթբետոնի համար: Տաշած գրանիտները օգտագործում են սալապատման, մայթերի եղբիկների համար: Հղկած գրանիտները՝ շենքերի պատերի ու ճակատի երեսապատման, սանդուղքների աստիճանների, հուշարձանների կառուցման և այլ նպատակների համար:

Բարձր քիմիական կայունություն ունեցող գրանիտի տեսակներից ստանում են թթվակայուն նյութեր:

Խորքային բյուրեղային ապարները մեր ուսուցութիկայում ունեն զգալի տարածում և ներկայացված են գրանողիորիտային խմբի տարատեսակներով:

Անհրաժեշտ է նշել, որ գրանիտոիդային ապարները որպես շինանյութ քիչ են ուսումնասիրված, քանի որ ուսուցութիկան հարուստ է հիանալի բնական շինանյութերի՝ առողի և բազալտի հսկայական պաշարներով:

Գրանիտոիդային ապարները հսկայական տարածում ունեն Մեղրու շրջանում, ինչպես նաև տարածված են Ղափանի, Սիսիանի, Հրազդանի, Կիրովականի, Ալավերդու, Նոյեմբերյանի և այլ շրջաններում:

Ներկայումս գրանիտոիդային ապարները մշակվում են միայն Կիրովականի շրջանի Փամբակի հանքավայրում:

Փամբակի հանքավայրը գտնվում է համանուն կայարանի

մոտ, Հայունի է 1880—1890-ական թվականներից և նախկինում մշակվել է: Որոշ ընդմիջումից հետո շահագործման աշխատանքներն այստեղ վերսկսվել են 1929 թ.:



Նկ. 13. Հայկական ՍՍՌ թթու և ալկալի ինտրուզիվ աղարների
տարածման սխեմատիկ քարտեղ

1. Գրանիտաներ, գրանոզիորիտներ, զիորիտներ, սիենիտներ և այլն
2. Նեֆելինային սիենիտներ

Հանքավայրը մշակվում է բաց բարձանքերով և ստացված արտադրանքն օգտագործվում է ռեսպուբլիկայում: Հանքավայրն ունի գրանիտահատման ֆաբրիկա:

Խորքային բյուրեղային ապարներն այստեղ ներկայացված են գրանոզիորիտով և կվարցային դիորիտով, որոնցից ստաց-

վում են բլոկներ և սալեր երեսապատման, ճուշարձանների՝ սալահատակման և այլ նպատակների համար:

Բացի Փամբակի գրանողիորիտացին Հանքավայրից, խոր-քային ապարների Հսկայական չափերի հասնող զանդվածներ կան ռեսպուբլիկացի տարրեր շրջաններում: Նրանցից անհրաժեշտ է Հիշատակել Բջնի-Արզականի (Հրազդան), Կողըի (Նոյնիբերյան), Հաղպատի ու Շոռձկանի (Ալավերդի), Ծավի ու Գեղու (Ղափան), Մեղրու (Մեղրի) գրանողիորիտացին ու մոնցոնիտային զանդվածները: Այդ զանդվածների շարքում իր մասշտարներով ամենամեծը Համարվում է Մեղրու Հսկայական պլոտառնը, որը գրավում է 800 քառ. կմ-ից ավելի տարածություն, սակայն, ինչպես արդեն նշեցինք, գրանողիորիտային ապարները որպես շինանյութ այնքան էլ մեծ հետաքրքրություն չեն ներկայացնում, քանի որ ռեսպուբլիկան հարուստ է շինանյութերի ավելի բարձրորակ, կարելի է ասել Հազվագյուտ, տեսակներով:

Հ Բ Ա Բ Խ Ա Յ Յ Ե Խ Ե Ա Բ Ա Մ

Հրաբխային ծագում ունեցող առաջացումների տարատեսակների մեջ առանձնահատուկ տեղ են գրավում Հրաբխային խարամները և մոխիրը, որոնք ներկայացնում են բնկորային ապարների մի խումբ: Այդ բնկորային փիրուն նյութերը հանդիսանում են Հրաբխային գործունեության արդյունք և սովորաբ իրենց ծավալով զգալիորեն գերազանցում են արտավիճակը լավաներին:

Հրաբխային արտավիճան ամենանորը նյութը Հանդիսանում է փոշին, կամ մոխիրը, որը բարձրանալով վեր, տեղափոխվել և նստել է մեծ տարածությունների վրա: Ավելի խոշոր մասնիկներ ունեցող նյութերը համապատասխանաբար կրում են՝ ավագներ, լապիլներ և, վերջապես, խարամներ անունը:

Հրաբխային խարամները սովորաբ հանդիսանում զալիս խոշոր չափի մասնիկների, բնկորների ձևով, որոնք ներկայացնում են խիստ ծակոտկեն լավայի կտորներ:

Հրաբխային խարամները և մոխիրը նախկինում արդյունաբերության մեջ կիրառվել են շատ չնշին քանակություններով: Հայտնի է, որ հրաբխային խարամի օգտագործման առաջին փորձերը տվել են դրական արդյունքներ. պարզվել է, որ այդ նյութը հաջողաբար կարելի է օգտագործել որպես հիգրավիկ հավելույթ էժան եղանակով ցեմենտի որոշ տեսակների ստացման հմտաբ:

Պարզվել է նույնպես, որ խարամն ունի աղսորբցիոն հատկություն և կարող է օգտագործվել յուղերի, նավթի, հոսող ջրերի զտման համար: Ճանապարհաշինարարության մեջ խարամը փոխարինում է խճին:

Խարամի հավելույթը (30%) պորտլանդ ցեմենտով բարձրացնում է բետոնի մեխանիկական դիմացկունությունը և դիմագրությունը, հեշտացնում և էժանացնում է պորտլանդ-ցեմենտի ստացման եղանակը:

Այսպիսով, հրաբխային խարամը և մոխիրը որպես լցանյութեր ունեն օգտագործման մեծ հեռանկարներ, առանձնապես շինարարության մեջ:

Հրաբխային ծագում ունեցող այդ նյութերը, բնականարար, տարածված են այն շրջաններում, որտեղ երկրաբանական անցյալում տեղի է ունեցել հրաբխային գործունեություն: Այդ շրջանների թվին է պատկանում նաև Հայկական ՍՍՌ տերիտորիան, որտեղ հրաբխային գործունեության նյութերն ունեն բավական լայն տարածում:


Հրաբխային խարամի և մոխիրի զգալի կուտակումներ կան Ախուրյանի շրջանում, Սևանա լճից գետի հարավ-արևեմուտք գտնվող Գեղամա սարահարթի հրաբխային կոների շրջանում, Զերմուկի մերձակայքում և այլուր: Մշակող հանքավայրերը գտնվում են Երևանի մերձակայքում (Առինչ, Նորք):

Հրաբխային ավազներ տարածված են Աշտարակի, Հրազդանի, Սևանի, Աբովյանի շրջաններում. հանքավայրերից կարելի է նշել՝ Փարպին, Կարբին, Ֆանտանը, Ցամաքաբերդը, Ավանը: Հետաքրքրություն են ներկայացնում Սովետաշենի մոտ տեղադրված հրաբխային ավազները:

Անհրաժեշտ է նշել, որ Հրաբխային խարամը ներկայացնում է արժեքավոր շինանյութ և մոտակա տարիներին անհրաժեշտ է ընդլայնել նրա արտադրությունը:

Կ Բ Ա Ք Ա Բ Ե Վ Տ Բ Ր Տ Ա Վ Ե Բ Ր Տ Բ Ն

Կրաքարը հանդիսանում է տարածված կարբոնատային նստվածքային ապար և կաղմված է 56% CaO -ից և 44% CO_2 -ից: Սակայն կրաքարերը հաճախ պարունակում են սիլի-



Նկ. 14. Կալցիումի կարբոնատի ելունդաձե տնջատումներ՝
բնական մեծության $^{1/2}$
լուսանկար Ա. Աբովյանի

կահողի, երկաթի, մագնեզիումի և ալյումինի օքսիդների խառնուրդ:

Կրաքարի հիմնական բաղադրամասը հանդիսանում է կալ-

ցիւմի կարբոնատը: Որոշ տոկոս մագնեզիումի խառնուրդ պարունակող կրաքարը կոչվում է դոլոմիտացված, իսկ եթե մագնեզիումի կարբոնատը գերակշռում է, ապարը ստանում է դոլոմիտ անունը:

Կալցիումի և մագնեզիումի կարբոնատները տարրեր քանակությամբ կան բոլոր տեսակի նստվածքային ապարներում: Կրաքարը 5—30% կավային նյութի խառնուրդ պարունակելու դեպքում կոչվում է կավախառն կրաքար, իսկ 30—50% դեպքում՝ մերգել:

Կրաքարը լայն կիրառում ունի ժողովրդական տնտեսության տարրեր բնագավառներում՝ շինարարական, մետալուրգիական, քիմիական և ցեմենտի արդյունաբերության մեջ:

Շինարարության մեջ կրաքարն օգտագործում են որպես երևապատման նյութ, շինարարական քար և կիր ստանալու համար: Սովորական կիր ստանալու համար պիտանի են մաքուր կրաքարերը, իսկ հիդրավլիկ կիրը ստացվում է կավախառն կրաքարերից:

Կրաքարը և հատկապես արավերտինը կարևոր դեր են կատարում ցեմենտի արտադրության մեջ. սովորական ցեմենտի համար պիտանի են կավախառն կրաքարերը և մերգելները, պորտլանդ-ցեմենտի համար պահանջվում է ավելի մաքուր կրաքար, որի մեջ մագնեզիումի օքսիդի պարունակությունը պեսար է լինի ոչ ավելի քան 3%, իսկ ծծմբացին անչփորհատինը՝ 2,5%:

Կրաքարերի բարձրորակ տեսակները մետալուրգիայում օգտագործվում են որպես ֆլյուս*: Քիմիական արդյունաբերությունը կրաքարն օգտագործում է սողա, կալցիումի կարբիդ, շպարացին կիր ստանալու համար:

Հայաստանում կրաքարերը լայն կիրառում են զտել կալցիումի կարբիդի արտադրության մեջ: Այդ նպատակների համար պահանջվում է մաքուր, բարձրորակ կրաքար, որի մեջ վնասակար խառնուրդների՝ ֆոսֆորի, ծծմբի, ալյումինի և

* Նյութ, որն ավելացվում է հանքաքարին, նրա ձուլման ջերմաստիճանն իջեցնելու և պրոցեսը հեշտացնելու համար:

մազնեղիումի օքսիդների պարունակությունը կազմում է շնչին տոկոս:

Հայկական ՍՍՌ-ում կրաքարերն ունեն լայն տարածում և գործնականորեն նրանց պաշարներն անսպառ են: Նրանց նշանակությունը ոհսպուբլիկայի ժողովրդական տնտեսության մեջ հսկայական է:

Կրաքարերը հանդիսանում են կալցիումի կարբիդի և նրա ածանցյալների ստացման հիմնական հումքը: Կալցիումի կարբիդն իրեն հերթին հանդիսանում է շատ կարենոր նյութ ոհսպուբլիկայի արդյունաբերության և գյուղատնտեսության տարբեր ճյուղերի համար: Կալցիումի կարբիդից ստանում են գյուղատնտեսության համար անհրաժեշտ ազոտային պարարտանյութ՝ կալցիումի ցիանամիզ:

Կալցիումի կարբիդից ստացված զանազան միացությունները կարենոր նյութ են հանդիսանում պղինձ-ցինկային հանքանյութերի հարստացման գործում, տեխստիլ արդյունաբերության, պլաստմասսաների արտադրության մեջ: Վերջապես, կալցիումի կարբիդի նշանակությունը հսկայական է սինթետիկ կառուցուկի, քացախաթթվի արդյունաբերության համար:

Հայաստանի կրաքարերի մաքուր տարբերակները կարող են օգտագործվել մետալուրգիայում որպես ֆլյուս: Նրանք կարենոր հումք են հանդիսանում բարձրորակ պորտալանդ-ցեմենտի և հիգրավլիկ կրի արտադրության համար:

Հայկական ՍՍՌ կրաքարերի բազմաթիվ հանքավայրերի նկարագրությունն անհրաժեշտություն չի ներկայացնում, այդ իսկ պատճառով կնշենք միայն, որ նրանք դասվում են երկրաբանական տարբեր ժամանակաշրջանների առաջացումներին և ստորաբաժանվում են հետեւալ խմբերի.

1. Հնագույն, պալեոզոյան հասակի կրաքարեր, որոնք տարածված են ոհսպուբլիկայի Մեղրու շրջանում, Բարգուշատի լեռնաշղթայում, Գեղի և Ողջի գետերի ավազաններում:

2. Վերին յուրայի հասակի կրաքարեր՝ Իշեանի, Գորիսի և Ղափանի շրջաններում:

3. Կավճի հասակի կրաքարեր՝ Ապիտակի, Հրազդանի,

Կիրովականի, Սպարանի, Ստեփանավանի, Ամասիայի շրջան-ների հանքավայրեր:

4. Երբորդական հասակի կրաքարեր, որոնք տարածված են Աղիզիկովի և Բասարգիշարի շրջաններում:

5. Չորրորդական հասակի տրավերտիններ, որոնք հայտնի են Հայաստանի բազմաթիվ շրջաններում և ներկայացնում են տաք հանքային աղբյուրների գործունեության արդյունք:

Անցյալում տրավերտիններն օգտագործել են որպես շինանյութ՝ օրինակ, Հաղարձնի վանքը Իջևանի շրջանում կառուցված է տրավերտինից և հիանալի պահպանվել է մինչեւ օրս:

Ներկայումս որպես բարձրորակ հումք տրավերտիններն օգտագործվում են ցեմենտի արտադրության մեջ:

Վերը թված կրաքարային շերտախմբերից և տրավերտիններից արդյունաբերական նշանակություն ունեն և մշակվում են այն հանքավայրերը, որոնք գտնվում են արդյունաբերական կենտրոնների, երկաթուղու մոտ, այսինքն՝ բարենպաստ տընտեսական պայմաններում: Դրանցից անհրաժեշտ է հիշատակել Արարատի, Սպիտակի, Ջաջուռի, Հրազդանի, Իջևանի և այլ հանքավայրերը:

Մ Ա Ր Մ Ա Ր

Մարմարն իրենից ներկայացնում է բյուրեղացած կրաքար, որը հիմնականում կազմված է կալցիումի կարբոնատից:

Մարմարը հեշտությամբ հղկվում է և հղկման աստիճանը կախված է նրա կազմության համասեռությունից: Մարմարի որպես որոշվում է նրա կարծրությամբ, համասեռությամբ, ճեղքավորվածության աստիճանով, հատիկների չափերով և նրանց զուգակցումով:

Մարմարի համար, որը հանդիսանում է գեղազարդող նյութ, կարենը նշանակություն ունի երանգավորումը: Մարմարը լինում է տարբեր գույնի՝ սև, սպիտակ, դեղին, մոխրագույն, կանաչավուն, վարդագույն, կարմրագույն և այլն:

Մարմարի երանգավորումը կախված է նրա մեջ պարու-

նակվող տարբեր տարրերի խառնուրդից. վարդագույն և կարմիր գույնը պայմանավորված է մանգանի և երկաթի, դեղին գույնը՝ սիդերիտի, դարչնագույն-գեղին գույնը՝ լիմոնիտի պարունակությամբ:

Մարմարն առաջանում է կրաքարից, վերջինիս վերաբյուրեղացման հետևանքով:

Մարմարն օգտագործվում է որպես ճարտարապետական, երսապատման, քանդակագործական և գեղազարդող նյութ. Էլեկտրատեխնիկայում՝ էլեկտրաբաշխիչ վահանակներ և, վերջապես, լայն սպառման առարկաներ պատրաստելու համար:

Մարմարի արտադրության մնացուկներն օգտագործվում են մարմարի փշուր, կալցիումի կարբիդ, ածխաթթու և մարմարի ալյուր ստանալու համար:

Հայկական ՍՍՌ հարուստ է մարմարի հիմնալի տեսակներով, Արտօնք իրենց ճարտարապետական, գեղազարդող և ֆիզիկա-տեխնիկական հատկություններով մեծ համբավ են վայելում և Միության մեջ գրավում են առաջնակարգ տեղերից մեկը:

Մարմարի արտադրությունը, ուստիութիւնի ժամանակակիցի ժողովրդական տնտեսության բազմաթիվ այլ ճյուղերի հետ միասին, Հայաստանում ստեղծվել է սովետական կարգեր հաստատվելուց հետո: Մարմարի արդյունահանումը սկսվել է 1930 թ. և հետագա տարիներին այն աստիճանաբար ընդլայնվել է: Ներկայումս Երևանում գործում է մարմարի գործարանը, որն արտադրում է երսապատման և էլեկտրատեխնիկական սալերու վահանակներ, ինչպես նաև լայն սպառման առարկաներ:

Երևանի մի շաբթ խոշոր շենքերի ճարտարապետական ձևավորման համար օգտագործված են Աղամդալովի, Աղվերանի, Խոր-Վիրապի, Արդականի և Արարատի մարմարները:

Մարմարի արժեքավոր տեսակներն ուղարկվում են Միության այլ քաղաքները: Օրինակ՝ Մոսկվայի մետրոյի մի շաբթ կայարաններ երսապատված են Հայկական մարմարով:

Աղվերան-Արգականի հանճարավայրերի խումբը գտնվում է Հրազդան գետի միջին հոսանքում, նույնանուն գյուղերի մոտ:

Աղվերան-Արդականի մարմարի համար բնորոշ են բաց գույները և երանգները՝ սպիտակ, վարդագույն և դեղնավուն, կարմրավուն-սպիտակ, վարդագույն-դեղին, մոխրագույն և այլն:

Մարմարն այստեղ հանդես է գալիս առանձին կուտակումների և տեղամասերի ձևով: Մարմարի հանքավայրերի այս խումբն ունի հումքի զգալի պաշարներ և հանդիսանում է ժարմարի արդյունահանման հիմնական աղբյուրներից մեկը:

Արարատի հանքավայրը գտնվում է Երևան-Բաքու երկաթգծի Արարատ կայարանից գեպի հյուսիս-արևմուտք:

Արարատի մարմարի հղկումից ստացվում են գեղեցիկ մուգ մոխրագույնից մինչև սև գույնի երևասպատման սալեր և սալիկներ: Այդ մարմարն իր մեջ պարունակում է կալցիտի ուկերեղին և սպիտակ երակիկներ, որոնք նախշերի ձևով առանձնահատուկ նրբագեղություն են տալիս մարմարի հըղկված սալերին:

Արարատի մարմարն աշքի է ընկնում իր գեղագարգությամբ և կիրառվում է միայն ճարտարապետական նպատակներով:

Խոր-Վիրապի հանքավայրը գտնվում է Արտաշատից 10 կմ դեպի հարավ-արևմուտք, Խոր-Վիրապի հնագարյան վանքի մոտ:

Մարմարն այստեղ մանրահատիկ է, առանց երակիկների, համասեռ սև գույնի և հեշտ հղկվող: Մարմարը բարձրորակ և նրբագեղ է, սակայն պաշարները սահմանափակ են:

Մարմարի մյուս տարբերակը, որը տարածված է Հայատանի առանձին շրջաններում, օնիքսն է կամ օնիքսանման մարմարը: Այս տարբերակը հանդիսանում է հին մարած հանքային աղբյուրների առաջացում և դասվում է չորրորդական հասակին:

Հայկական ՍՍՌ-ում օնիքսանման մարմարը հանդիպում է Աղամզալու, Արեշշատ և Հանքավան գյուղերի մոտ: Այս նորը երանգավորված, կանաչա-դեղնավուն, կիսաթափանցիկ օնիքսները մեծ հոշակ են ձեռք բերել ոչ միայն Սովետական Միությունում, այլև նրա սահմաններից դուրս:

Աղամզալովի հանքավայրը հայտնի է եղել և մշակվել է Հին դարերում, որի մասին վկայում են այդտեղի օնիբսից պատրաստված հուշարձանները:

Նկարագրված հանքավայրի օնիբսանման մարմարն ունի գեղեցիկ գունախաղ և նըբաշերտ կառուցվածք, որը պայմանավորված է կանաչավուն և դեղնավուն բարակ շերտիկների հերթագայությամբ: Որպես գեղագրուող նյութ Աղամզալովի օնիբսն օգտագործել են Մոսկովյան մետրովի «Կիևյան» կայարանի սյունաշարը երևապատելու համար:

Օնիբսանման մարմարի պահանջը շատ մեծ է, սակայն նրա պաշարները սահմանափակ են, իսկ մշակման աշխատանքները՝ բարդ:

Նման տիպի հանքավայրերից պետք է նշել Հանքավանի օնիբսի կուտակները Հրազդանի շրջանի Հանքավան գյուղի մոտ և Արեցատի հանքավայրը Արտաշատի շրջանի նույնանուն գյուղի մոտ:

Պայմանականորեն մարմարին են դասում նաև Իջևանի շրջանի Կույրիշև գյուղի մոտ տարածված գունավոր կոնգլոմերատները, որոնք հղկված վիճակում ներկայացնում են երեսապատման հիմնալի նյութ:

Պ Ե Մ Զ Ա

Պեմզան (շեշտաքարը) լեռնային ապար է, որը կաղմված է հրաբխային ապակուց (օբսիդիանից) և ունի սպոնդանման կառուցվածք: Պեմզան արտակարգ ծակութեն է, նրա ծավալային կշիռը 1-ից ցածր է և այդ իսկ պատճառով նա լողում է զրի երևին:

Արտաքուստ պեմզան հաճախ սպիտակ է, երբեմն դեղնավուն կամ մոխրագույն, սակայն հանդիպում են նաև ավելի մուգ գույնի տարրերակներ՝ գորշ, գեղին, նույնիսկ սև:

Պեմզայի հալման զերմաստիճանը կախված է նրա քիմիական կազմից, ծակութենությունից և խտությունից և տատանվում է $1300-1400^{\circ}$ սահմաններում: Հայկական պեմզայի որոշ նմուշներ հալվում են 1450° -ի պայմաններում:

Մեծ քանակությամբ պեմզա օգտագործում են շինարարության մեջ. սովորաբար մանր պեմզայից պատրաստում են տարրեր տեսակի բլոկներ: Շաղախի հետ միասին պեմզան օգտագործում են որպես թեթև ծածկույթ: Շինարարության համար բլոկներ պատրաստելու գործում պեմզան ծառայում է որպես լցանյութ:



Նկ. 15. Պեմզայի հանքավայրը
լուսանկար Ս. Կարապետյանի

Պեմզան օգտագործվում է նաև արդյունաբերության տարրեր ճյուղերում՝ որպես զղկանյութ մետաղյա և փայտյա իրեր չղկելու համար, կաշվի, ուտինի, ապակու և ճենապակու արտադրության մեջ:

Աղացած պեմզայից պատրաստում են Հղկաթուղթ, բրիկետներ, ավելացնում են ճիղրավիկ ցեմենտին. օգտագործում են հատուկ տեսակի օճառի արտադրությունում, տնային արնատեսության մեջ մետաղյա իրեր մաքրելու համար:

Հայաստանի պեմզաները ներկայացնում են շրրորդական հրաբխային գործունեության արդյունք: Պեմզայի հանքավայրերը լայն տարածում ունեն մեր ոեսպուրլիկայում: Այդ

Հումքի պաշարներով և որակով Հայկական ՍՍՌ Միության մեջ գրափում է առաջնակարգ տեղ:

Պեմզայի հիմնական սպառողներն են Անդրկովկասի ցեմենտի գործարանները, շինարարական հիմնարկները և Միության տարրեր ձեռնարկությունները:

Սովորական Միության մեջ հայտնի է՝

Անիի պեմզայի հանքավայրը, որը դասվում է գործող հանքերի շարքը, գտնվում է Անի կայարանի մոտ, կենինական քաղաքից 45 կմ դեպի հարավ:

Հանքավայրի շրջանը ներկայացված է տիպիկ հրաբխային ռելիֆով:

Անիի հանքավայրի պեմզայի շերտերն առաջին անգամ հետախուզվել են 1929 թ. Հայաստանի ժողովադատության վեռականության մասին բաժնի կողմից: Հետազոտման 1930—1931 թթ. այստեղ կատարվել են ավելի մանրամասն հետախուզական աշխատանքներ, որոնց հետևանքով պարզվել են հանքավայրի արդյունաբերական հեռանկարները:

Պեմզան բարձրորակ է, բազմաթիվ քիմիական անալիզների ավագանությունը միաժամանակ է:

Անիի պեմզան ներկայումս լայնորեն կիրառում են շինարարության մեջ, նրանից պատրաստում են պեմզա-բլոկներ, պանելներ և շինարարական գետալներ ու շենքերի մասերը:

Պեմզաշենի հանքավայրը գտնվում է Արթիկից 4 կմ դեպի հարավ-արևելուտք:

Այստեղ անդեպիտա-բազալտային ապարների վրա նստած են պեմզայի շերտերը, որոնց կարողությունը կազմում է 8—10 մետր: Պեմզան սպիտակ, մոխրագույն և առանձին տեղամասերում դեղնագույն է: Պեմզան աշքի է ընկնում ամուր կազմությամբ և պիտանի է տեխնիկական նպատակների համար:

Հանքավայրն ունի զգալի պաշարներ և, որպես տեխնիկական պեմզայի հանքավայր, Պեմզաշենը Միության մեջ գրափում է առաջնակարգ տեղ:

Տարբեր տեսակի պեմզայի հանքավայրեր և երկակումներ տարածված են ուսպուբլիկայի ամենատարբեր շրջաններում:

Աշքի ընկնող հանքավայրերից հայտնի են՝ Ախուրյանի (Մուսայելյան-Ջրառատ, Մարմաշեն), Անիի (Մառնաղբյուր), Հրազդանի (Ֆանտան, Քաղսի, Արդական, Բջնի, Մաքրավան), Աբովյանի (Ջրաբեր, Մշուր, Նուռնուս, Քյանքյան, Եղովան, Ակոնք, Էլար, Ավան), Աշտարակի (Արագյուղ), Կիրովականի (Խնձորուտ) շրջաններում։ Համեմատաբար ավելի փոքր կուտակներ տարածված են Ապարանի, Աշտարակի, Գորիսի, Կամոյի շրջաններում։

Հայաստանը, հանդիսանալով երիտասարդ Հրաբխային դործունեության մարզ, առանձնապես հարուստ է պեմզայի հանքավայրերով, որոնց պաշարները կազմում են մոտավորապես 1,5—2 միլիոն խորանարդ մետր։

Հ Ր Ա Բ Խ Ա Յ Ի Ն Տ Ո Ւ Յ

Հրաբխային տուֆը (փուտ-քարը) կազմված է խտացած մանր մասնիկներից և հաճախ պարունակում է կողմնակի ապարների բեկորներ։

Տուֆը հիմնականում օգտագործվում է շինարարության մեջ հիմքի պատերի, միջնապատերի շարվածքի և երեսապատման համար։

Հրաբխային տուֆը լայնորեն կիրառվում է Հայկական ՍՍՌ և Հարեան ռեսպուբլիկաների տարեր տիպի արդյունաբերական և քաղաքացիական կառուցվածքների շինարարության մեջ։

Հրաբխային տուֆի որակը փորձարկված է դեռևս մեր նախնիների կողմից հարյուրամյակներ և հազարամյակներ առաջ բազմաթիվ եկեղեցիների, վանքերի, ճարտարապետական կառուցվածքների և ամրոցների շինարարության մեջ, որոնք լավ պահպանված վիճակում կանգուն են մինչև այժմ։ Տուֆի որակի մասին են վկայում նաև այդ կառուցվածքների վրա դտնվող զարդաքանդակները, որոնք ժամանակի ընթացքում բռնորովին չեն հողմնահարվել և փոխվել։ Հողմահարման նկատմամբ ունենալով բարձր դիմադրություն, տուֆերը հիա-

նալի կերպով պահպանվում են մթնոլորտային տարբեր պայմաններում և դիմանում են տաքությանը, սառնամանիքին, խոնավությանը և փոշուն:

Տուֆերի ֆիզիկա-մեխանիկական հատկությունները կախված են նրանց նյութի կառուցվածքից և խտությունից: Այդքանից ելնելով տուֆերի տեսակաբար կշուր տատանվում է 2,45—2,56 սահմաններում, իսկ ծավալայինը՝ 0,80—1,70 սահմաններում:

Նորմալ տուֆերում ծակոտկենությունը հասնում է մինչեւ 42%: Տուֆերի կարծրությունը հավասար է 3-ի, որի շնորհիվ նրանք հեշտությամբ են ենթարկվում մշակման: Խոնավունակությունը կազմում է 33—35%:

Տուֆը հալվում է 1100—1120°C ջերմաստիճանի պայմաններում: Բացի այդ, տուֆերն ունեն բարձր ցրտադիմացկունություն և ցածր ջերմահաղորդականություն:

Ներկայումս ապացուցված պետք է համարել, որ Հայաստանի տուֆերն առաջացել են հրաբխային ժայթքումների բեկորային նյութից. կիսահալված մոխրի մասնիկները և տարբեր ապարների, լավանների, պեմզանման նյութի մանրագույն բեկորներից կազմված շիկացած հրաբխային ավազի հատիկները նստելով երկրի մակերեսում, հետագայում կապակցվել են և աստիճանաբար սառելով, վերին շերտերի ճնշման ազդեցության տակ խտացել են:

Հայաստանի հրաբխային տուֆերը դասվում են շորրորդական հասակին և առաջացման ժամանակ ըստ երեսվաթին գրավել են մեր ռեսպուբլիկայի տերիտորիայի $\frac{1}{3}$ մասը: Սակայն երկրաբանական պատմության ընթացքում ողողամաշման (երօղիոն) պրոցեսների հետևանքով հրաբխային տուֆի ծածկոցների զգալի մասը քայբայլել և լվացվել է: Այնուամենայնիվ, ներկայումս էլ տուֆերը մեր ռեսպուբլիկայում գրավում են հսկայական տարածություններ և նրանց ծածկոցների մակերեսը համառում է ավելի քան 1000 քառ. կմ:

Տուֆերի համաշխարհային հանքավայրերը տարածված

են հնագույն և ժամանակակից հրաբխային գործունեության շրջաններում:

Տուփեր հայտնի են իսլանդիայում, հսկայական պաշարներ կան Աստղանոյան օվկիանոսի սուրբ Հեղինեի կղզում: Տուփի և լավայի հանքավայրեր տարածված են հտալիայում, Աֆրիկայում՝ Կլիմանչարո հրաբխի շրջանում և Մարտինիկա կղզու վրա, Ալյասկայում՝ Կատմայ, Նոր Զելանդիայում, Կալիֆոռնիա նահանգում և այլն:

Սովետական Միությունում խոշոր հանքավայրեր գտնվում են Արևելյան Սիբիրում, Հեռավոր Արևելքում և Հարավային Օսեթիայում, սակայն այդ հանքավայրերի հումքն իր որակով զիջում է հայկական, հատկապես Արթիկի տուփին:

Հայկական բազմատեսակ տուփերը հիմնականում տարածված են ուսապուրլիկայի արևմտյան մասում և զգալի մակերևս են գրավում Արագած լեռան լանջերին:


Հայկական ՍՍՌ տուփի հանքավայրերը համառոտակենկարագրվում են ըստ նրանց տարածման շրջանների: Բազմաթիվ հանքավայրերի շարքում տուփի մշակման ամենամեծ աշխատանքները տարլում են Արթիկի հանքավայրում:

Արթիկի հոշակալոր տուփի հանքավայրը գտնվում է Արթիկ քաղաքի մոտ, Լենինականից 26 կմ դեպի հարավ-արևելք:

Այս շրջանում տուփերի և տուփաղաշերի գրաված ընդհանուր մակերեսը կազմում է 250 քառ. կմ: Արթիկի տուփի ծածկոցի օգտակար հզորությունը կազմում է 6,5 մետր:

Արթիկի հանքավայրը բաղկացած է մի քանի տեղամասներից, որտեղ բարձանքերում մշակվում է տուփը: Արթիկի տուփի բացառիկ որակը հանրահայտ է. նախ և առաջ այդ տուփը ծակոտեն և թեթև է, դիմացկուն է սառնամանիքի և հողմահարման նկատմամբ: Տուփը համեմատաբար փափուկ է և հեշտությամբ սղոցվում է սովորական սղոցով, կտրվում է դանակով, սոսնձվում է հասարակ ատաղձագործական սոսնձով, մեխավում է և առհասարակ հեշտ է ենթարկվում մշակման:

Տուփը ձախի և ջերմության վատ հաղորդիչ է. հանդիսա-



Նկ. 16. Տուֆալավաների մերկացումը փոքր Բողություն
հբարի ստորառում՝ լուսանկար Կ. Շիրինյանի

նում է հիանալի նյութ հակածրդեալին ծածկի համար։ Տոփի մնացուկները և մանրուքը օգտագործում են հիդրավլիկ ցեմենտի և տուֆարլուների արտադրության մեջ։


Արթիկի տուֆի բոլոր դրական հատկությունները դժվար է թվել, միայն պետք է նշել, որ այն իր ֆիզիկական հատկանիշներով, գույնով և մշակման հեշտությամբ հիանալի շինանյութ է։ Այդ իսկ պատճառով տուֆի հաջողությամբ մրցում են աղյուսի հետ և շատ գեղքերում գերազանցում են որևէ այլ բնական շինանյութերի։

«Արթիկ-տուֆը» համարվում է Սովետական Միության խոշորագույն քարհանքերից մեկը։ Տուֆը լայն կիրառում է գտնում ոչ միայն ռեսպոբլիկայի արդյունաբերական և քաղաքացիական շինարարության մեջ, այլև նրա սահմաններից դուրս։ Արթիկի տուֆը երկաթգծով տեղափոխվում է հաղարավոր կիլոմետրեր՝ Միության արդյունաբերական կենտրոն-

ները: Արթիկի վարդագույն տուֆից կառուցված են հոյակառ շենքեր Երևանում, Մոսկվայում, Վոլգոգրադում, Թբիլիսիում, Բաթումիում, Սովորմիում, Սոչիում, Օդեսայում, Զապորժյեցում և Սովետական Միության բազմաթիվ այլ քաղաքներում:

Անի հանճավայրը գտնվում է Անի երկաթգծային կայարանի մոտ և բաղկացած է երկու հիմնական տեղամասից:

Այստեղ տարածված են վարդագույն և սևավուն-կարմիր տուֆեր, որոնք նույնպես օգտագործվում են որպես շինանյութ: Տուֆերի հիմ միասին այս շրջանում բավական մեծ տարածում ունեն պեմզաները և պեմզային ավագները: Տուֆերի որոշ տեսակները պարունակում են պեմզայի մանրուր և աշքի են ընկնում իրենց խճանկարչական կառուցվածքով:



Նկ. 17. Տուֆերի մերկացումը Աշտարակի մոտ
լուսանկար Կ. Շիրինյանի

Հետաքրքրական է նշել, որ միշնադարյան Անի քաղաքի համարյա բոլոր շենքերը կառուցվել են Անիի հանքավայրի տուֆից:

Տուֆի վրա փորագրված որմնանկարները մեծ զարմանք և հիացմունք էին առաջացնում ճանապարհորդների մոտ, որոնք այցելում էին Անի քաղաքի ավերակները:

Տուֆի հսկայական պաշարներ կան Արագած լեռան լանջերին, Աշտարակ—Սպիտակ և Արագած—Արթիկ խճուղային ձանապարհների միջև ընկած տարածություններում:

Աշտարակի շրջանում հայտնի են տուֆի Աշտարակի, Բյուրականի, Եղվարդի, Ուշանի, Օհանավանի հանքավայրերը:



Նկ. 18. Տուֆերի մերկացումը Թալինի շրջանի Կաթնաղբյուր
գյուղի մոտ
լուսանկար Կ. Շիրինյանի

Հայաստանի տուֆերի հանքավայրերից անհրաժեշտ է նշել Ախուրյանի շրջանում՝ Մայիսյանի, Արխվալու, Առափու, Լենինականի քաղաքամերձ տեղամասերի, Շահումյանի շրջանում՝ Շոռաղբյուրի, Սովհետաշենի, Երևանի քաղաքամերձ տեղամասերի (Նորք, Կարմիր սար), Կիրովականի շրջանում՝ Ժղանովի, Մակարաշենի, Դարբասի, Արշուտի, Դիմացիսարի, Վահագնի, Աբովյանի շրջանում՝ Ավանի, Առինչի, Զրվեծի, Զորաղբյուրի, Թալինի շրջանում՝ Կարմրաշենի, Թալին-Մատարայի, Էջմիածնի շրջանում՝ Փարաբարի, Արգավանդի, Ալա-

վերդու շրջանում՝ թումանյան կայարանի, Շաթերի, Կալինինոցի շրջանում՝ Շահնազարի, Նոյեմբերյանի շրջանում՝ Քյորիլուի և մի շարք այլ հանքավայրեր:

Թված հանքավայրերի որոշ մասը ներկայացված է ֆելզիտային տուֆերով. դրանցից կարելի է նշել Շաթերը, Քյորիլուն և ուրիշներ:

Հայտնի է, որ գեուս XVII—XVIII դարերում Շաթերի քարհանքերից տուֆը սալլերով տեղափոխվել են Թրիլիսի Սիոնի




Նկ. 19. Քյուրականի տուֆադաշտը
լուսանկար Կ. Շիրինյանի

մայր եկեղեցին երեսապատճու համար: Այդ նույն տուֆով են երեսապատճած երեսանի, Թրիլիսի բազմաթիվ շենքեր:

Այսպիսով, Հայկական ՍՍՌ ունի տուֆերի հսկայական պաշտոներ, որոնք հաջողությամբ օգտագործվում են շինարարության մեջ: Հանքավայրերի մի մասն ունի տեղական, իսկ մյուս՝ համամիութենական նշանակություն և զգալի քանակությամբ փոխադրվում է մեր երկրի ամենատարբեր քաղաքներու արդյունաբերական կենտրոնները:

Տուֆահատման պրոցեսում առաջացած մանրությ օգտագործում էն թեթև բետոն և բալկաններ ստանալու համար:



20. Հայկական ՍՍԸ տուֆերի տարածման սխեմատիկ քարտեղ
1. Հբարիսային տուֆեր, 2. Փելզիտային տուֆեր

O P U H Q H U Y B Q Q H U L H S

Օբսիվիանը («աստանի եղունգը») հրարխային ծագման համակեռ, ապակինման լեռնային ապար է. գույնը հիմնականում սև է կամ մուգ մոխրագույն, երբեմն՝ գորշ, կարմիր, դարչնագույն, կանաչ:

Պետքիսն արտաքրւամ նույն օբյեկտիանն է, նրա ըրուլ աւվելի հագեցած տարբերակը, և տարբերվում է վերջինից գնդիկավոր, պեսլիտային անշատումներով:

Սովորական օրսիգիանը պարունակում է մինչև 0,5%, իսկ պեղլիաբ՝ մինչև 5—6% զուր: Օրսիգիանի որոշ տեսակների և, հատկապես, պեղլիտի համար շատ բնորոշ է ուռչելու ունակությունը: 850—9500 զերմաստիճանի պայմաններում

նրանցից անջաւովում է չուր և նրանք ուռչում են, ընդ որում՝ նրանց ծավալը աճում է 10—15 անգամ, երբեմն էլ ավելի:

Օբսիդիանը օգտագործվում է որպես հղկանյութ. գոմավոր տարրերակները, հատկապես անհամասեռ տեսակները հումք են հանդիսանում տարրեր իրեր պատրաստելու համար: Օբսիդիանը հաջողությամբ կարող է կիրառվել նաև ապարկուարդյունաբերության մեջ:

Պեղիտը ուռչողունակության շնորհիվ խոշոր նշանակություն է ձեռք բերել արդյունաբերության ամենատարբեր բնադրավառներում: Պեղիտից ստանում են արհեստական պեմզա, որն իր հերթին հումք է ծառայում թեթև բետոնների, հղկանյութի, շերմային և ձայնի մեկուսիչների արտադրության մեջ: Պեղիտն օգտագործում են չերմամեկուսիչների և հրակայուն ցիմենտ, ծածկի և երեսապատման սալեր ստանալու համար: Պեղիտը չերմամեկուսիչների և ներկերի հիմնալի լցանյութ է: Գյուղաճնտեսության մեջ պեղիտը որպես պարարտանյութ ապահովում է այգեգործության պահանջները:

Նավթի արդյունաբերության մեջ պեղիտը հանդիսանում է նաև պանցութերը զտող հումք: Պեղիտից պատրաստած իրերը դիմացկուն են, քայլացման, փուման, մակաբուցների և սնկերի, բակաերինաների ներդրությանը չեն ենթարկվում:

Քիմիական արդյունաբերության մեջ պեղիտը հաջողությամբ կարող է կիրառվել մանրաթել նյութեր, քամիչներ ստանալու համար: Պեղիտից կարելի է պատրաստել հատուկ մածուկներ՝ գազամուղները և այլ ստորգրյա կառուցվածքները ծովաչքից քայլացման պաշտպանելու համար:

Հետաքրքրական է նշել, որ քարե դարում օբսիդիանը մարդկության կողմից օգտագործվել է նետի, դանակի և այլ դործիքների ու զենքերի ծայրապանակներ պատրաստելու համար:

Օբսիդիանի հանքավայրերը մեկ մոտ տարածված են Հիմնականում Անդրկովկասում և Անդրբայկալում:

Հայաստանն ունի օբսիդիանի և պեղիտի հսկայական, գործնականորեն անսպառ պաշտպաներ: Հանքավայրերից ա-

մենախոշորներն են համարվում Արտենի, Հատիս, Գութանսար, Սպիտակսար, Գեղասար լեռների օբսիդիանի և պեղիտի կուտակները:

Արտենի լեռան հանքավայրը գտնվում է Արագած կայառանից 9—10 կմ դեպի հյուսիս-արևելք, Արտենի լեռնազանդվածի շրջանում:

Այստեղ հայտնի են օբսիդիանի և պեղիտի խոշոր մերկացումներ, որտեղ նրանց հետ մեկտեղ հանդիպում են պիմզայի կուտակներ:

Այս հանքավայրի առանձին տեղամասեր վերջերս ուսումնասիրվել են Երկրաբանական վարչության արշավախմբի կողմից: Պարզվել է, որ Արտենի լեռան հանքավայրն ունի բարձրորակ պեղիտի հսկայական, կարելի է ասել գործնականորեն անսպառ պաշարներ, որոնք գտնվում են տնտեսապես բարենքապատ պայմաններում և շահավետորեն կարող են մշակվել պրդունաբերության պահանջները բավարարելու համար:

Գուրանսարի կամ Ֆանտանի հանքավայրերի խումբը բաղկացած է մի շարք տեղամասերից կամ ինքնուրույն հանքավայրերից, որոնք գտնվում են Ջրառատ, Արգել, Ֆանտան, Գյումուշ, Նուռնուս գյուղերի մոտ:

Աև, գարշնագույն, երեմն կարմիր, շերտավոր օբսիդիանները և պեղիտները հանդիսանում են Գութանսար հրաբիսի գործունեության արդյունք և ինքնուրույն հորիզոնի ձևով գրավում են հսկայական տարածություն:

Հանքավայրերի այս խումբը նույնպես հետախուզված է. Հայտնաբերվել են լավորակ պեղիտի և օբսիդիանի զղալի պաշարներ, որոնք կարող են մշակվել շինարարության և արդյունաբերության տարրեր ճյուղերի կարիքներն ապահովելու համար:

Հատիսի հանքավայրը գտնվում է Արովյանի շրջանում, Ակունք գյուղից 1,5 կմ դեպի հյուսիս-արևելք, Հատիս լեռան հարավային լանջին:

Հատիսն իր չափերով զիջում է Գութանսարի հանքավայրին: Օբսիդիանի և պեղիտի կուտակները հանդիս են զալիս

տուանձին բների ու «հրակների» ձևով, որոնք երբեմն հասնում են զգալի չափերի: Օրսիդիանի ամենազգալի կուտակը զբանը-վում է Ակունք զյուղից 1,5 կմ դեպի Հյուսիս-արեելք, որտեղ նրա հզորությունը կազմում է 14 մետր:

Օրսիդիանի գույնը այստեղ հիմնականում մոխրագույն և սև է, սակայն հանդիպում են նաև զարչնագույն, կանաչագույն տարրերակներ. ֆիզիկական հատկություններով օրսիդիանը և պեղլիտը մոտ են Գուբանսարի հումքին: Հատիսի պաշարները համեմատաբար փոքր են:

Սպիտակի և Գեղասարի հանճափայրերը գտնվում են Գեղամա սարահարթի սահմաններում: Օրսիդիանի կուտակները Հարում են համանուն լեռների (հանգած հրաբուխների) լանջերին:

Օրսիդիանի շերտաձև ամենամեծ կուտակը գտնվում է Սպիտակսար լեռան հարավ-արեելցան լանջին, որտեղ տարածված են հզկանյութի համար պիտանի սև, մոխրագույն տարրերակները: Համեմատաբար հազվագյեղ հանդիպող կարմիր, դեղնավուն և երփներանգ տեսակները կարող են օգոստագործվել մանր շինվածքների համար:

Այս հանքավայրերում մանրամասն ուսումնասիրություններ չեն կատարվել, սակայն երկրաբանական այլ աշխատանքներին զուղընթաց երկրաբանները որոշ տվյալներ են ստացել օրսիդիանի որակի, ֆիզիկական հատկությունների և պաշարների մասին: Բայց այդ տվյալների Սպիտակսարի և Գեղասարի օրսիդիանի հանքավայրերն ունեն հումքի հսկայական պաշարներ, որոնք պիտանի են որպես արհեստագործական նյութ:

Առօտանի հանճափայրը գտնվում է Միսիանի շրջանում, Որոտան գետի վերին հոսանքում:

Այստեղ, հրաբիսածին հզոր շերտախմբում գտնվում են օրսիդիանի և պեղլիտի կուտակներ և մերկացնումներ, որոնք տարածվում են Հյուսիս-արեելյան ուղղությամբ և անցնում են Աղրբեչանական ՍՍՌ տերիտորիան:

Օրսիդիանի և պեղլիտի կուտակները Միսիանի և Աղրբեչանական ՍՍՌ Քելբաջարի շրջաններում գրավում են հսկայա-

կան տարածություն և բաղկացած են չորս ինքնուրուցն տեղամասից կամ հանքավայրերից:

Հայկական ՍՍՌ-ում, բացի վերը նկարագրվածներից, օրսիդիանի և պեղիտի բեկորներ, կուտակներ ու երևակումներ հանդիպում են Արայի լեռան լանջերին, Սևանի շրջանի Գոմաձոր, Բասարգեշարի Ջաղալու զյուղերի մոտ և այլ վայրերում:

Այսպիսով, Հայաստանի և առաջին հերթին տնտեսապես բարենպաստ պայմաններում գտնվող Գութանսար և Արտենի հանքավայրերի օրսիդիաններն ու պեղիտները կարեոր հումք են ներկայացնում արդյունաբերության տարրեր ճյուղերի համար և նրանց մշակումը պետք է հանդիսանա մոտ ապագայի հրատապ խնդիր:

3. ԲՆԱԿԱՆ ՀՂԿԱՆՑՈՒԹԵՐ

Դ. Բ. Ա. Ն. Ա. Տ.

Գրանատ անվան տակ բնդգրկվում է միներալների մի խումբ, որոնք կազմված են տարբեր հարաբերակցություննեցող մի քանի հիմնական միացություններից: Գրանատների բաղադրամասերն են՝ սիլիկահողը, երկաթը, կալցիումը, մագնեզիումը, ալյումինը:

Գրանատների խմբում, ըստ քիմիական կազմության և գույնի, տարբերվում են 6 հիմնական տեսակ. գրսուլյար՝ առավելապես կանաչ կամ դարչնագույն, անդրագիս՝ գորշ-կարմրագույն, ուվարովիս՝ զմրուտի կանաչ, ալմանդին՝ կարմիր-դարչնագույն, սիլիոտ՝ արյան կարմիր և սպեսարտին՝ բաց դեղնագույն կամ գորշ դարչնագույն:

Գրանատների կարծրությունը տատանվում է 6,5—7,5 սահմաններում:

Տեխնիկական գրանատն օգտագործվում է որպես հղկանյութ, իսկ լավ գունավորված, գեղեցիկ տարբերակներ՝ ակնագործությունում:

Գրանատից պատրաստում են հղկամուղթ, սրաբարեր և այլ հղկանյութեր: Գրանատալին հղկաթղթերը լայնորեն օգ-

տագործվում են փայտամշակման արտադրության մեջ, որոշ շափով կիրառվում են փափուկ մետաղներից (պղինձ, արուց, բրոնզ), կաշվից, ոհատինից պատրաստած առարկաները հղկելու համար: Գրանատի փոշին իրենից ներկայացնում է հայելիների հղկանյութ: Զգալի քանակությամբ զրանատ են օգտագործում ժամացուցների, հաշվիչ մեթենաների և այլ մեխանիզմների մեջ:

Ակնագործության մեջ մեծ համբավ են ձեռք բերել գրանատների հետեւալ տարրերակները՝ բոհեմյան արյան կարմիր պիրոզները, ուրալյան խրիզոլիտները, ցելլոնյան, բոհեմյան և Մադագասկարի կարրունկուլները և Կապի նահանգի ոուբինները:

Հայկական ՍՍՌ-ում հայտնի են գրանատների տարածման մի շարք վայրեր, որոնք ուսումնասիրվել են երկրաբանական այլ աշխատանքներին զուգընթաց: Հայտնատանի գրանատները պատկանում են հիմնականում գրոսուլյար-անգրադիտ շարքին և հանդիպում են սեսպորլիկայի հարավային շրջաններում:


Մեղրու շրջանում հայտնի են նյուվադի գետի վերին հոսանքում գտնվող գրանատ պարունակող սկառնային ապարները: Գրանատը հանդես է գալիս մանր բյուրեղների ձեռվ և կազմում է սկառնային ապարների բազագործության 60-ից մինչև 95 %-ը:

Դափանի շրջանում գրանատները տարածված են Գեղի և Աշերաց գյուղերի մերձակայքում: Գրանատ-պիրոքսենային կաղմության սկառնային ապարներում գրանատը երբեմն հանդես է գալիս խոշոր՝ 1 մմ մինչև մի քանի սմ չափի բյուրեղների ձեռվ: Գորշ կարմրագույն գրանատը պատկանում է անգրադիտի շարքին:

Սիսիանի շրջանում գրանատի կուտակները հայտնի են լեռնաշեն զյուղի մոտ, որոնք ներկայացված են կանաչավուն գույնի տարրերակներով: Հանքավայրի մասշտաբներն աճնքան էլ մեծ չեն:

Ազիզբեկովի շրջանում գրանատների Կայալուի հանքավայրը գտնվում է Արփա գետի միջին հոսանքում: Սկառնային

ապարներում կանաչավլուն և դորշ կանաչավլուն զբանատների պարունակությունը կազմում է 40—80%: Հանքավայրի արդյունաբերական նշանակությունը սահմանափակ է:



Նկ. 21. Գրանատի բյուրեղներ. բնական մեծության $\frac{1}{2}$
լուսանկար Գ. Փիջյանի

Գրանատ պարունակող սկառնային ապարներ տարածված են նաև Հրազդանի շրջանի Ուշաշիկ, Մեղրաձոր, Հանքավան գյուղերի մոտ:

Հանքավան գյուղի մոտ տարածված սկառնային ապարները համարյալ լրիվ կազմված են զրանատներից, որոնց բյուրեղների չափերը հասնում են մինչև 0,1 և ավելի սմ-ի: Այս հանքավայրը կարող է ներկայացնել արդյունաբերական որոշ հետաքրքրություն, քանի որ սկառներն ունեն մոնոմիներալային կազմություն և զրանատը նրանցում ներկայացված է անդրադիտով:

Հաշվի առնելով փայտամշակման, ոհատինի և ոհսպուրլիկայի արդյունաբերության այլ ճյուղերի հղկանյութերի պահանջը, անհրաժեշտ է մանրամասնորեն ուսումնասիրել առաջին հերթին Հանքավանի գրանատ պարունակող ապարները և

փորձարկել զրանատների հղկող հատկությունները: Դրական արդյունքների դեպքում հանքավայրերից մի քանիսը կարող են ապահովել ռեսպուբլիկայի հղկանյութերի պահանջները:

Ա Բ Ա Ք Ա Ծ

Սրաքար անվան տակ նկատի ունենք աճուրդիսի ապարներ, որոնք պիտանի են բնական սրոցներ և սալեր պատրաստելու համար:

Որպես հումք սովորաբար օգտագործում են մանրահատիկ ավագաքարերը, կայծքարային կամ փայլարային թերթաքարերը, կվարցիտները, կրաքարերը և այլ ապարներ:

Լավորակ սրաքարը պետք է լինի հավասարահատիկ և համասեռ: Սրոցի համար օգտագործվող ավագաքարի ցեմենտը պետք է լինի միշտն կարծրության, ապարի մեջ գտնվող կվարցի հատիկները՝ սրածայր և ավագաքարն ամբողջովին չպետք է ենթարկվի հղկման:

Հայկական ՍՍՌ-ում սրաքարի և ջրաղացքարի հանքավայրեր շատ կան, սակայն ամենաուսումնաժիրվածը համարվում է Աղբբակի հանքավայրը:

Աղբբակի հանքավայրը գտնվում է նույնանուն դյուղի մոտ, Հրազդան քաղաքից 2 կմ հեռավորության վրա:

Սրաքարը ներկայացված է 50 մետր հզորության մերգելախառն կրաքարերով և կրաքարախառն ավագաքարերով: Հանքավայրը գրավում է 5 քառ կմ տարածություն:

Մերգելախառն կրաքարերի նրբախավ համասեռ շերտերը կարող են կիրառվել ածելու սրոցներ պատրաստելու, նուրբ գործիքների սրման և մարմարի ողորկման համար, իսկ կրաքարախառն ավագաքարերը՝ ավելի կոպիտ իրերում:

Աղբբակի սրաքարի հիմնական թերությունը կայանում է նրանում, որ մշակման ժամանակ ճեղքավորվում է և չի դիմանում մեխանիկական կարուրությունները:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով հումքի զգալի պաշարները և փոխադրման լավ պայմանները, հանքավայրը կարող

է Հետաքրքրություն ներկայացնել տեղական արդյունաբերության համար:

Հրազդանի շրջանի մյուս հանքավայրը տեղադրված է Աղվերան գյուղից 5 կմ դեպի հյուսիս և ներկայացված է 20 մետր կարողության մանրահատիկ ավազաքարերի շերտերով։ Հանքավայրը մանրամասն ուսումնասիրված չէ։ Հրազդանի շրջանի բնակիչներն այդ ավազաքարերը օգտագործում են որպես սրաքար գյուղատնտեսական զանազան գործիքներ սրելու համար։

Բացի նշված հանքավայրերից, սրաքարի հումք հայտնի է Նոյեմբերյանի շրջանում Կոնդոխ լեռան գագաթին և ներկայացված է երկրորդային կվարցիտներով, Սպիտակի շրջանի նալբանդ գյուղից մոտ (տուֆածին ապարներ), Եղեգնաձորի շրջանի Ամաղու և Էրթիչ վայրերում (կվարցիտներ), Վեդու շրջանի Զերմանիս տեղանքում (ալվազաքարեր), Ստեփանավանի շրջանի Գյուղագարակ գյուղի մոտ (սրաքարի և ըրազաքարի համար պիտանի ավազաքարեր)։

Պետք է նշել, որ սրաքարի և ըրազագքարի հանքավայրերի թիվը սրանով չի սահմանափակվում և Հայաստանի տարբեր շրջաններում տարածված են այդ նպատակների համար պիտանի ապարներ, որոնք տնայնագործական եղանակով մշակվում և օգտագործվում են տեղի բնակիչների կողմից։ Սրաքարի արդյունահանումը կարող են կազմակերպել շրջանային տեղարդկոմինատները։

4. ՀՈՒՄՔ ԿԱՎԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱԿԱՅՈՒԽ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՄԱՐ

Ա. Ն Գ Ա Լ Ո Ւ Զ Բ Տ

Անդալուզիտը կազմված է կավահողից (62,8%) ու սիլիկահողից (37,8%) և որպես օգտակար հանածո արդյունաբերական նշանակություն է ստացել 20-ական թվականներին։

Անդալուզիտի թրծումից ստացվում են արհեստական մի-

ներալներ՝ մուլիտ և կրիստոռալիտ։ Անդալուզիաի թրծումից ստացված նյութերը լայնորեն կիրառվում են ճրակայուն իրերի արդյունաբերության մեջ։

Անդալուզիային ճրակայուն արտադրանքը բնութագըրվում է հալման բարձր ջերմաստիճանով ($1825—1850^{\circ}\text{C}$), լավ չերտմահաղորդականությամբ, ջերմակայունությամբ, ծավալի կայունությամբ, քիմիական շեղորությամբ և մի շաբթ այլ արժեքավոր հատկություններով։

Անդալուզիային հումքը լայնորեն օգտագործում են քիմիական ամանեղենի, ճրաշափ խողովակների, տեխնիկական հախճապակու արտադրության մեջ։

Հավելույթի ձևով անդալուզիային հումքն օգտագործվում է մետալուրգիական և էլեկտրական տարրեր վառարանների բոլորապատման, պողպատի ձուման հալամաններ պատրաստելու, անընդմեջ $1650—1700^{\circ}$ ջերմաստիճանի պայմաններում աշխատող սպասքի մասեր պատրաստելու համար։

Անդալուզիաի հավելույթը բարձրացնում է հախճապակու մեխանիկական դիմացկունությունը և ջերմադիմացկունությունը։ Վերջին տարիներս անդալուզիաը դիտվում է նաև որպես ալյումին ստանդու հումք։

Հայաստանում անդալուզիային հանքավայրեր հայտնաբերվել են $1934—1935$ թթ., սակայն նրանք դեռևս թույլ են ուսումնասիրված և արդյունաբերական հեռանկարները լրիվ պարզված չեն։

Սիսիմադանի և Շահալի-Ելլարի անդալուզիային հաճիսավայրերը գտնվում են Կիրովականի շրջանում, առաջինը 4 կմ, իսկ երկրորդը՝ 16 կմ Շահալի կայարանից դեպի հարավարևելք։

Այստեղ անդալուզիտ պարունակող երկրորդային կվարցիտներն առաջացել են ճրաբխային շերտախմբերի փոփոխման հաշվին։

Այդ երկրորդային կվարցիտներում, բացի կվարցից և անդալուզիտից, հանդիպում են մի շաբթ այլ միներալներ։

Անդալուզիտի պարունակությունը Սիսիմադանի հանքա-

վայրում տառանվում է լայն սահմաններում, կազմելով միջին հաշվով 8,8 %, իսկ Շահաղի-Հյալարի հանքավայրում՝ նրա միջին պարունակությունը հավասար է 16 %:

Այդ հանքավայրերի շրջանն արժանի է ավելի մանրամասն երկրաբանական ուսումնասորման, քանի որ գտնվում է տնտեսական բարենպաստ պայմաններում:

Կողքի անդալուգիտային հանքավայրը ներկայացված է երկրորդային կվարցիտներով, որոնք տեղադրված են Կոնդոս լեռան լանջին, շրջկենարունից 4 կմ հեռավորության վրա:

Անդալուգիտ պարունակող երկրորդային կվարցիտներն իրենց միներալոգիական կազմությամբ շատ մոտ են Կիրովականի շրջանի նույնատիպ ապարներին, սակայն տարրերում են կավաճողի ցածր պարունակությամբ, հետևաբար այս հումքը հրակայով նյութերի արտադրության համար պիտանի չէ:

Կ Ա Վ Ե Խ Հ Ր Ա Կ Ա Յ Ո Ւ Ն Հ Ր Ի Մ Ք

Կավը հանդիսանում է տարրեր քիմիական և միներալոգիական կազմության մանրահատիկ բեկորային ապար, որն ունի խոնավություն կլանելու և պլաստիկ զանգված առաջացնելու ընդունակություն: Սակայն ներկայումս կավ հասկացողությունն ավելի է ընդլայնվել և այդ անվան տակ խմբավորում են զանազան ապարներ՝ պլաստիկ կավեր, կառին, կավային թերթաբարեր, պինդ քարանման կավեր, որոնք չունեն շաղկապող հատկություն և օգտագործվում են կավագործության մեջ:

Կավերի միներալոգիական կազմությունը շատ բարդ է, սակայն կավ առաջացնող հիմնաւելան միներալներն են հանդիսանում՝ կառինիտը, մոնտմորֆլոնիտը և հալուազիտը: Այդ միներալները ներկայացնում են կավաճողի, սիլիկաճողի և ջրի միացություններ:

Կավերի և կառինների զանազան հատկությունները կանխորոշում են նրանց օգտագործման բնագավառները: Հրակա-

յուն կավերից պատրաստում են շամոտային* նյութեր, որոնց հալման ջերմաստիճանը տատանվում է 1580—1770⁰ սահման-ներում: Այդ կավերը համեմատաբար սակավ օգտագործում են ձեռնապակյա-համապակյա ամանեղենի, տեխնիկական ձեռնապակու և թթվակայուն առարկաների արտադրության մեջ:

Հրակայուն իրերը իրենց հերթին լայնորեն օգտագործվում են մետալուրգիական արդյունաբերության մեջ:

Կառլինը հիմնականում օգտագործվում է կավագործության նպատակների համար: Նրանից պատրաստում են տընտեսության մեջ օգտագործվող ձեռնապակի ու համապակի, ինչպես նաև տեխնիկայում օգտագործվող ձեռնապակյա մասեր՝ էլեկտրամեկուսիչներ, հալամաններ, թորանոթներ, ծորակներ և այլն:

Կառլինի մյուս խոշոր սպառողը հանդիսանում է թղթի արդյունաբերությունը՝ սպիտակ և պինդ թուղթ ստանալու համար:

Ռետինի արդյունաբերության մեջ կառլինն օգտագործում են ուստինին ամրություն, առաձգականություն, թթվակայունություն հաղորդելու համար: Կառլինի որոշ խառնորդ անհրաժեշտ է կարելի, շաղարանյութերի, օճառի, մատիտի, ուլտրամարին ներկի, մոմլաթի և խցանալաթի մեջ: Արտագրության բոլոր ճյուղերում կառլինը կիրառվում է որպես լցանյութ:

Բազմատեսակ գժվարահալ (1350—1580⁰) և դյուրահալ (1350⁰-ից ցածր) կավերը հիմնականում կիրառվում են շինարարական կավագործության մեջ շինարարական աղյուս, կղմինզր, սալահատակի գերաթուրծ աղյուս, ցամաքեցնող (գրենաժային) և կոյուղու խողովակներ, կավամաններ, վառարանների շքադրուս, մետախյան սալեր և այլ իրեր պատրաստելու համար: Արտադրության այս ճյուղը կավերի հրակայուն կամ այլ հատկությունների նկատմամբ մեծ պահանջներ չի ներկայացնում: Անհրաժեշտ է, որպեսզի կավերը լինին:

* Եռակալման աստիճանի հասցրած թրծած հրակայուն կավ կամ կառլին:

պլաստիկ, լավ կազմակարվեն, չորացման և թրծման ժամանակ պահպանեն տրված ձեզ և թրծումից հետո լինեն շրա- և ցրտադիմացկուն:

Կավերի օգտագործման բնագավառները շատ բազմազան են: Բացի կավագործությունից, կավերն օգտագործում են նաև հիդրոտեխնիկական կառուցվածքներում, ալղակու հատուկ տեսակների արտադրության և տեխստիլ արդյունաբերության մեջ: Կավի որոշ տեսակներ մեծ կիրառում են զտնում հորատման գործում: Առանձնապես նավթի որոնման և շահագործման նպատակով փորվող հորատանցքերում կավային լուծույթը կանխում է գաղի և նավթի ժայթքումը, նրանց պատերը պահպանում է փլուզումից, մեկուսացնում է շերտերը միմյանցից և այլն:

Կավերը և կառլինները լայն տարածում ունեն Միության ամենատարբեր մարզերում և շրջաններում: Կավերի տարբեր տեսակներ հայտնի են նաև Հայկական ՍՍՌ-ում, որոնք լատ իրենց առաջացման պայմանների խմբավորվում են հետեւալ կերպ՝ 1) Հրային ապարների (պորֆիրիտների, կվարցային պորֆիրների) փոփոխման հետևանքով առաջացած կառլիններ և պինդ կավեր, 2) Հրային, նստվածքային և մետամորֆային ապարների բայցայման հաշվին առաջացած դժվարաձալ ու դյուրահաջալ կավեր և 3) լճային և ծովային ավազաններում կուտակված կավեր, որոնք սովորաբար ունեն լայն տարածում և աշքի են ընկնում շերտերի մեծ կարողությամբ ու համեմատաբար համասնո կազմությամբ:


Կավերի և կառլինների հանքավայրերից Հայկական ՍՍՌ-ում ամենաուսումնասիրվածը համարվում է Թումանյանի հրակայուն ապարների հանքավայրը:

Թումանյանի հանքավայրը գտնվում է Գեղեղ զետի աջ ափին, Քորեր կայարանի մոտ, Թումանյան գյուղից 4 կմ դեպի հյուսիս:

Հրակայուն ապարներն այստեղ առաջացել են տուֆերի, տուֆարբեկչիաների, պորֆիրիտների արմատական փոփոխման հետևանքով: Բացի հիդրոթերմերից հրակայուն ապար-

ների առաջացման ժամանակ կարևոր դեր էն կատարել նաև քիմիական հողմնահարման պրոցեսները, առանձնապես պիրիտի բայրայման հաշվին գոյացող ծծմբաթթվային լուծուվեները:

Թումանյանի հանքավայրի փոփոխված ապարները ներկայացնում են հրակայուն նյութ, նրանց հրակայունությունը կազմում է 1550-ից մինչև 1700⁰ լուս Ը:



Նկ. 22. Մագնեզիտի սիսկոահատիկներ (Գարայի հանքավայր).

բնական մեծության $\frac{1}{2}$

լուսանկար Ա. Աբովյանի

Թումանյանի հրակայուն ապարների հանքավայրի հիմանը վրա ուսապուրիկայում ստեղծված է արտադրության նոր ճյուղ: Քորեկ կայարանի մոտ, Դեբեղի աջ ափին ներկայումս գործում է հրակայուն աղյուսի կոմբինատն իր նորակառուց, տուֆակերտ բանավանով:

Հրակայուն հումքով (մագնեզիտումային և քրոմա-մագնե-

գիումային ապարներով) Հարուսա է նաև Սկանա լճի ավազանը: Այդ ապարները տարածված են Շորժայի, Զիլի, Գարայի և Բաբաջանի հանքավայրերում, որոնք արդեն հետախուզված են և գտնվում են արդյունաբերական մշակման փուլում:

Հումքի ֆիզիկա-մեխանիկական հատկությունների ուսումնասիրությունը ցուց է տվել, որ այն հաջողությամբ կարող է օգտագործվել մետալուրգիային անհրաժեշտ ֆորսաերիատյին և քրոմաֆորստերիատյին հրակայուն նյութեր ստանալու համար: Այդ հումքի հիման վրա կարելի է կազմակերպել նաև կավագործական տարբեր իրերի (մետալախան և երեսապատման սալիկների, մեկուսիչների, կավել խողովակների և ուրիշ՝) արտադրություն:

Ստացված տվյալները հիմք կծառայեն Շորժայի հրակայուն-կավագործական կոմբինատի նախագծման համար, որը կկառուցվի 1963—1965 թթ:


Այսպիսով, Սկանի ավազանում կստեղծվի արդյունաբերական նոր կենտրոն՝ հրակայուն իրերի կոմբինատ, որի արտադրանքը կապահովվի հրակայուն նյութերով Անդրկովկասի և Միության այլ շրջանների մետալուրգիական գործարանները:

Հրակայուն ապարների երևակումներ հայտնի են նաև Կիրովականի շրջանի Եղեգնուտ գյուղի մոտ, Հանքաձորի պղնձի հանքավայրի շրջանում, Ստեփանավանի շրջանի Կույրիշեկ գյուղի մոտ, Չիրովիլուի կողմէնային հանքավայրի մերձակայքում և այլ վայրերում:

Հայկական ՍՍՌ-ում անհամեմատ ավելի լայն տարածում ունեն շինարարության համար պիտանի կավերի հանքավայրերը: Նրանցից անհրաժեշտ է նշել Սանահինի հանքավայրը համանուն կայսրանի մոտ, Շնողի հանքավայրը Ալավերդու շրջանի Շնող գյուղի մոտ, Սրբիկի, Մաղալիկի, Ապարանի հանքավայրերը, Եղվարդի հանքավայրն Աշտարակի շրջանում, Հրազդանի, Զաշումի, Արտաշատի, Յովայի, Շենգավիթի և շատ ուշատ ուրիշ հանքավայրեր: Դժվար է անվանել ուսապուրվիկայի որևէ շրջան, որտեղ այդ կավերը բացակայում են:

Այսուհեղ անհրաժեշտ է հիշատակել, որ վերջերս երկրա-

բանների ջանքերով հջկանի, Ալավերդու և ռեսպուբլիկայի ամ-
շրջաններում հայտնաբերվել և ուսումնասիրվել է կավերի մի
տեսակ, որն ոճի ազսորբցիոն հատկություն և հայտնի է
բնատոնիտային կավ անվան տակ: Բանն այն է, որ այդ կավը
հեղուկից կամ զաղից կլանում է նրանց առանձին բաղադրիչ
մասերը: Կավի կլանման կամ ազսորբցիոն հատկությունն օգ-
տագործում էն ձեթ-օճառի, սննդի, նավթի արդյունաբերու-
թյան մեջ զանազան նյութեր, Հիմնականում յուղեր դտելու




Ֆարայի մտղնեղիտային հանքավայրի տեղամտուերից մեկի
ընդհանուր տեսքը (Մեանի ավագան)
լուսանկար Ս. Աբովյանի

Համար: Միներալային, բուսական և կենդանական յուղերից
այդ տեսակի կավը հեշտությամբ կլանում է վնասակար և
ներկող խառնուրդները:

Բնատոնիտային կավերը հիմք կծառային ռեսպուբլիկայի
սննդի արդյունաբերությանը անհրաժեշտ բարձրորակ քամող
ու սպարզող նյութերի արտադրության համար:

Կվարցը (կայծքարը, ործաքարը) լայն տարածված միներալ է և որպես բաղադրամաս մտնում է բազմազան լիոնայիշտապարների կազմության մեջ: Մոնոմիներալային կուտակումների ձևով կվարցը հաճախ հանդիպում է երակների, ոսպնչակների և այլ առաջացումների մեջ: Կվարցի տարբերակներից կարելի է նշել խալցեղոնը և ագատը:



Նկ. 24. Լիոնային բյուրեղապակու (կվարցի) գրուգուեր.
բնական մեծության $\frac{1}{10}$

Կվարցիտն իրենից ներկայացնում է Հոծ լիոնային ապար, որը կազմված է կվարցից: Սովորաբար կվարցիտի գույնը սպիտակ է, մոխրագույն կտմ գեղին և կախված է նրա մեջ հանդիպող միներալային խառնուրդներից: Այդ միներալների շարքին են պատկանում՝ փայլարը, դաշտային շպատը, հեմատիտը, կալցիտը և այլն:

Կվարցային ավազը հանդիսանում է բնեկորային ապար, կազմված է լիոնային ապարների քայլքայման հետևանքով:

առաջացած կվարցի հատիկներից, որոնք տեսակավորմել և նստել են չըի մեխանիկական գործունեության շնորհիվ:

Կվարցիտների և կվարցային ավազների օգտագործման բնագավառները բավական բազմաքան են: Նրանք նախ և առաջ հումք են հանդիսանում հրակայուն աղյուս՝ դինաս ստանալու համար, ապա օգտագործվում են որպես հղկանյութ արդարացնելու արտադրության, քիմիական արդյունաբերության մեջ որպես թթվակայուն նյութ և որպես շինանյութ:

Կվարցիտները հիմնականում օգտագործվում են հրակայուն աղյուսի՝ դինասի արտադրության մեջ: Դինաս անվան տակ հասկանում ենք հրակայուն իրեր, որոնք պարունակում են 90%-ից ոչ սուլակաս սիլիկահող և պատրաստվում են աղյացած կվարցիտներից մինչեւ 1450° ջերմաստիճանի պայմաններում թրծելու շնորհիվ:

Հղկանյութերի արդյունաբերությունը կվարցիտներն օգտագործում է որպես սրաքար. առանձնապես լավորակ են համարվում մանրահատիկ, ճոծ կվարցիտները: Այդ նույն կվարցիտները կիրառվում են արհեստական հղկանյութ, օրինակ՝ կարբորունդ ստանալու համար:

Մետալուրգիական արդյունաբերության մեջ կվարցիտներն օգտագործվում են ֆերոսիլիցիտում ստանալու համար և որպես ֆլյուս: Ֆերոսիլիցիտի համար պահանջվում է այնպիսի կվարցիտ, որի մեջ սիլիկահողի պարունակությունը 95%-ից ավելի է, իսկ ալյումինի, կալցիտի և երկաթի պարունակությունը՝ 3%-ից ոչ ավելի. վնասակար խառնուրդներ են համարվում մկնդեղը, անագը և ֆոսֆորը:

Կվարցային հումքի մեջ առանձնահատուկ տեղ են գրավում կվարց-պեմզային ավազները, որոնք հանդիպում են Հայկական ՍՍՌ մի շարք շրջաններում: Այդ ավազները ներկայացնում են հրաբիսային գործունեության արդյունք և կազմված են կվարցի սպիտակ, թափանցիկ հատիկներից ու պեմզայի մասնիկներից: Կվարց-պեմզային ավազները մեծ հետաքրքրություն են ներկայացնում ուսուպուրիկայի ապակու արդյունաբերության զարգացման համար, առանձնապես բարձրուակ, անգույն ապակիների արտադրության մեջ:

Հայկական ՍՍՌ-ում հայտնի են կվարցիտների և կվարց-պեմզային ավաղների մի շաբթ հանքավայրեր:

Երբիշի հանճավայրը գտնվում է Եղեգնաձորի շրջանում և կազմված է 5—10 մետր կարողության կվարցիտների շերտերից:

Հանքավայրը հետախուզված է, սակայն չի մշակվում: Տեղի բնակիչներն այս մանհրահատիկ կվարցիտներն օգտագործում են որպես սրաբար, ջրաղացքար և շինանյութ: Օրինակ՝ կվարցիտներից է կառուցված երկրաշարժի հետևանքով փլաված հանգույն Կարմիր վաճար մենաստանը:

Արգիշի հանճավայրը գտնվում է Մարտունու շրջանում, Սուլեմայի լեռնանցքի մոտ:

Կվարցիտների շերտերի կարողությունը կազմում է մի քանի տասնյակ մետր, սակայն հումքի որակը ներկայացվող պահանջներին չի համապատասխանում: Կվարցիտներում համախ հանդիպում է հնմատիտի, փայլարի, քլորիտի, պիրիտի խառնուրդ, որոնց զգալի պարունակությունը բացասարար է ազգույն հումքի որակի վրա:

Համանգաւի հանճավայրը կիրովականի շրջանի Շահալի կայարանից 3 կմ դեպի հարավ-արևմուտք:

Այս հանքավայրի առանձին տեղամասերում հանդիպում են բարձրորակ կվարցիտների կուտակներ, որոնք պիտանի են մետալուրգիական նպատակների համար:

Մինչև 1917 թվականը հանքավայրը շահագործվել է ֆրանսիական կոնցեսիայի կողմից, իսկ ներկայումս այդ հումքը օգտագործում է Ալավերդու պղնձաձուլարանը որպես ֆլյուս: Հումքը պիտանի է նաև դինասի ստացման համար:

Հանճավայրի հանճավայրը կալինինոյի շրջանի համանուն դյուոլից 2 կմ դեպի հարավ-արևմուտք:

Հանքավայրն ուսումնասիրվել և հետազոտվել է 1943 թ.: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կվարցիտները, կամ ավելի ճիշտ սիլիկահողով հարստացած ապարները, իրենց կազմությամբ անհամասեռ են և բաղկացած են երկու տարբերակներից: Առաջին տարբերակը կազմված է խալց-

- դոնից և մանրահատիկ կվարցից, իսկ երկրորդը՝ ներկայացված է թույլ վերաբյուրեղացած խալցեղոնով, կառինի և հանքային միներալի խառնուրդով:

Շահնազարի կվարցիտները համարվում են բարձրորակ և պիտանի են ֆերոսիլիցիում, դինաս ստանալու համար ու հաջողությամբ կարող են օգտագործվել Ալավերդու պղնձաձուլարանում որպես ֆլյուս:

Բացի կվարցիտներից անհրաժեշտ է նշել նաև կվարցպեմզային ավազների հանքավայրերը:

Թումանյանի հանքավայրը. Համանուն կայարանից 1,5—2 կմ դեպի հարավ, Սպիտակ հողեր տեղանքում:

Կվարց-պեմզային ավազները տարածվում են Հորիզոնական շերտերով, ընդ որում նրանց ընդհանուր հղորությունը կազմում է 2,7 մետր և դեպի արևելք աճում է: Այս հանքավայրի պաշարները սահմանափակ են, սակայն նույն շրջանում կվարց-պեմզային ավազների առանձին կուտակներ հայտնի են նաև Կարմիր Աղեղի, Քարինչ, Այգեհատ գյուղերի և Ստեփանավանի շրջանի Կուրթան գյուղի մոտ:

Անհրաժեշտ է նշել, որ Թումանյանի հանքավայրի կվարցպեմզային ավազներից ստացված հարստանյութը պիտանի է բարձրորակ, անգույն ապակի ստանալու համար:

Կվարց-պեմզային ավազներ տարածված են նաև Կիրովականի շրջանի Մեղրուտ գյուղի և Արովյանի շրջանի էլար գյուղի մոտ:

Էլարի հանքավայրը մյուսաների համեմատությամբ համարվում է ամենախոշորը: Այդ հանքավայրն առաջին անգամ ուսումնասիրվել է 1929 թ., ապա՝ 1947 թ.: Հանքավայրը բաղկացած է մի քանի տեղամասերից, որոնց շարքում ամենահետաքրքրականը համարվում է 1-ին տեղամասը: Այստեղ կվարց-պեմզային ավազների շերտի կարողությունը հասնում է 8 մետրի, ավազը մաքուր է, բարձրորակ, կողմնակի նյութի ենթաշերտերը բացակայում են:

Կվարց-պեմզային ավազից ստացված հարստանյութը կազմված է կվարցից և թափանցիկ դաշտային շպատներից:

Այսպիսով, ելարի հանքավայրը հումքի որակով և պաշտպանով առաջման համարվում է ռեսպուբլիկայի ապակու արդյունաբերության ամենակարենոր հումքային բաղան:

5. ԼՅԱՆՅՅՈՒԹԵՐ ԵՎ ՆԵՐԿԵՐ

ԳԻԱՏԱՄԻՏԻՏ

Դիատոմիտն իրենից ներկայացնում է ամորֆ սիլիկատ հողով հարուստ, թիթե, խիստ ծակոտկեն, սպիտակ գույնի օրգանական ծագման մի ապար, որը կազմված է դիատոմային չղիմուների և բաղիուլարների խեցիներից:

Դիատոմիտների կազմությունը և կառուցվածքը պայմանավորում են նրանց ֆիզիկական հատկությունները: Որոշ գեղքերում դիատոմիտը հանալի կլանիչ է, մի այլ գեղքում այն լավ ազորբենում է և ծառայում է որպես քամիչ: Դիատոմիտը հանդիսանում է ջերմության վատ հաղորդիչ, այդ հատկությունը պայմանավորված է նրա խիստ ծակոտկենությամբ (ծավալի մինչև 89%):

Դիատոմիտը բնության մեջ հանդիս է գալիս հողախառն, կավճանման, երեխն փուխր, երեխն՝ հոծ կուտակների ձևով: Գույնը սովորաբար սպիտակ է, երեխն մոխրագույն, դեղին, վարդագույն, գարշնագույն:

Սիլիկածողի սարունակությունը դիատոմիտում կազմում է 60—70-ից մինչև 96—98%:

Դիատոմիտային ապարները լայն կիրառում ունեն արդյունաբերության տարրեր բնագավառներում, որպես քամիչ նյութ դիատոմիտն օգտագործում են շաքարի, նավթավերամշակման արդյունաբերության մեջ (պարագինա անջատելու համար), ինչպես նաև սննդայուղերի, լաքերի, սպիրտային մզվածքների և պտղահյութերի արտադրության մեջ:

Դիատոմիտը կիրառվում է որպես ջերմա- և ձայնամեքուսիչ, որպես հիգիենիկ, հրդեհի նկատմամբ անլիտանգ, հրակայուն աղյուս:

Դիատոմիտային ջերմամեկուսիչն օգտագործում են գործարանային էլեկտրավառարաններում, նաև թայլային թորամաններում: Որպես սիլիկացող դիատոմիտը խառնում են երկնադույն ուլտրամարին ներկին, հեղուկ ապակուն, պորտլանդցիմենտին և ջնարակին: Դիատոմիտը հանդիսանում է հղկանյութ, որպես կլանիչ օգտագործվում է նիտրոգլիցերինի, բրոմի, ծծմբաթթվի, սպիրոտի, հեղուկ վառելիքի արտադրության մեջ, որպես լցանյութ դիատոմիտն օգտագործվում է ուստինի, ասֆալտի, ծծմբի, ներկերի արտադրության մեջ: Մետալուրգիայում դիատոմիտը որոշ զենքերում օգտագործում է և մետաղի ձուլման համար և, առանձնապես այն ժամանակի, երբ պահանջվում է ձուլածոյի գանգաղ սառեցում և մետաղի աստիճանական կոփում:

Դիատոմիտային հումքի նկատմամբ արդյունարերության տարրեր ճյուղերի պահանջները տարրեր են. այս կամ այն տեսակը սահմանելու համար առաջին հերթին հաշվի են առնում դիատոմիտի ֆիղիկական հատկությունները:

Դիատոմիտներն իրենց առաջացման պայմաններով հանդիսանում են ջրային ավալանների նստվածքներ. դիատոմիտային ջրիմուտները, որոնք տարածված են ծովային և լճային ավալաններում, երրորդական և չորրորդական դարաշրջաններում հանդիսացել են դիատոմիտային շերտախմբերի առաջացման աղբյուր:

Հրաբխային լանդշաֆտի լճերում են առաջացել նաև Հայաստանի դիատոմիտային կուտակներ:

Ներկայումս մեր ոեսպուրլիկային սահմաններում հայտնի է դիատոմիտի 10-ից ավելի հանքավայր. օրինակ՝ Նուռնուսի, Սիսիանի խմբի, Փարպու, Փարաքարի, Արդնի-Հրազդանի հանքավայրերը: Հումքի որակով առաջին տեղն են գրավում Նուռնուսի և Փարպու հանքավայրերը:

Նուռնուսի հանքավայրը, Արդնի հանքանի համանուն դյուղի մոտ, հայտնաբերված է 1929 թ.: Դիատոմիտները հանդես են գալիս 16 մետր կարողության ոսպնյականման մարմնի ձևով:

Նուռնուսի դիատոմիտը բացառապես մաքուր է. սպիտակ տեսակը պարունակում է մինչև 98,7% սիլիկատով: Եթե համեմատելու լինենք Նուռնուսի դիատոմիտը Միության տարրեր շրջաններում ու մարզերում և արտասահմանում տարածված դիատոմիտների հետ, ապա Նուռնուսինն իր որակով կզրավի առաջին տեղը:

Հանքավայրը մասամբ մշակված է. դիատոմիտի մնացած պաշարների օգտագործումը կապված է որոշ գժվարությունների հետ: Խորը հորիզոններում գտնվող դիատոմիտային շերտերի մշակման համար անհրաժեշտ է հեռացնել անդեղիտարագալտային լավաճների ծածկոցը, իսկ այդ աշխատանքները կապված են շատ մեծ ծախսերի հետ:

Սիսիանի շրջանի հանքավայրերի խումբը գտնվում է Որոտան գետի աջափնյա մասում, Սիսիան և Շամբ-Դարբաս գյուղերի միջև ընկած հատվածում: Նրանցից ամենահետաքրքրականն են Շամբ-Դարբասի, Նորավանի և Ուղի հանքավայրերը:

Դիատոմիտի նշանակած հանքավայրերը գրավում են 5—9 քառ կմ մակերես և ներկայացված են մոխրագույն և դեղնագույն դիատոմիտի շերտերով, որոնց կարողությունը տատանվում է 25—30-ից մինչև 150 մետր:

Սիսիանի դիատոմիտներն ըստ իրենց որակի և ֆիզիկական հատկությունների պիտանի են շերմամեկուսիչ աղյուսների, պորտալանդ-ցեմենտի արտադրության համար:

Սիսիանի շրջանի դիատոմիտի պատարերը գործնականորեն անսպառ են:

Փարպատ հանքավայրը. Աշտարակի շրջանի համանուն գյուղի մոտ, Երևանից 26 կմ դեպի հյուսիս-արևմուտք և հայտնի է 1930 թ.: Հանքավայրը հետախուզվել է 1932 թ., 1937 թ. և ավելի բազմակողմանի ու մանրամասն՝ 1945 թ.:

Դիատոմիտներն այսուհեղ առաջացնում են շերտաձև մի մարմին, որը ունի մոտավորապես 5 մետր կարողություն:

Դիատոմիտը սպիտակ է, տեղ-տեղ բաց վարդագույն, իր ֆիզիկական և քիմիկական հատկություններով հանդիսանում է Նուռնուսի և Սիսիանի դիատոմիտների միջին տեսակը:

Փարպեւ դիատոմիտը մի քանի տարիների ընթացքում արդյունահանում և արտադրության մեջ օգտագործում էր երկանի մուլիտի գործարանը:

Դիատոմիտային շերտեր և կուտակներ հայտնի են Փարպար (էջմիածնի շրջան), Չորաղբյուր (Աբովյանի շրջան), Կառնուս (Լենինական քաղ. մոտ), Գնդեազ (Աղիպեկովի շրջան), Մուսայելյան (Ախուրյանի շրջան) գյուղերի մոտ:

Այս համառոտ ակնարկից պարզվում է, որ դիատոմիտները Հայաստանի պայմաններում ունեն բավական լայն տարածում, ընդ որում նրանց կուտակների կամ հանքավայրերի շափերը կախված են այն ավագանների մեծությունից, որտեղ երկրաբանական անցյալում՝ երրորդական և չորրորդական դարաշրջաններում տեղի է ունեցել դիատոմիտային առաջացումների նստեցումը:

ՀԱՅ ԹԱՅԻՆ ԵՐԵՎԱՆ

Հանքային ներկեր են անվանում այնպիսի ներկող նյութերին, որոնք բնության մեջ դանվում են մեխանիկական վերամշակման համար պատրաստի վիճակում։ Հանքային ներկերը սովորաբար հանդիպում են հողանման կուտակների ձևով։

Հայկական ՍՍՌ բնական ներկերը ըստ գույնի դասակարգվում են հետեւյալ կերպ՝ դեղին-օքրա, կարմիր-կարմրագեղ և սուսր, դարչնագույն-ումբոյա, սիեննա և այլն։

Այդ ներկերը սովորաբար ներկայացված են կավային զանգվածների ձևով։ Այդ փիբուն զանգվածները ծագմամբ կապված են հբաբիսածին և նստվածքային ապարների հետ, որոնց հետ նրանք առաջանում են միաժամանակ կամ ներկայացնում են այդ ապարների փոփոխման արդյունք։

Հայկական ՍՍՌ-ում մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև ներկող տուֆերը՝ երկաթի օքսիդներով և հիդ-

բօքսիդներով գումավորված հրարխային ժայթքումների արդյունքները:

Հումքի ներկող հատկությունը որոշվում է երկաթի հիդրօքսիդների պարունակությամբ, ներկածածկի կայունությամբ, գույնի խտությամբ, օդահաստությամբ:

Հայաստանում հայտնի են հանքային ներկերի և ներկող տուֆերի մի շարք հանքավայրեր:

Տաճնազարի հանքավայրը գտնվում է Կալինինոցի շրջանի նույնանուն գյուղից 3—3,5 կմ դեպի հյուսիսարևեմուտք:

Տուֆերը զրավում են մոտավորապես 30 հեկտար տարածություն և ըստ գույնի ու երանգների ներկայացված են մոխրագույն, սպիտակ, կարմիր, բաց վարդագույն և դեղին տարրերակներով:

Փորձերը ցույց են տվել, որ տուֆն անհրաժեշտ է աղալ և մաղել, ապա կամացը և այլ միներալային մասնիկները հեռացնելու նպատակով ստացված նյութը լուծել ջրի մեջ: Այդ լուծույթից ստացվում է այնպիսի ներկ, որն իր որակով գերազանցում է կարմրագեղին և օքրային:

Շահնազարի տուֆերը լավորակ հումք են հանդիսանում ուստացիկայում լաքա-ներկերի արդյունաբերության համար:

Բնական ներկերի, հիմնականում օքրայի հանքավայրերի մի այլ խումբ կապված է պորֆիրիտային ապարների փոփոխման հետ: Նրանցից կարելի է նշել Զաղիձորի, Կաքավածորի օքրայի հանքավայրերը և ուրիշներ:

Բնական ներկերի նման հանքավայրեր հայտնի են նաև Ալավերդու, Խշեանի և Հրազդանի շրջաններում: Սակայն վերոհիշյալ հանքավայրերի պաշարները սահմանափակ են. արդյունաբերական կարելոր նշանակություն ունի Շահնազարի բնական ներկերի (տուֆերի) հանքավայրը:

6. ՀՈՒՄՔ ԱԿՆԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՆՈՒՐԲ ՍԱՐՔԵՐԻ ՀԱՄԱՐ

Ա. Գ. Ա. Տ.

Ազատը (ակատը) բնության մեջ հանդիպում է տարբեռ քաղագրության ապարներում առանձին երակների, ներփակումների և կուտակվածերի ձևով: Ազատի հիմնական բաղադրամասը կազմում է սիլիկածողը, որի պարունակությունը մաքուր տարբերակներում հասնում է մինչև 99,5 %:

Ազատը դասվում է կարծը միներալների շարքը և աշքի է ընկնում իր նուրբ զոլավոր կազմությամբ, հաճախ այդ զոլերի համակենտրոն դասավորությամբ: Երբեմն այդ նուրբ զոլերն այնքան բարակ են, որ 1 մմ-ում նրանց թիվը հասնում է մինչև 7000:

Հետևյալ ազատն օգտագործել են որպես պերճանքի առարկա, իսկ ներկայումս այն լայնորեն կիրավում է արդյունաբերության տարբեր ճյուղերում, հատկապես ճշգրիտ մեխանիկայի բնագավառում:

Ազատից պարագանում են մեծ կարծրություն և դիմացկումն ունեցող ժամացույցի քարեր, էլեկտրաշափող սպասքերի մասեր, անալիտիկ կշռոքների բարձիկներ և պրիզմաներ, կաշի, թուղթ փայլեցնող գլանիկներ, քիմիական լարորատորիաների սպասքեր և այլն:

Ակնագործության մեջ լայն կիրառում ունեն շերտավոր և գունավոր աղատները, որոնցից պատրաստում են պերճանքի զանազան տուարկաներ՝ սկահակներ, ուլունքներ, ծխամորճեր, կոճակներ, մատանիներ, ապարանշաններ, ծխատուփեր, գրաշակուեր, թանաքամաններ և այլն: Ազատը լսով է հղկվում և այդ պրոցեսը սովորաբար կատարում են ազատից ավելի կարծը կարբորունդի կամ աղմասաի օդնությամբ:

Հայկական ՍՍՌ-ում ազատի հանքավայրեր և հրեակումներ հայտնի են բազմաթիվ շրջաններում, սակայն համեմատաբար լավ ուսումնասիրվածները զանվում են իշեանի շրջա-

նում: Ազատի կուտակները տվյալ շրջանում տարածված են Սարիցուղ և Սեբար գյուղերի մոտ:

Իշխանի շրջանի ազատի երեակումների խումբը հայտնաբերվել է 1931 թ., հետագայում այն հետախուզվել է և ազատը մի քանի տարիների ընթացքում մշակվել է արդյունաբերության պահանջներն ապահովելու համար: Իշխանի ազատից պատրաստում էին տեխնիկական սպասքեր:

Ազատի երեակումներ հայտնի են նաև Շամշադինի շրջանի Պառավաքար և Ծաղկավան գյուղերի մոտ, Ղափանի շրջանի Արծվանիկ և Սեբար գյուղերի մոտ, Գորիսի շրջանի Պաշարաշուր գյուղի մոտ, Ալավերդու շրջանի Մաթեր գյուղի մոտ, Կալինինո գյուղերի մերձակայքում, Նոյեմբերյանի շրջանի Ղալաչա գյուղի մոտ և այլ շրջաններում:

Նշված հանքավայրերից և երեսկումներից իր պաշարներով, ազատի որակով և ուսումնասիրման աստիճանով կարենու նշանակություն ունի իշխանի շրջանի հովմբը:

Փորձարկումները ցույց են տվել, որ իշխանի ազատի 50% պիտանի է տեխնիկական նպատակների համար, իսկ մյուս 50%-ը կարելի է օգտագործել ակնազորժական իրերի արտադրության մեջ:



* * *

Այսուեղ անհրաժեշտ է հիշատակել նաև մեր ռեսպուբլիկայի վառելիքային հովմբի ռեսուրսների մասին: Ընդհանուր առմամբ Հայաստանի տերիտորիայում հայտնի են քարածխի, այրվող թերթաքարերի, տորֆի մի շարք երեակումներ, որոնց պաշարները, հետևաբար և արդյունաբերական նշանակությունը, սահմանափակ են: Քարածխի շերտեր հայտնի են Վեդու (Զերմանիս), Ալավերդու (Շամուտ) և Ախուրյանի (Զաջուռ) շրջաններում: Այրվող թերթաքարերի շերտեր տարածված են Մուշադբյուր գետի (Արովյանի շրջան) և Դիլիջան քաղաքի մոտ:

Տորֆավալրեր հայտնի են Կալինինովի, Կիրովականի,
Բասարգեշարի և այլ շրջաններում:

Ներկայումս երկրաբանների ուշադրության կենտրոնում
է Հայաստանի նավթագազարերության հետանկարների պար-
զաբանման հարցը: Այդ ուղղությամբ Արարատյան Հարթա-
վայրի տարբեր շրջաններում կատարվում են հետախուզական
և գեոֆիզիկական աշխատանքներ: Նախնական տվյալները
գոհացուցիչ են, հորատանցքերում նկատվում են այրվող գազի
և պինդ ասֆալտինի նշաններ:

Վերը նշված նշանները հուսալի նախադրյալներ են նավ-
թագազարերության համար և այդ աշխատանքներն ավելի
լայն ծավալ կստանան մոտ ապագայում: Երկրաբանները
հնիթագրում են, որ կատարվող ուսումնասիրությունները կտան
դրական արդյունքներ:

* * *

Հայաստանի օգտակար հանածոներին նվիրված այս
Համառոտ ակնարկից երեսում է, որ Հայկական լեռնաշխարհի
ընդերքը հարուստ է բազմաթիվ հանքատեսակներով, որոնք
կարենոր նշանակություն ունեն ժողովրդական տնտեսության
հետագա զարգացման համար:

Արդեն հայտնաբերված և շահագործման հանճնված հան-
քային հումքի հիման վրա ուսապուրիկայում կազմակերպված
է պղնձաձուլվական արդյունաբերություն, ստացվում են մոլիբ-
դենի, կապարի, ցինկի հարստանցութեր: Նախատեսվում է
ալյումինի արդյունաբերության անցումը տեղական հումքին
և այդ նպատակով արդեն կառուցվում է Հրազդանի լեռնաքի-
միական կոմբինատը: Նախագծվում է Հատուկ պողպատների
ու Համաձուլվածքների, ինչպես նաև ոսկու և մի շաբք արժե-
քավոր ցրված մետաղների արտադրություն: Լայնորեն օգտա-
գործվում են բնական շինանյութերը, հրակայուն նյութերը,
նախատեսվում է քարաղի հսկայական պաշարների արդյունա-
բերական վերամշակումը:

Յոթնամյակի տարիներին լեռնային և մետալուրգիական արդյունաբերության հիմքի վրա ավելի արագ տեսմություն կաձեն ռեսպուբլիկայի նորաստեղծ արդյունաբերական ճյուղերը՝ հաստոցաշինությունը, մեքենաշինությունը և նուրբ սարքաշինությունը:

Սովետական Հայաստանի համար առանձնահատուկ նշանակություն ունեն ընդերքի հարստությունները և նրանց օգտագործման հետ կապված արդյունաբերության այլ ճյուղերի զարգացումը։ Հենց այդ նշանաբանով էլ Հայաստանի երկրաբանները իրենց ժրաշան աշխատանքով հայտնաբերում և ուսումնասիրում են մետաղային ու ոչ-մետաղային օգտակար հանածոների նոր հանքավայրեր։

Երկրի ընդերքն էլ ավելի խորը ներթափանցելու, այնտեղ թաքնված օգտակար հանածոները հայտնաբերելու և արժեքավկոր հումքատեսակները մեր Հայքինիքի ժողովրդական արնեւեսությանն ի սպաս գնելու նպատակով փորձում են հարյուրավոր հորատանցքեր և հանքուղիներ, կիրառվում են գիտության նորագույն նվաճումները՝ որոնման դեսֆիզիկական, գեորգիմիական, հիդրոքիմիական և այլ եղանակներ։ Այդ աշխատանքների միակ նպատակն է՝ ստեղծել հաստատուն հանքա-հումքային բազա մեր արդյունաբերության և գյուղատնտեսության հարաձուն պահանջներն ապահովելու համար։

ՀՈՅԿՈԿՈՅ ՍՈՒ ՄԻՏՈԿՈՐ ՀՈԽՈՇՈԽԵՐԻ ՑՈՒԿ
ԸԱՏ ՏԱՏԵՍՈՍԱՅՆ ԵՎ ՎԱՐՉԱ-ՏԵՐԻՏՈՐԻԱԼ ՇՐՋԱՆԱՑՄԱՆ

1. ՇԵՐՈՎԻ ՏԱՏԵՍՈՍԱՅՆ ՇՐՋԱՆ

1. Ավուրցանի շրջան

Գիտառոմիտի կատարութեան 133, Մուսայելյան 133.

Կազ, Զաղուտ 124.

Հրատարակին խարսման պարագաները. 93.

Պետական-Զբանատ 103, Մարմաշեն 103.

Տուքի, Մայիսյան 108, Արխալի 108, Առափի 108.

Քարածուիս, Զաղուտ 136.

2. Ազիճի շրջան

Կազ, Մարալիկ 124.

Պետական-Անի-պետական 102, Մատնազրյալ 103.

Տուքի, Անի 107.

3. Ամասիայի շրջան

Կրաքար, Ամասիայի շրջ. 97.

Մենգեղ, Ամասիայի շրջ. 37.

Ուկի, Աևան-Ամասիայի մեսաղարեր գոտի 62.

Քրամ, Ամասիայի շրջ. 29.

4. Արքիլիի շրջան

Անգեղիտ և բաղաւտ, Արքիլիի շրջ. 86.

Պետական, Պետական 102.

Տուքի, Արքիլի 105, Արակած 108.

5. Ապիտակի շրջան

Ա բ ա բ ա բ, Սպիտակի շրջ. 97.

Ա բ ա բ ա բ, Նալբանդ 118.

II. ԼԻԼԻ-ՓՈՄԲՈԿԻ ՏՆՏԵՍՈՒԿԱՆ ԵՐՋԱՆ

1. Ալավերդու շրջան

Ա գ ա տ, Մաթեր 136.

Ա ն գ ե զ ի տ հ բ ա զ ա լ տ, Ալավերդու շրջ. 86.

Բ ա բ ի տ, Ռէքիլիստ 74, Արորի 75, Քարինչ 75, Ալյալալտ 74.

Բ ե ն տ ո ն ի տ ա յ ի ն կ ա վ, Ալավերդու շրջ. 125.

Գ ր ա ն ի տ, Հաղպատ 92, Ճռձկան 92.

Ե ր կ ա թ, Քարծախ 17, Ծնող 16, Սոթ 17, Ժանդարդու 17, Մարի-
քրուազ 17, Մաղաղիմատ 18, Աճնիձոր 18.

Ծ ծ մ ր ա յ ի ն կ ո ւ չ ե զ ա ն, Ալավերդի 79, Ծամըուղ 79.

Կ ա պ ա ր հ ց ի ն կ, Ալյալալտ 50.

Կ ա վ, Մանահին 124.

Կ վ ա ր ց, կ վ ա ր ց ի տ հ կ վ ա ր ց ա յ ի ն ա վ ա զ, Կարմիր
Աղեղի 129, Քարինչ 129, Այգեհատ 129.

Հ ա ն բ ա յ ի ն ն ե ր կ, Զաղիձոր 134.

Պ ղ ի ն ձ, Ծամըուղ 43, Ալավերդի 43, Հագվի 47, Մաղաղար 47.

Ս ո ւ ֆ ֆ ե լ զ ի տ ա յ ի ն, Թումանյան 109, Մաթեր 109.

Ք ա ր ա ծ ո ւ խ, Ծամըուղ 136.

2. Կալինինոյի շրջան

Ա գ ա տ, Կալինինո 136.

Ա ն գ ե զ ի տ հ բ ա զ ա լ տ, Կալինինոյի շրջ. 86.

Կ ա պ ա ր հ ց ի ն կ, Պրելոնյի 50.

Կ վ ա ր ց, կ վ ա ր ց ի տ հ կ վ ա ր ց ա յ ի ն ա վ ա զ, Ծահնաղար
128.

Հ ա ն բ ա յ ի ն ն ե ր կ, Ծահնաղար 134.

Տ ո ր ֆ, Կալինինոյի շրջ. 137.

Տ ո ւ ֆ ֆ ե լ զ ի տ ա յ ի ն, Ծահնաղար 109.

3. Կիրովականի շրջան

Ա ն գ ա լ ո ւ զ ի տ, Սիսիմադան 119, Ծահալի-էլլար 119.

Ա ն գ ե զ ի տ հ բ ա զ ա լ տ, Կիրովականի շրջ. 86.

Գ ր ա ն ի տ, Փամբակ 90.

Երկար, Մոլողական 19, Գիրախուռ 19, Հալավար 19, Դարա-
 շուան 19:
 Եմք բային կուչե դան, Տանձուռ 77, Անտանեսկոյն 78, Սի-
 սիմադան 78.
 Եւ զ ե զ րակ այում հումք, Հանքաձոր 124, Եղեգնուռ 124.
 Եւ զ արց, կ զ արց իտ և կ կ արց ային ավագ, Զամանլու
 128, Մեղրուռ 129.
 Երաքար, Կիրովականի շրջ. 97.
 Եմնդան, Չորապյուղ 27, Եղեգնուռ 27, Գիրեղ 27.
 Պեմդա, Խնձորուռ 103.
 Պինձնա, Հանքաձոր 47.
 Տորֆ, Կիրովականի շրջ. 137.
 Տուփ, Ժղանով 105, Մակարաշն 108, Գարօղաս 103, Արշուռ
 108, Գիմաշիսար 105, Վահագնի 105.

Ա. Ստեփանավանի շրջան

Անդեղիտ և կ ազատ, Ստեփանավանի շրջ. 86.
 Եմք բային կուչե դան, Չիրովսուռ 77.
 Եւ զ ե զ րակ այում հումք, Կուրիշն 124.
 Եւ զ արց, կ զ արց իտ և կ կ արց ային ավագ, Կուրթան 129.
 Երաքար, Ստեփանավանի շրջ. 97.
 Եկնդեզ, Մեծ-Ճոր 37.
 Պինձնա, Չիրովսուռ 47.
 Երաքար, Գյուղագարակ 118.

III. ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱԾՆ ՇՐՋԱՆ

1. Իշեանի շրջան

Ագատ, Մարիգյուղ 136, Մերար 136.
 Այրվող թերթարար, Գիլիշան 136.
 Բենտոնիտ ային կ ավ, Իշեանի շրջ. 125.
 Երկար, Հաղարծին 20.
 Եռոնդեհարատ, Կուրիշն 100.
 Երաքար, Իշեանի շրջ. 97.
 Հանքային ներկ, Իշեանի շրջ. 134.
 Մանդան, Մարիգյուղ 26, Մերար 26, Աշաջուր 26.
 Ուկի, Գիլիշան 61.

2. Նոյեմբերյանի շրջան

Ագատ, Ղալաշա 136.
 Անդառուղիտ, Կողը 120.

Բ ա ր ի տ, Կողբ 75, Կոթիզյուղ 75.
Գ ր ա ն ի տ, Կողբ 92.
Ե ր կ ա թ, Կողբ 16, Միսխանա 17, Բովերիլաշ 17, Շլորկուտ 16.
Մ ա ն գ ա ն, Գալաչա 27, Կոթիզյուղ 27.
Ս ր ա ր ա ր, Կոհղով 113.
Տ ու ժ ֆ ե լ գ ի տ ա յ ի ն, Քյորփլու 199.

3. Ծամշադինի շրջան

Ա գ ա տ, Պառավարար 136, Մաղկալան 136.

IV. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՅԱՆ ՇԲՁԱՐ

1. Արովյանի շրջան

Ա յ ր վ ո ղ թ ե ր թ ա ր ա ր, Մուշագրյուր 136.
Ա ն գ ե զ ի տ ե ր ա ղ ա լ տ, Արովյանի շրջ. 86.
Ա պ ա տ ի տ, Կապուտան 84.
Գ ի ա տ ո մ ի տ, Նուռնուռ 131, Զորագրյուր 133.
Ե ր կ ա ր Ա, Կապուտան 21.
Կ վ ա ր ց, Կվարցի տ ե կ վ ա ր ց ա յ ի ն ա վ ա զ, Էլար 129.
Հ ր ա ր խ ա յ ի ն ա վ ա զ, Արովյանի շրջ. 93.
Պ ե մ զ ա, Ջրաբեր 103, Մշուր 103, Նուռնուռ 103, Քյանքյան 103,
Եղովան 103, Ակոնը 103, էլար 103, Ավան 103.
Տ ու ժ ֆ, Ավան 108, Առինչ 108, Ջրվիժ 108, Զորագրյուր 108.
Օ ր ս ի դ ի տ ն ե պ ե ս լ ի տ, Համիս 112.

2. Աշտարակի շրջան

Ա ն գ ե զ ի տ ե ր ա ղ ա լ տ, Աշտարակի շրջ. 86.
Գ ի ա տ ո մ ի տ, Փարսի 132.
Կ ա վ, Եղովարդ 124.
Հ ր ա ր խ ա յ ի ն ա վ ա զ, Փարսի 93, Կարրի 93.
Պ ե մ զ ա, Արագյուղ 103.
Տ ու ժ ֆ, Աշտարակ 108, Բյուրական 108, Եղվարդ 108, Ուշան 108,
Օհանավան 108.
Օ ր ս ի դ ի տ ն ե պ ե ս լ ի տ, Արգել 112, Արայի լիռ 114.

3. Արտանի շրջան

Ա ն գ ե զ ի տ ե ր ա ղ ա լ տ, Ալարանի շրջ. 86.
Գ ի ե մ զ ա, Ալարանի շրջ. 103.

3. Աւատշամի շրջան

Կ ա վ, Արտաշատի շրջ. 124, Յուլա 124.
Մ ա բ մ ա ր, Ազամդաղու 100, Խոր-Վիրապ 99, Արեշտ 100.

5. Երևանի բաղսովետին ևնքակա շրջան

Կ ա վ, Շենգավիթ 124.
Հ ր ա բ խ ա յ ի ն ա վ ա զ, Ավան 93, Սովետաշեն 93.
Հ ր ա բ խ ա յ ի ն խ ա ր ա մ, Առենց 93, Նորք 93.
Տ ո ւ ֆ, Նորք 108, Ավան 108, Սովետաշեն 108, Կարմիր սար 108,
Շուաղբյուր 108.
Ք ա բ ա զ, Ավան 81.

6. Էջմիածնի շրջան

Ա ն գ ե զ ի տ հ ր ա զ ա լ ա, Էջմիածնի շրջ. 86.
Գ ի տ ա մ ի տ, Փարարար 133.
Տ ո ւ ֆ, Փարարար 108, Արդավանդ 108.

7. Թալինի շրջան

Ա ն գ ե զ ի տ հ ր ա զ ա լ ա, Թալինի շրջ. 86.
Տ ո ւ ֆ, Կարմրաշեն 108, Թալին-Մաստարա 108.
Թ ր ս ի դ ի տ հ պ ե ս լ ի տ, Արտենի լեռ 112.

8. Հետպանի շրջան

Ա լ յ ո ւ մ ի ն ի հ ո ւ մ ր, Փամբակի լեռնաշղթա 55.
Ա ն գ ե զ ի տ հ ր ա զ ա լ ա, Հրազդանի շրջ. 86.
Բ ա ր ի տ, Բջնի 75, Արդական 75.
Գ ր ա ն ա տ, Մեղրաձոր 116, Հանրավան 116, Ուշշիկ 116.
Գ ր ա ն ի տ, Բջնի 92, Արզական 92.
Ե ր կ ա թ, Հրազդան (Մուգալյան) 18, Աղավնաձոր 16, Մեղրաձոր
16, Հանրավան 16.
Կ ա վ, Հրազդանի շրջ. 124.
Կ ր ա բ ա ր, Հրազդանի շրջ. 97.
Հ ա ն ը տ ի ն ն ե ր կ, Կաբալաձոր 134.
Հ ր ա բ խ ա յ ի ն խ ա ր ա մ, Ֆանտան 93.
Մ ա ր մ ա ր, Հանրավան 100, Աղվերան-Արզական 98.
Մ ո ւ ի ր զ ե ն, Հանրավան 34.
Ո ս կ ի, Հրազդանի շրջ. 61.

- Պ եմ զ ա, թշնի 103, Արդական 103, Յանտան 103, Քաղսի 103,
Մարբալան 103.
Ս բ ա ք ա ր, Ազգբակ 117, Աղվերան 118.
Օ բ ս ի զ ի ա ն և պ ե ռ լ ի տ, Գութահսար (Յանտան) 112, Գլու-
մուշ 112, Զրաստա 112.

9. Վեպու շրջան

- Ա ն դ ե ղ ի ա հ ը ա զ ա լ տ, Վեպու շրջ. 86.
Մ ա բ մ ա ր, Արարատ 99.
Ս ն դ ի կ, Վեպի զետ 41.
Ս բ ա ք ա ր, Զերժանիս 118.
Ք ա բ ա ծ ո ւ ի ս, Զերժանիս 136.
Յ ո ս ֆ ո ր ի տ, Բերձ 83.

V. Անգլիական Տնտեսական Շրջան

- Ա ն գ ե ղ ի ա հ ը ա զ ա լ տ, Բասարգելարի շրջ. 86.
Կ ի ա բ ա ր, Բասարգելարի շրջ. 97.
Հ ր ա կ ա յ ո ւ ն Հ ո ւ մ ք, Գարա 124, Բարաչան 128.
Ո ս կ ի, Զող 62.
Ս ն դ ի կ, Բուրաթափա 41.
Տ ո ր փ, Բասարգելարի շրջ. 137.
Օ բ ս ի զ ի ա ն և պ ե ռ լ ի տ, Զաղալու 114.

2. Կամոյի շրջան

- Ա ն դ ե ղ ի ա հ ը ա զ ա լ տ, Կամոյի շրջ. 86.
Պ ե մ զ ա, Կամոյի շրջ. 103.
Օ բ ս ի զ ի ա ն և պ ե ռ լ ի տ, Մակիտակսար 113, Գեղասար 113.

3. Կրասնոսելսկի շրջան

- Հ ր ա կ ա յ ո ւ ն Հ ո ւ մ ք, Շորժա 124, Զիլ 124.
Ք ը ո մ ք, Շորժա 29, Զիլ 30.

4. Մարտունու շրջան

- Ա ն դ ե ղ ի ա հ ը ա զ ա լ տ, Մարտունու շրջ. 86.
Կ վ ա բ ց, կ վ ա բ ց ի տ և կ վ ա բ ց ա յ ի ն ա վ ա զ, Արդիլի 128.
Հ ր ա բ խ ա յ ի ն խ ա բ ա մ, Արմաղան 93.

5. Ականի շրջան

Ա ն դ ե զ ի տ հ ը ա զ տ լ տ, Ականի շրջ. 85.
Հ ը ա ր խ ա յ ի ն ա վ ա զ, Յաշարաբերդ 93.
Օ ր ս ի զ ի տ ն հ պ ե ս լ ի տ, Գոմածոր 114.

VI. ԳԱՐԱԼՈՒՅՑԱՐՁԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇՐՋԱՆ

1. Ազիզբեկովի շրջան

Ա ն դ ե զ ի տ հ ը ա զ ա լ տ, Ազիզբեկովի շրջ. 86.
Գ ը ա ն ա տ ա, Կայտու 115.
Գ ի տ ա մ ա մ ի տ, Քնզիազ 133.
Մ ա ր ի ր, Աղատեկ 38.
Կ ա պ ա ր ե ց ի ն կ, Գյումուշխանա 53, Գաղմա 53.
Կ ը ա ր ա ր, Ազիզբեկովի շրջ. 97.
Հ ը ա ր խ ա յ ի ն խ ա ր ա մ, Ազիզբեկովի շրջ. 93.

2. Եղեղնաձորի շրջան

Ա ն դ ե զ ի տ հ ը ա զ ա լ տ, Եղեղնաձորի շրջ. 86.
Կ վ ա ր ց, կ վ ա ր ց ի տ հ կ վ ա ր ց ա յ ի ն ա վ ա զ, Երթիլ 128.
Մ ո ւ ի ր զ ե ն, Վարդենիս 35.
Ս ր ա ք ա ր, Ամաղու 118, Երթիլ 118.
Յ ս ս ֆ ո ր ի տ, Արփա (գետ) 83, Արենի 83, Գնիշիկ 83.

VII. ԶԱՆԳԵԶՈՒԹՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇՐՋԱՆ

1. Գորիսի շրջան

Ա գ ա տ, Գաշարաչոր 136.
Ա ն դ ե զ ի տ հ ը ա զ ա լ տ, Գորիսի շրջ. 86.
Ե ր կ ա թ, Մարանց 22.
Կ ը ա ր ա ր, Գորիսի շրջ. 96.
Պ ե մ զ ա տ, Գորիսի շրջ. 103.

2. Ղափանի շրջան

Ա գ ա տ, Արծվանիկ 136.
Ա ն դ ա լ ո ւ զ ի տ, Ղափանի շրջ. 57.
Գ ը ա ն ա տ, Գեղի 115, Աշերազ 115.

Գ ր ա ն ի տ, Մ ա լ 92, Գ ե ղ ի 92.
Ե ծ մ ր ա յ ի ն կ ո ւ շ ե զ ա ն, Ղ ա փ ա ն 79.
Կ ա պ ա ր ե ց ի ն կ, Շ ա ն ո ւ մ յ ա ն ի ա ն վ, Հ ա ն ը 52.
Կ ր ա ք ա ր, Ղ ա փ ա ն ի շ ր չ, 96.
Մ ո ւ ի ր դ ե ն, Ք ա չ ա ր ա ն 32.
Պ ղ ի ն ձ, Ղ ա փ ա ն (լ ե ն ի ն լ ա ն հ ա ն բ ե ր) 45. Մ է ծ Մ ա ղ ա ր ա 46, Խ ր դ ա
46, Խ ա ղ ն ա 46, Ք ա չ ա ր ա ն 32.

3. Ա լ ե ր ո ւ շ շ ա ն

Ա լ յ ո ւ մ ի ն ի շ ո ւ մ ր, Շ ա ն ի ձ ո ր 57.
Գ ր ա ն ա տ, Ե լ ո ւ վ ա ղ ի 115.
Գ ր ա ն ի տ, Մ ա ղ ր ո ւ շ ր չ, 92.
Ե ր կ ա թ, Կ ա մ ա ր ա ր 23.
Կ ր ա ք ա ր, Մ ե ղ ր ո ւ շ ր չ, 96.
Մ ո ւ ի ր դ ե ն, Ա զ ա ր ա կ 33, Զ ի ն դ ա ր ա 35.
Պ ղ ի ն ձ, Ա զ ա ր ա կ 33, Զ ի ն դ ա ր ա 47.

4. Ա խ ի ա ն ի շ շ ա ն

Ա լ յ ո ւ մ ի ն ի շ ո ւ մ ր, Մ ի ս ի ա ն ի շ ր չ, 57.
Ա ն գ ե զ ի տ ե ր ա զ ա լ տ, Մ ի ս ի ա ն ի շ ր չ, 86.
Գ ր ա ն ա տ, Լ ե ն ն ա շ հ ն 115.
Գ ի ա տ ո ւ մ ի տ, Շ ա մ ը 132, Գ ա ր ր ա ս 132, Ե ս ր ա վ ա ն 132, Ո ւ զ 132.
Մ ա ր ի ր, Մ ա լ վ ա ր ի 39.
Մ կ ն դ ե զ, Մ ա լ վ ա ր ի 36.
Մ ո ւ ի ր դ ե ն, Գ ա ս տ ա կ ի ր ա 34.
Պ ղ ի ն ձ, Գ ա ս տ ա կ ի ր ա 34.
Մ ն գ ի կ, Ա ր ի զ լ ի 41.
Զ ր ս ի զ ի ա ն ե պ ե ս լ ի տ, Ո ր ո ւ ա ն 113.

ԲԱՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն	5
I. Մետաղային օգտակար հանածոներ	11
1. Սև մետաղներ	11
2. Հազվագյուտ մետաղներ	30
3. Գումավոր մետաղներ	42
4. Աղնիվ մետաղներ	57
5. Ցրված մետաղներ	62
II. Ոչ-մետաղային օգտակար հանածոներ	72
1. Հումք բիմիական արդյունաբերության և գյուղատնտեսության համար	73
2. Բնական շինանյութեր և լցանյութեր արհեստական շինանյութերի համար	84
3. Բնական հղկանյութեր	114
4. Հումք կավաղործության և հրակայուն նյութերի համար	118
5. Լցանյութեր և ներկեր	130
6. Հումք ակնազործության և տեխնիկալի նուրբ սարքերի համար	135
ՀԱՅԱԿԱՆ ՍՍՌ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ՑԱՆԿ ըստ անտեսական և փարչա-տերիտորիալ շրջանացման	139



ԷԴՈՒԱՐԴ ԱԲԵԼՈՎԻՉ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ
Էդուարդ Աբելովիչ Խաչատուրյան

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՒԵՐԸ

Պատ. խմբագիր Հ. Գ. ՄԱՂԱՔՅԱՆ
Հրատ. խմբագիր Ա. Ա. ՀՈՎՈՒԿԻՄՅԱՆ
Նկարչական ձևավորումը Լ. Ա. ՍԱԴՈՅՅԱՆԻ
Տեխ. խմբագիր Մ. Ա. ԿԱՓԼԱՆՅԱՆ
Սրբազրիչ Ի. Ա. ԲՐՈՒՏՅԱՆ

ՎՃ 07089, պատովեր 39, հրատ. 2228, ԽՀԽ 813, տիրաժ 1000

Հանձնված է արտադրության 26/1 1963 թ., ստորագրված է տպագրության 28/IV 1963 թ., տպագր. 9,25 մամուլ, հրատ. 6,2 մամուլ,
թուղթ 84×108¹/32, գինը 43 կուլ.

Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչության առարան, Երևան,
Բարեկամության 24:

Գ Ի Կ Ը Ը 43 Կ.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220025464

A II
25464

ԵՐԵՎԱՆ
1963